ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թ.

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

1.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կիրառումը և մեկնաբանումը

1.2 Ոլորտային կանոնագրքերի մշակման աջակցությունը

1.3 Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի ընդունումը

2. Անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

2.1 Դիմումներ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման իրավիճակների վերաբերյալ

2.2 Մեդիա հրապարակումներ

2.3 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման Ռեեստրի ներդնումը

4. Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և վերապատրաստումներ

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1Հայտարարատու պաշտոնատար անձանց գրանցում, հայտարարագրերի ներկայացում

2.2 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

2.3 Իրազեկման միջոցառումներ, խորհրդատվություն

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ներկայացման հանգամանքի ստուգում

3.2 ԶԼՄ հրապարակումների և անձանց գրավոր դիմումների հիման վրա ուսումնասիրություն

3.3 Հայտարարագրերի վերլուծություն

IV.ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

V. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Բարեվարքության եզրակացություններրի և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

5.2 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների առանձնահատկությունները

5.3 Բարեվարքության ուսումնասիրությունների գործընթացի կատարելագործմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները

VI. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

6.1 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

6.2 Նվերներ ընդունելու սահմանափակումների խախտումների վերաբերյալ վարույթներ

6.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման հետ կապված խախտումների վերաբերյալ վարույթներ

6.4 Անհամատեղելիության պահանջների խախտումների և շահերի բախման դեպքի վերաբերյալ վարույթներ

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1 Կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեթոդաբանությունների մշակումը և պիլոտային գործարկումը

7.2. Կոռուպցիոն ռիսկերի կառավարման և դրա կարևորության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներից բխող իրավիճակի նկարագրություն

8.2 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

8.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

IX. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

X. ԱՄՓՈՓՈՒՄ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ի. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հանրային ծառայության բարեվարքության համակարգը, որն, ըստ էության, ներդրվեց «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքով, համաձայն այդ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի՝ ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

Բարեվարքության համակարգի կայացումը և շարունակական ամրապնդումը, ի թիվս այլնի, Հանձնաժողովի գործունեության առանցքային ուղղություններից է՝ դրա ձևավորումից ի վեր: 2023 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է հանրային ծառայության բարեվարքության համակարգի կայացմանն ուղղված գործառույթների իրականացումը, որն իր արտահայտումն է գտել մի քանի ոլորտներում: Հանձնաժողովը, մասնավորապես, զուգորդել է ջանքերը վարքագծի կանոնների միասնական համակարգի ստեղծման, անհամատեղելիության պահանջների պահպանման, շահերի բախման օրենսդրական կանոնակարգումների կատարելագործման և արդեն նաև նվերների ընդունման սահմանափակումների պահպանմանը հետևելու գործիքակազմերի ներդրման ուղղություններով:

Ընդ որում, նշված գործընթացներն ակտիվ կերպով ուղեկցվել են իրազեկման արշավ-քննարկումներով՝ բարձրացնելով բարեվարքության տարրերի վերաբերյալ թե՛ հանրային իշխանության մարմինների և հանրային ծառայողների, թե՛ հանրության տարբեր հատվածների ներկայացուցիչների ընդհանուր իրազեկվածությունը: Բարեվարքության համակարգի վերաբերյալ հանրային ավելի լայն հատվածի իրազեկվածությունը խթանելու նպատակով աշխատանք է տարվել նաև լրատվամիջոցների և մեդիա ոլորտի ներկայացուցիչների հետ:

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգը

1.1 Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կիրառումը և մեկնաբանումը

2022 թվականի հունիսի 17-ին Հանձնաժողովի կողմից Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների (այսուհետ՝ Տիպային կանոններ) սահմանմամբ, ըստ էության, դրվեցին վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքերը: Տիպային կանոնների սահմանմամբ՝ Հանձնաժողովն իր առջև խնդիր դրեց ապահովել հանրային ծառայողների բարեվարք և կանխատեսելի վարքագիծը, հանրային ծառայողների մոտ ձևավորել բարեվարքության վերաբերյալ միասնական ընկալում, լայն իմաստով՝ նաև բարձրացնել և ամրապնդել կոռուպցիոն դրսևորումների նկատմամբ հանրային ծառայողների զգոնությունն ու անհանդուրժողականությունը: Այս ամենը, իհարկե, միտված պիտի լինի հանրային ծառայության նկատմամբ հանրության ամուր վստահության ձեռքբերմանը:

Հանձնաժողովը պարբերաբար ընդգծել է, որ բարեվարքության ընդհանուր միջավայրի ձևավորման համար չափազանց կարևոր է, որ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները մեկնաբանվեն և կիրառվեն միատեսակ մոտեցմամբ՝ ապահովելով կանոնների նորմերի որոշակիությունն ու միասնականությունը, բացառելով անորոշությունը, դրանց հայեցողական մեկնաբանումը կամ երկիմաստությունը: Այս նպատակին հասնելու և Տիպային կանոնների գործնական կիրառումը պարզեցնելու նպատակով՝ Հանձնաժողովը դեռևս 2022 թվականին նախաձեռնել էր Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ուղեցույցի (այսուհետ՝ Ուղեցույց) մշակման աշխատանքները: 2023 թվականի երկրորդ կիսամյակում արդեն Ուղեցույցը, Հանձնաժողովի գործունեության ընթացքում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, միջազգային համանման փորձի ուսումնասիրության և թիրախային քննարկումների արդյունքում վերջնականացվեց և 2023 թվականի նոյեմբերի 16-ին հրապարակվեց Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Ուղեցույցը ծառայում է որպես հիմնական ուղենիշային փաստաթուղթ՝ օժանդակելու հանրային իշխանության համապատասխան մարմիններին հանրային ծառայողների վարքագիծը քննելիս և մեկնաբանելիս: Ուղեցույցում պահպանված է Տիպային կանոնների կառուցվածքային տրամաբանությունը՝ մեկնաբանումն առավել պարզ դարձնելու

նպատակով: Միաժամանակ, յուրաքանչյուր կանոնի մեկնաբանությունն ստացել է հետևյալ կառուցվածքը. շարադրվել է կանոնի բովանդակությունը, որին հետևել է կանոնի մեկնաբանումը (պարզաբանումը), իսկ որոշ կանոններում պարզաբանումներին հետևել են ուղեցույցային տեղեկություններ՝ համապատասխան օրենքների, միջազգային փաստաթղթի, ազդարարի և այլ տեղեկատվական բնույթի աղբյուրների հղումներ: Ընդ որում, գրեթե բոլոր կանոնները ներկայացվել են նշված՝ կանոն-պարզաբանում-օրինակ ձևաչափով: Այսպես, սկզբում ներկայացվել է նորմը, այնուհետև նորմի մեկնաբանությունը՝ պարզաբանումը, իսկ դրան էլ որոշ դեպքերում հաջորդել են լրացուցիչ ուղեցույցային նյութեր, որոնք իրավիճակի համակողմանի քննության համար կօժանդակեն մեկնաբանող մարմիններին: Ուղեցույցը Հանձնաժողովի կողմից դրվել է գործնական կիրառության նաև հաշվետու ժամանակաշրջանում իրականացված վերապատրաստումների շրջանակներում: Առաջին նման վերապատրաստում-քննարկումն իրականացվել է Հանձնաժողովի ամբողջ աշխատակազմի համար՝ 2023 թվականի հոկտեմբերի 5-ին և 6-ին: Այն նպատակ է հետապնդել Հանձնաժողովի աշխատակիցներին ծանոթացնել վարքագծի տիպային կանոններին և դրանց մեկնաբանություններին՝ հետագա կիրարկման ժամանակ այլ հանրային ծառայողներին ուղղորդելու և աջակցելու համապատասխան կարողություններ ձևավորելու համար: Նույն ամսում Հանձնաժողովն իրականացրել է նաև «Համայնքային ծառայողների բարեվարքությունը» թեմայով վերապատրաստողների վերապատրաստման (ToT) հնգօրյա դասընթաց՝ Երևանի համայնքապետարանի և Երևանի վարչական շրջանների թվով 18 համայնքային ծառայողների համար, որի բովանդակային ապահովման համար Ուղեցույցն առանցքային փաստաթուղթ է հանդիսացել: Վերապատրաստումների վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունը ներկայացված է սույն հաշվետվության համապատասխան բաժնում, այդուհանդերձ, ամփոփելով Ուղեցույցի կիրառման առայժմ առկա փորձը՝ կարելի է փաստել, որ բացի նորմերի մեկնաբանման գործընթացը պարզեցնելուց, Ուղեցույցը կարող է հանդիսանալ նաև արդյունավետ գործիք՝ հանրային ծառայողների, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների կողմից համապատասխան մարմիններում իրականացվող վերապատրաստումների կազմակերպման համար:

1.2 Ոլորտային կանոնագրքերի մշակման աջակցությունը

Հանձնաժողովի կողմից հաստատված Տիպային կանոնները, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հիմք են հանդիսանում հանրային ծառայության առանձին տեսակների համար՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման: Մասնավորապես, հանրային ծառայության առանձին տեսակները ղեկավարող մարմինները, ոլորտային առանձնահատկությունների առկայության դեպքում, կարող են սահմանել վարքագծի ոլորտային կանոնագրքեր:

Ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացը պարզեցնելու և կանոնագրքերի ընդունման գործընթացի միատեսակությունն ապահովելու նպատակով՝ Հանձնաժողովը 2022 թվականի երկրորդ կիսամյակում ԱՄՆ ՄԶԳ ծրագրի իր գործընկերների հետ մշակել է **Հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցի** և հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ներքին իրազեկման պլանի նախագծերը: 2023 թվականի մարտի 24-ին սույն ուղեցույցը հրապարակվել է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման ուղեցույցի նպատակն է մեթոդական աջակցություն տրամադրել պետական կառավարման մարմիններին՝ ոլորտային կանոնագրքերի մշակման և կիրարկման գործընթացում: Այն առավելապես գործնական ձեռնարկ է՝ բաղկացած երկու մասից, և ներկայացնում է ոլորտային կանոնագրքերի մշակման գործընթացում և կիրարկման ընթացքում անհրաժեշտ ձեռնարկվելիք ներինստիտուցիոնալ քայլերը, կանոնագրքերի կարգավորման ենթակա հարցերի շրջանակը, կառուցվածքը և այլ հարցեր: Այս ուղեցույցում հատուկ ուշադրություն է դարձվում կանոնագրքերի մշակման ընթացքում ներառական մոտեցման ապահովմանը, ինչպես նաև կանոնագրքերի ընդունումից հետո՝ բարեվարքության համակարգի վերաբերյալ աշխատակիցների կարողությունների շարունակական զարգացմանը և վերապատրաստումներին:

Որպես ոլորտային կանոնագրքի մշակման գործընթացի մաս՝ ընդունող մարմինները պարտավորվում են կանոնագրքերի նախագծերը և ամփոփաթերթերը ներկայացնել Հանձնաժողով՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծով սահմանված դրույթների՝ Տիպային կանոններին համապատասխանելիության վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով:

Սույն պահանջի ապահովման նպատակով 2023 թվականին Հանձնաժողովի դիտարկմանն են ներկայացվել հետևյալ ոլորտային կանոնագրքերի նախագծերը՝

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոններ,

2. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի համայնքապետարանի ծառայողների վարքագծի կանոնագիրք,
3. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի պայմանագրային զինծառայողների վարքագծի կանոններ,
4. Համայնքային ծառայողների վարքագծի կանոնագիրք:

Հարկ է նշել, որ ոլորտային կանոնագրքերը դիտարկելիս Հանձնաժողովը հետևում է, որ մշակող մարմինների կողմից պահպանված լինեն և՛ օրենսդրորեն վերջիններիս ներկայացվող պահանջները, և՛ ուղեցույցով սահմանված ընթացակարգերը, հատկապես՝ մշակման գործընթացի ներառականությունը: Այսպես, Ոլորտային կանոնագրքերի մշակման ուղեցույցի 12-րդ կետը սահմանում է, որ ոլորտային կանոնագրքերը (կանոնագրքերի կառուցվածքը) պետք է համապատասխանեն Տիպային կանոններով սահմանված կառուցվածքին: Ուղեցույցի 14-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերում պարտադիր է Տիպային կանոններով սահմանված՝ վարքագծի պարտադիր կանոնների ամրագրումը, որոնք սահմանված են 14-86-րդ կետերում: Այսպիսով՝ վարքագծի ոլորտային կանոնագրքով (կանոնագրքերով) սահմանված դրույթների՝ Տիպային կանոններին համապատասխանելիության հարցը որոշելիս Հանձնաժողովն առաջնորդվում է նշված պահանջների պահպանման ստուգմամբ:

1.3 Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի ընդունումը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքն (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Նշված լիազորության շրջանակներում Հանձնաժողովը 2023 թվականին շարունակել է Կանոնագրքի մշակման աշխատանքները, որը հանրային քննարկումների արդյունքում լրամշակվել է և հաստատվել է արդեն 2024 թվականի սկզբին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Կանոնագրքի մշակման և հանրային քննարկումների ողջ գործընթացը, ինչպես նաև դրա հաստատմանը նախորդած

աշխատանքներն իրականացվել են 2023 թվականին՝ նպատակահարմար է Կանոնագրքին անդրադարձ կատարել սույն հաղորդման շրջանակներում:

Ի տարբերություն հանրային ծառայողների համար նախատեսված Տիպային կանոնների՝ սույն կանոնագիրքն առաջարկվող նորմերի տեսանկյունից ավելի թիրախային է և ներառում է կոնկրետ պաշտոնների առանձնահատկություններից բխող մասնավորեցված կանոններ: Այն առանցքային կարևորություն ունի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կամայական վարքագծի բացառման, բարձր մակարդակի կոռուպցիայի (high level corruption) զսպման և հանրային վստահության ամրապնդման տեսանկյունից:

Թեև Կանոնագիրքը նախատեսված է կարգավորելու պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման շրջանակներում դրսևորվող վարքը՝ դրանով սահմանվում են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ որպես մասնավոր անձի վարքագծի որոշակի նորմեր, որոնք կարող են ազդել հանրային իշխանության հեղինակության վրա կամ նվազեցնել հանրության վստահությունը հանրային ծառայության նկատմամբ՝ հաշվի առնելով, որ հանրային բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց պարագայում մասնավոր կյանքում դրսևորած վարքագիծը մեծ հավանականությամբ վերագրվում է կամ կարող է վերագրվել հանրային իշխանությանը:

Կանոնագրքով սահմանվում են համապատասխան պաշտոնատար անձանց վարքագծի թվով 55 պարտադիր կանոններ, որոնց միջոցով մեկնաբանվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները: Որպես օրինակ՝ հանրությանը ծառայելու գիտակցման սկզբունքի ներքո Կանոնագիրքն անդրադառնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելիս Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահպանման, վերադաս լիազորությունը չչարաշահելու, տրվող հանձնարարականները ՀՀ օրենսդրության շրջանակում պահելու, ինչպես նաև ցանկացած հակաօրինական վարքագծի նկատմամբ անհանդուրժողականություն դրսևորելու պահանջներին: Հանրային շահին հավատարմության սկզբունքի ներքո Կանոնագիրքը սահմանում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը շահերի կառավարման, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումների համատեքստում: Նույն մոտեցմամբ շարադրված են նաև բարեկրթության և հարգալիրության, բարեխղճության, օբյեկտիվության սկզբունքներից բխող կանոնները:

Հարկ է նշել, որ Կանոնագիրքը ներառում է վարքագծի խրախուսելի կանոններ ևս, որոնք, թեև պարտադիր չեն պահպանման համար, սակայն ուղենիշային են և միտված են հանրային ծառայության ոլորտում գերազանցության ապահովմանը: Վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն: Կարգապահական

պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում: Այդուհանդերձ, բոլոր դեպքերում, վարքագծի կանոնների խախտման վերաբերյալ եզրակացությունները ենթակա են հրապարակման Հանձնաժողովի կայքէջում:

Կանոնագիրքը հաստատվել է Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշմամբ և հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական arlis համակարգում 2024 թվականի փետրվարի 13-ին: Կանոնագրքի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված է 2024 թվականի ապրիլի 1-ը, որպեսզի հնարավոր լինի տվյալ ժամանակահատվածում իրականացնել փաստաթղթի վերաբերյալ պատշաճ իրազեկում:

Հանձնաժողովը հաստատել է նաև Կանոնագրքի իրազեկման պլանը, որի շրջանակներում նախատեսվում են իրազեկման միջոցառումներ՝ նախքան Կանոնագրքի ուժի մեջ մտնելը:

2. Անհամատեղելիության պահանջների, շահերի բախման, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակում 2023 թվականի ընթացքում շարունակել է պաշտոնատար անձանց կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների վերաբերյալ դեպքերի ուսումնասիրությունները:
Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 46 դիմումի և մեդիա հրապարակման ուսումնասիրություն:

Իրականացված ուսումնասիրություններից 13-ի դեպքում հիմք են հանդիսացել մեդիա հրապարակումները, թվով 33 ուսումնասիրության դեպքում՝ քաղաքացիներից ստացված դիմումները և այլ գերատեսչություններից ստացված գրությունները, ևս 9 ուսումնասիրություն իրականացվել է Հանձնաժողովի այլ ստորաբաժանումներից ստացված զեկուցագրերի հիման վրա:

2.1 Դիմումներ անհամատեղելիության պահանջների և շահերի բախման իրավիճակների վերաբերյալ

Հանձնաժողով հասցեագրված դիմում-գրությունների գերակշիռ մասը հաշվետու ժամանակահատվածում վերաբերել է անհամատեղելիության պահանջներին:

Դիմում 1.

Արդյո՞ք հաղորդումների լեզվական վերահսկողության մասնագետի, հաղորդավարների հմտությունների կատարելագործման, համերգի ռեժիսորի ծառայությունները համարվում են կրթական, գիտական, ստեղծագործական աշխատանք և արդյո՞ք համատեղելի են հանրային ծառայության հետ:

Համերգի ռեժիսորի ծառայություններ.

Հանձնաժողովը համերգի ռեժիսորի ծառայությունների՝ հանրային ծառայության հետ համատեղելիությունը դիտարկել է «Կինեմատոգրաֆիայի մասին», «Թատրոնի և թատերական գործունեության մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների կարգավորումների համատեքստում:

Վերաբերելի իրավակարգավորումների համադրության արդյունքում Հանձնաժողովը համերգի ռեժիսորի ծառայությունը դիտարկել է որպես ստեղծագործական աշխատանք՝ համարելով, որ այն գեղարվեստական ստեղծագործությունների մեկնաբանման դրսևորում է:

Այս համատեքստում Հանձնաժողովը ռեժիսորի աշխատանքը դիտարկել է համատեղելի հանրային ծառայության հետ:

Հաղորդումների լեզվական վերահսկողության մասնագետ.

Սույն աշխատանքի՝ հանրային ծառայության պաշտոնի հետ համատեղելիության հարցը քննարկվել է «Լեզվի մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների համատեքստում:

Վերաբերելի իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Հանձնաժողովը գնահատել է, որ հաղորդումների լեզվական վերահսկողության մասնագետի գործառույթն, ըստ էության, կրում է վերահսկողական բնույթ, հետևաբար, այն չի կարող «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով մեկնաբանվել որպես կրթական, գիտական կամ ստեղծագործական աշխատանք:

Միաժամանակ, դիմումատուին առաջարկվել է Հանձնաժողովին տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն հաղորդումների լեզվական վերահսկողության մասնագետի և հաղորդավարների հմտությունների կատարելագործման ծառայության վերաբերյալ, օրենսդրական կարգավորումների

շրջանակներում անհամատեղելիության պահանջների պահպանման գնահատման նպատակով:

Դիմում 2.

Արդյո՞ք Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների կողմից վճարովի հիմունքներով այլ աշխատանք կատարելը համատեղելի է իրենց զբաղեցրած պաշտոնների հետ:

Ինչպես «Հանրային ծառայության մասին» օրենքով, այնպես էլ ոլորտային՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված են կարգավորումներ՝ անհամատեղելիության պահանջների վերաբերյալ, որոնք կիրառելի են ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ պետության կողմից հիմնադրված կազմակերպությունների աշխատակիցների նկատմամբ՝ պաշտոնավարման ընթացքում:

Վերաբերելի իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Հանձնաժողովը գնահատել է, որ պետաիշխանական գործառույթ իրականացնող բոլոր մարմինները պետք է ապահովեն անհամատեղելիության պահանջների պահպանման միասնականությունը: Հետևաբար, Հանրային հեռարձակողի խորհրդի անդամների կողմից իրենց պաշտոններին զուգահեռ վճարովի հիմունքներով այլ աշխատանք կատարելը Հանձնաժողովը գնահատել է անհամատեղելի:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Հանրային հեռարձակողի խորհրդի անդամները չեն հանդիսանում հանրային ծառայողներ՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարգավորող մարմնին առաջարկ է ներկայացվել՝ ուսումնասիրելու դիմումը և ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ սույն օրենքի պահանջների հնարավոր խախտումները հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով դրանք վերացնելու ուղղությամբ:

Նույն գործի շրջանակներում մեկ այլ դիմումով տեղեկատվություն է հայցել Հանձնաժողովի կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ:

Դիմում 3.

Արդյո՞ք անշարժ գույքի գնահատողի սեփական որակավորման վկայականը որևէ գնահատող կազմակերպության/անձի վարձակալության տրամադրելը և դրա դիմաց վարձատրություն ստանալը թույլատրվում է քաղաքացիական ծառայողին:

Ուսումնասիրելով հարցումը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ հարցման մեջ ներառված հարցադրումն ամբողջովին չի գտնվում Հանձնաժողովի մեկնաբանման տիրույթում, այնուամենայնիվ, որպես կոռուպցիայի կանխարգելման միակ մասնագիտացված մարմին՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարել հստակեցնել, որ հարցումը առնչվել է ոչ միայն անհամատեղելիության

պահանջների պահպանմանը, այլ նաև նկարագրած գործողության օրինականությանը:

Իրավական կարգավորումների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ վկայականը առանձին գործիք չէ, որը հնարավոր կլինի օգտագործել անշարժ գույքի գնահատման նպատակով, այլ անշարժ գույքի գնահատման իրավունք վերապահող փաստաթուղթ է, որն անձին հնարավորություն է ընձեռում անձամբ՝ սեփական գիտելիքների հաշվին, իրականացնել գույքի գնահատում:

Հանձնաժողովի դիտարկմամբ՝ դիմումով բարձրացված հարցադրումը՝ անշարժ գույքի որակավորման վկայականը այլ անձի վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ, հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Դիմում 4.

Արդյո՞ք որպես պատգամավոր հայ գրականության գործերի վերաբերյալ հաղորդումների շարքի նկարահանմանը վճարովի հիմունքներով մասնակցելը կհանդիսանա Սահմանադրության 95-րդ հոդվածի կամ անհամատեղելիության պահանջի խախտում:

Համադրելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի և «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները՝ Հանձնաժողովը գնահատել է, որ պատգամավորի կողմից հեղինակած հայ գրականության գործերի վերաբերյալ հաղորդումների շարքում նկարահանվելը և դրա ընթացքում մեկնաբանություններ անելը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չի հանգեցնի անհամատեղելիության պահանջի խախտման, սակայն, կարևոր է հստակեցնել, որ աշխատանքային պայմանագիրը հնարավորինս մանրամասն և հստակ պետք է արտացոլի դիմումով մատնանշած գործունեությունը:

Դիմում 5.

Արդյո՞ք քաղաքացիական ծառայողը կարող է զբաղեցնել Ազգային ժողովի պատգամավորի հասարակական հիմունքներով օգնականի պաշտոնը:

Հարկ է նշել, որ Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնը պետական հայեցողական պաշտոն է, ուստի «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար այն չի դիտարկվում իբրև իր կարգավիճակով պայմանավորված այլ պաշտոն:

Ի տարբերություն Ազգային ժողովի պատգամավորի վճարովի հիմունքներով օգնականի պաշտոնի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքը

պետական հայեցողական պաշտոնների շրջանակում չի սահմանում հասարակական (անվճար) հիմունքներով օգնականի պաշտոնը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Օրենքը, որպես պետական հայեցողական պաշտոն չի դիտարկում Ազգային ժողովի պատգամավորի հասարակական (անվճար) հիմունքներով օգնականի պաշտոնը՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ քաղաքացիական ծառայության պաշտոնը համատեղելի է Ազգային ժողովի պատգամավորի հասարակական (անվճար) հիմունքներով օգնականի պաշտոնի հետ:

Դիմում 6.

Արդյո՞ք ավագանու անդամը կարող է համատեղելիությամբ զբաղեցնել պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը:

Անդրադառնալով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված դրույթներին՝ Հանձնաժողովն արձանագրել, որ հարցադրումը վերաբերում է գործադիր մարմնի պաշտոն (տնօրեն) զբաղեցնող անձի և նրան նշանակող իրավասու մարմնի միջև իրավահարաբերություններին: Հետևաբար, դիմումով ներկայացված՝ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համատեղելիության հարցը ենթակա է քննարկման «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի պահանջների շրջանակում՝ իրավասու մարմնի կողմից:

Չնայած՝ պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնը ներառված չէ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պաշտոնների ցանկում և դուրս է Հանձնաժողովի մեկնաբանման տիրույթից, այնուամենայնիվ հարկ է ընդգծել, որ տնօրենի պաշտոնը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի իմաստով, անհամատեղելի է ցանկացած այլ՝ այս դեպքում ավագանու անդամի պաշտոնի հետ:

Քանի որ գրությամբ բարձրացված հարցը վերաբերում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձի՝ համայնքի ավագանու անդամին ներկայացվող անհամատեղելիության պահանջներին, անհրաժեշտ է այն մեկնաբանել «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հանրային ծառայության մասին» օրենքների շրջանակում՝ պաշտոնին վերաբերելի ոլորտային օրենսդրական կարգավորումների լույսի ներքո:

Հաշվի առնելով, որ դիմումով ներկայացված պետական ոչ առևտրային կազմակերպությունը մարզային ենթակայության կազմակերպություն է՝ անհրաժեշտ է արձանագրել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով ավագանու պաշտոնին վերաբերելի պահանջների պահպանման խախտում առկա չէ:

Ինչ վերաբերում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջներին՝ ապա դրանց կիրառելիության մասով սահմանված է բացառություն, և այս պարագայում ավագանու պաշտոնը տնօրենի պաշտոնի հետ համատեղ զբաղեցնելը չի առաջացնում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջների խախտում:

Դիմում 7.

1. Արդյո՞ք հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կարող է, որպես ստեղծագործական աշխատանք, զբաղվել հավատարմագրված լրագրությամբ կամ թղթակցել լրատվամիջոցների:

2. Մասնագիտական լրագրությունը որպես ստեղծագործական աշխատանք չդիտարկելու դեպքում արդյո՞ք հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կարող է զբաղվել լրագրությամբ հասարակական հիմունքներով և հնարավո՞ր է այդ գործունեության համար, համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, սահմանել ազատ, չնորմավորված աշխատաժամանակ, որը կարտացոլվի աշխատանքային պայմանագրի մեջ և հնարավորություն կտա մասնագիտական աշխատանքը կատարել վճարովի կամ հասարակական հիմունքներով:

Հաշվի առնելով, որ լրագրությունը չի համարվում «Հանրային ծառայության մասին» և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքներով սահմանված գրականության, գիտության, արվեստի բնագավառներում իրականացվող աշխատանք՝ այն չի կարող դիտարկվել որպես ստեղծագործությունների նկատմամբ հեղինակային իրավունքի օբյեկտ, ուստի այն չի կարող դիտարկվել որպես ստեղծագործական աշխատանք:

Հիմք ընդունելով «Համայնքային ծառայության մասին», ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքների կարգավորումները՝ Հանձնաժողովը գտել է, որ վճարովի հիմունքներով լրագրությամբ զբաղվելն անհամատեղելի է համայնքային հայեցողական պաշտոնի, այս դեպքում՝ մամուլի քարտուղարի պաշտոնի հետ:

Ինչ վերաբերում է հասարակական հիմունքներով լրագրությամբ զբաղվելուն և ղեկավարի թույլտվությամբ չնորմավորված աշխատաժամանակին, ապա «Հանրային ծառայության մասին» օրենքը հասարակական հիմունքներով աշխատանք կատարելը չի սահմանում որպես արգելք, իսկ աշխատաժամանակի հետ կապված կարգավորումները սահմանվում են ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 24 նոյեմբերի 2005 թվականի N 2138-Ն որոշմամբ:

Դիմում 8.

Արդյո՞ք քաղաքացիական ծառայողն իրավունք ունի բաց բաժնետիրական ընկերությունում բաժնեմաս ունենալ:

«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգավորումներից բխում է, որ բաց բաժնետիրական ընկերությունը համարվում է առևտրային կազմակերպություն և քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի կողմից բաժնեմաս ունենալը կդիտարկվի որպես ձեռնարկատիրական գործունեություն, եթե պաշտոնը ստանձնելուց հետո մեկամսյա ժամկետում Օրենքով սահմանված կարգով բաժնեմասը հավատարմագրային կառավարման չհանձնվի:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը դիմումատուին տեղեկացրել է, որ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի կողմից համատեղությամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում է:

Դիմում 9.

1.Քաղաքացիական ծառայողն արդյո՞ք կարող է ունենալ բաց բաժնետիրական ընկերությունում բաժնեմաս, եթե գտնվում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում: Արդյո՞ք հղիության արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողը կարող է մինչ երեխայի խնամքի արձակուրդի ժամկետի ավարտը ձեռք բերել բաժնեմաս և այն հանձնել հավատարմագրային կառավարման մինչ աշխատանքի վերադառնալը:

2. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ենթակայության տակ գործող ՊՈԱԿ-ի տնօրենը կարո՞ղ է հանդիսանալ բաց բաժնետիրական ընկերության համահիմնադիր և բաժնետեր:

Դիմումի առարկային վերաբերելի իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում Հանձնաժողովը մեկնաբանել է, որ հղիության և ծննդաբերության արձակուրդը և մինչև երեք տարեկան երեխայի խնամքում գտնվելը ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված նպատակային արձակուրդ է, որը, սակայն, չի ենթադրում քաղաքացիական ծառայողի ծառայության դադարեցում կամ կասեցում: Հետևապես, աշխատողը շարունակում է հանդիսանալ քաղաքացիական ծառայող: Ավելին, երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքը բնորոշվում է մինչև երեխայի երեք տարեկան դառնալը ցանկացած պահի արձակուրդից վերադառնալու և ցանկացած պահի աշխատանքային կամ ծառայողական պարտականությունների կատարումը շարունակելու իրավական երաշխիքով:

Այսպիսով, Հանձնաժողովը գնահատել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող՝ Օրենքի

31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները կիրառելի են հղիության և ծննդաբերության արձակուրդում և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող քաղաքացիական ծառայողի նկատմամբ:

2. Ինչ վերաբերում է դիմումով բարձրացված 2-րդ հարցադրմանը, ապա դիմումատուին տեղեկացվել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքը, կիրառելի են միայն պաշտոնատար անձանց կոնկրետ շրջանակի, այն է՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նկատմամբ, հետևապես՝ դրանք վերաբերելի չեն հանրային իշխանության մարմինների ենթակայության տակ գործող ՊՈԱԿ-ների տնօրեններին:

Միաժամանակ, պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համատեղելիության հարցը ենթակա է մեկնաբանման «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի և համապատասխան կանոնադրության պահանջների շրջանակում՝ իրավասու մարմնի կողմից:

Դիմում 10.

Արդյո՞ք կարող է առաջանալ անհամատեղելիության պահանջների խախտում, եթե քաղաքացիական ծառայողը հրատարակչության հետ կնքել է հեղինակային պայմանագիր, որով հրատարակչության է հանձնել գրքի թարգմանության հեղինակային իրավունքը:

Հանձնաժողովը դիմումը քննարկել է «Հանրային ծառայության մասին» և «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքների շրջանակում:

Գնահատելով վերաբերելի իրավակարգավորումները՝ Հանձնաժողովը գտել է, որ հեղինակային պայմանագրի շրջանակում դիմումով ներկայացված գրականության գործի հեղինակային թարգմանությունը, հրատարակչության հանձնելը և դրա դիմաց հատուցում (ռոյալթի) ստանալը «Հանրային ծառայության մասին» օրենք իմաստով չի հանգեցնի անհամատեղելիության պահանջի խախտման:

Միաժամանակ, հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումները, այն է՝ անհամատեղելիության պահանջի խախտումը պաշտոնից ազատման հիմք է, առաջարկվել է նմանատիպ իրավիճակներում Հանձնաժողովի մեկնաբանությունը հայցել մինչև գործողության կատարումը:

Դիմում 11.

1. Արդյո՞ք կարող է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձն ունենալ ամերիկյան ֆոնդային բորսայում գրանցված ընկերության կանոնադրական կապիտալի մեկ տոկոսը չգերազանցող արժեթղթեր:

2. Արդյո՞ք քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձը կարող է համատեղելիությամբ հիմնել հիմնադրամ և հանդիսանալ դրա հոգաբարձուների խորհրդի նախագահ կամ անդամ:

Հանձնաժողովը դիմումը դիտարկել է վերաբերելի օրենսդրական կարգավորումների շրջանակում, որի արդյունքում արձանագրել է, որ.

1. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձի կողմից օտարերկրյա ֆոնդային բորսայում ընկերության կանոնադրական կապիտալում մեկ տոկոսը չգերազանցող առևտրային թույլատրված արժեթղթեր ունենալը «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով չի առաջացնում անհամատեղելիության պահանջների խախտում:

2. Հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ հիմնադրամը քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունն է՝ Հանձնաժողովը հայտնել է, որ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձը կարող է հիմնադրել հիմնադրամ: Ինչ վերաբերում է հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կամ հիմնադրամի անդամի՝ քաղաքացիական ծառայողի պաշտոնի համատեղելիությանն, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը, համանախագահները և մյուս անդամները չեն համարվում հիմնադրամում պաշտոն զբաղեցնող անձ և իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով, Հանձնաժողովը մեկնաբանել է, որ այս պարագայում ևս «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջների պահպանման խախտում չի առաջանա:

Դիմում 12.

ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է գրություն «Հետք» լրատվականի՝ «Երևանի առևտրային կազմակերպություններից մեկի՝ դատավորի պաշտոն զբաղեցնող անձի կնոջը և կնոջ մորը պատկանելու» վերտառությամբ հրապարակման առնչությամբ անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության առնչությամբ դիրքորոշում տրամադրելու վերաբերյալ:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է հրապարակման սուբյեկտ հանդիսացած՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձի և նրա հետ փոխկապակցված անձանց շահերի հայտարարագրի ուսումնասիրություն, ինչի արդյունքում օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում կամ շահերի բախման իրավիճակի առկայություն չի արձանագրվել: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Գլխավոր դատախազությանը:

Դիմում 13.

ՀՀ գլխավոր դատախազության կողմից Հանձնաժողովին է վերահասցեագրվել դիմում, որի համաձայն՝ դատախազի պաշտոն զբաղեցնող անձն ունի փաստացի իրեն պատկանող տաքսի ծառայության: Միաժամանակ, դատախազությունը հայցել է տեղեկատվություն դատախազի կողմից տաքսի ծառայության վերաբերյալ տվյալներ ներկայացնելու և անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության վերաբերյալ:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է վերջինիս շահերի հայտարարագրի և անհամատեղելիության պահանջների պահպանման ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում չի արձանագրվել: Միաժամանակ, հաշվի առնելով, որ նշված անձի վերաբերյալ Հանձնաժողովում իրականացվել են այլ գործընթացներ ևս՝ գործը փոխանցվել է համապատասխան վարչությանը՝ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով: Արդյունքում, դիմումում մատնանշված հանգամանքը քննարկման առարկա է հանդիսացել վերը նշված անձի բարեվարքության ուսումնասիրության և դրա արդյունքում անձի բարեվարքության գնահատականի ձևավորման գործընթացում:

Դիմում 14.

Հանձնաժողովին հասցեագրված մեկ այլ դիմումով դիմումատուն կարգապահական վարույթի շրջանակներում դիմել է Հանձնաժողով՝ խնդրելով քննության առարկա դարձնել Արդարադատության նախարարի՝ նշված կարգապահական վարույթների ընթացքում շահերի բախման իրավիճակում գործելու հարցը: Ըստ դիմումատուի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկող մարմնի ղեկավարի և նախարարի միջև առկա են եղել գաղափարական և ընդհանուր տնտեսական շահեր, որոնց հետևանքով նախարարը գտնվել է շահերի բախման իրավիճակում: Նույն գործի շրջանակներում դիմումատուն հրաժարվել է նախորդ դիմումով ներկայացված՝ շահերի բախման իրավիճակի քննության պահանջից, միաժամանակ խնդրել՝

քննության առնել նախարարի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման, մասնավորապես՝ պաշտոնավարմանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցը:

Տվյալ պարագայում դիմումատուն գտել է, որ նախարարն առևտրային կազմակերպության իր բաժնեմասը հավատարմագրային կառավարման է հանձնել օրենքով սահմանված պահանջների խախտմամբ՝ իբրև փաստարկ վկայակոչելով վերջինիս տարեկան հայտարարագրի տվյալներով՝ հավատարմագրային կառավարչի՝ ֆիզիկական անձ հանդիսանալու հանգամանքը: Հանձնաժողովը, բարձրացված հարցերը գնահատելով իրավահարաբերությունների ծագման պահին գործող իրավակարգավորումների համատեքստում, եզրահանգել է, որ հավատարմագրային կառավարչի վերաբերյալ տվյալը ներկայացված է եղել գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Միաժամանակ, օրենսդրական փոփոխություններից հետո նախարարի կողմից բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիրը վերակնքվել է՝ համապատասխանեցնելով օրենսդրության նոր կարգավորումներին:

Հանձնաժողովը, քննելով ստացված դիմումը, մերժել է դիմումատուի կողմից՝ նախարարի նկատմամբ վարույթ հարուցելու պահանջը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման բացակայության հիմքով: Վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Միաժամանակ, գրությամբ բարձրացված հարցի առնչությամբ, հաշվի առնելով հարցի զգայնությունը, Հանձնաժողովն առաջարկ է ներկայացրել Արդարադատության նախարարություն՝ ՄԻԵԴ վճիռների հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերը զսպելու, հանրային վստահությունը բարձրացնելու, ինչպես նաև գործընթացն առավել թափանցիկ դարձնելու նպատակով սահմանելու վարույթների հարուցման առաջնահերթությունները՝ ըստ ներքոհիշյալ չափորոշիչների՝

1. ըստ գործերի վաղեմության ժամկետների,

2. ըստ դատական ատյանների,

3. ըստ այբբենական կարգի,

4. ըստ դատավորների պաշտոնավարման ժամկետի:

Առաջարկվել է մշակել և հրապարակել ՄԻԵԴ վճիռների հիման վրա դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու տարեկան

պլան (տարվա կտրվածքով նախատեսվող կարգապահական վարույթների թիվ, մոտավոր շրջանակ՝ ոչ անվանական և այլն)՝ ապահովելով տարվա ընթացքում նախատեսվող վարույթների կանխատեսելիությունը:

Արդարադատության նախարարությունը, ի պատասխան Հանձնաժողովի հարցման, ներկայացրել է ՄԻԵԴ վճիռների հիմքով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու չափորոշիչների վերաբերյալ Նախարարի ցուցումը, որը տրամադրվել է դիմումատուին:

Դիմումատուն սույն գործին առնչվող տարբեր հանգամանքների վերաբերյալ թվով 3 դիմում է ներկայացրել Հանձնաժողով, որոնց շրջանակներում Հանձնաժողովը տրամադրել է պաշտոնական պատասխաններ, այդուհանդերձ սույն հաղորդման շրջանակներում դրանք նպատակահարմար է ներկայացնել մեկ կետի ներքո:

Դիմում 15.

Հանձնաժողով ուղարկված մեկ այլ դիմումով դիմումատուն հայտնել է համայնքի ավագանու անդամի պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջի խախտման մասին և խնդրել խախտման հիմքով հարուցել վարույթ: Դիմումի առարկան, մասնավորապես, վերաբերել է ավագանու անդամի պաշտոնին զուգահեռ իրավապահ մարմնում քաղաքացիական աշխատանք կատարելուն: Հանձնաժողովը, վերլուծելով «Տեղական ինքնակառավարման մասին» մասին օրենքով ավագանու անդամի այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները, գտել է, որ իրավապահ մարմնում աշխատելու արգելքը չի նախատեսում բացառություն քաղաքացիական աշխատանքի դեպքում, հետևապես՝ նշված պաշտոնները չեն կարող մեկտեղվել: Միաժամանակ, հաշվի առնելով, որ ավագանու անդամի անհամատեղելիության պահանջները քննող և լուծող լիազոր մարմինը հանդիսանում է ավագանին և համայնքի ղեկավարը, Հանձնաժողովը դիմումը և իր դիրքորոշումը վերահասցեագրել է համապատասխան համայնքի ղեկավարին՝ համապատասխան ընթացք ապահովելու նպատակով:

Դիմում 16.

Դիմումատուն Հանձնաժողով ուղարկված գրությամբ, հղում կատարելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասին, հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, թե արդյո՞ք սույն դրույթի կարգավորումներից ավագանու անդամի համար բացառության սահմանումը հնարավորություն է տալիս ավագանու անդամին նշանակվելու հանրային կամ հանրային ծառայության պաշտոնի:

Հանձնաժողովը, քննարկելով հարցը «Հանրային ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների համատեքստում, վերլուծելով նաև կատարված օրենսդրական փոփոխության արդյունքում նման բացառության սահմանման նպատակը և մշակող մարմնի հիմնավորումները, հաշվի առնելով Սահմանադրությամբ ամրագրված՝ անհամատեղելիության պահանջների սահմանման նպատակը և դրանց էությունը, ինչպես նաև վերաբերելի միջազգային փաստաթղթերով մեկնաբանված՝ պաշտոնավարմանը զուգահեռ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում այլ՝ կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու արգելքի մեկնաբանությունները (Վենետիկի հանձնաժողով), գտել է, որ ավագանու անդամի համար Օրենքի 31-րդ հոդվածում բացառության սահմանումը առաջացրել է որոշակի տարընկալում պաշտոնների համատեղելիության տեսանկյունից: Այդուհանդերձ, հանրային/հանրային ծառայության պաշտոնների և ավագանու անդամի պաշտոնի համատեղելիությունը ենթակա է քննարկման ոչ միայն ավագանու անդամի նկատմամբ կիրառվող սահմանափակումների, այլ հենց **հանրային պաշտոնին** ներկայացվող պահանջների համատեքստում, որտեղ վերջիններիս՝ պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն զբաղեցնելու **արգելքը բացարձակ** է: Հետևապես, հանրային պաշտոն և/կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի համար համայնքի ավագանու անդամի պաշտոնն անհամատեղելի պաշտոն է:

Դիմում 17.

Հանձնաժողով ուղարկված գրությամբ դիմումատուն պարզաբանում է հայցել առ այն, թե արդյո՞ք համայնքի ավագանու անդամները, հանդիսանալով համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածուի հետ փոխկապակցված անձինք, կարող են մասնակցել ավագանու նիստի օրակարգի հաստատմանը/քվեարկությանը, եթե օրակարգային հարցերի թվում է իրենց հետ փոխկապակցված անձի ընտրության հարցը:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի՝ պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

Հանձնաժողովը, վերլուծելով հանրային պաշտոն զբաղեցնող անձանց շահերի բախման օրենսդրական կարգավորումները, գտել է, որ համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածուի հետ փոխկապակցված ավագանու անդամները կարող են հայտնվել շահերի բախման իրավիճակում՝ նիստի օրակարգում վերջինիս ընտրության հարցի նախապատրաստական աշխատանքներին (մասնակցել օրակարգի կազմմանը, մասնակցել օրակարգի հաստատմանը/ քվեարկել) մասնակցելու դեպքում:

Նույն գործի շրջանակներում պարզաբանում է հայցվել նաև Բյուրեղավան համայնքի ղեկավարի կողմից, ում ուղարկվել է նույնաբովանդակ պատասխան-պարզաբանում:

Դիմում 18.

Մեկ այլ գրությամբ դիմումատուն հայցել է Հանձնաժողովի պարզաբանումն առ այն, թե արդյո՞ք նախարարի պաշտոն զբաղեցնող անձի՝ հավատարմագրային կառավարման հանձնված ընկերության կանոնադրական կապիտալում լրացուցիչ ավանդի ներդրման դեպքում կառաջանա անհամատեղելիության պահանջի խախտում: Հանձնաժողովը, հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի, «Հանրային ծառայության մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին օրենքների վերաբերելի կարգավորումները, դիմումատուին պարզաբանել է, որ տվյալ դեպքում՝ հավատարմագրային կառավարչի դիմումի հիման վրա ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ՝ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով:

Դիմում 19.

Հանձնաժողով ուղարկված գրությամբ դիմումատուն պարզաբանում է հայցել առ այն, թե արդյո՞ք հանդիսանալով քաղաքացիական ծառայող, կարող է գնումների մասնակցի կողմից լիազորվել գնումների մասնակցության հայտ լրացնելու և հայտին կցվող փաստաթղթերն իր էլեկտրոնային ստորագրությամբ առցանց եղանակով պատվիրատուին ներկայացնելու համար:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել (...) որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում (…): Նույն հոդվածի 6-րդ մասի սահմանմամբ՝ օրենքի իմաստով՝ առևտրային կազմակերպությունում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի հիման վրա ստեղծված կազմակերպությունների) պաշտոն զբաղեցնելու ներքո հասկացվում է (…) որևէ ձևով առևտրային կազմակերպության

ներկայացուցչական, կարգադրիչ կամ կառավարման գործառույթների իրականացմանը ներգրավված լինելը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ առևտրային կազմակերպության անունից գնումների գործընթացում հանդես գալը, մասնավորապես՝ մասնակցության հայտ լրացնելը, հայտին կցվող փաստաթղթերը ստորագրությամբ պատվիրատուին ներկայացնելը ենթադրում են կազմակերպության ներկայացուցչական գործառույթներին ներգրավվածություն, հետևապես, Օրենքի իմաստով, նշված գործառույթները համատեղելի չեն քաղաքացիական ծառայության հետ:

Դիմում 20.

Հանձնաժողով ուղարկված դիմումով դիմումատուն պարզաբանում է հայցել առ այն, թե արդյո՞ք քաղաքացիական ծառայության գլխավոր մասնագետի պաշտոն զբաղեցնող անձը կարող է աշխատանքի ընդունվել իր աշխատավայր հանդիսացող գերատեսչության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունում (ՊՈԱԿ): Հանձնաժողովը քննել է դիմումը անհամատեղելիության պահանջների և շահերի բախման կարգավորումների համատեքստում: «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով՝ հանրային ծառայողները չեն կարող կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հանձնաժողովը դիմումատուին հայտնել է, որ, բացառությամբ թվարկված դեպքերի, այլ վճարովի աշխատանքի կատարումը Օրենքի իմաստով թույլատրելի չէ և անհամատեղելի է քաղաքացիական ծառայության հետ: Միաժամանակ, Հանձնաժողովը գտել է, որ քաղաքացիական ծառայողի աշխատավայր հանդիսացող գերատեսչության ենթակայության ներքո գտնվող ՊՈԱԿ-ում գիտակրթական աշխատանք կատարելը թույլատրելի է, քանի դեռ պահպանվում են Օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումները:

Դիմում 21.

Մեկ այլ գրությամբ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը հայտնել է, որ համատեղությամբ աշխատանքի առաջարկ է ստացել «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունից՝ հանդես գալու որպես Համահայկական խաղերի բացման և փակման արարողությունների սցենարիստ: Դիմումատուն հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն՝ արդյո՞ք սցենարիստի աշխատանքը կարող է համատեղելի լինել հայեցողական պաշտոնի հետ:

Ի պատասխան դիմումի՝ Հանձնաժողովը տեղեկացրել է, որ «Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում են հիմանական հասկացությունները, որի 21-րդ կետի համաձայն՝ ստեղծագործական

խումբ է՝ ֆիլմի ստեղծմանը մասնակցող աշխատախումբ, այդ թվում՝ սցենարի հեղինակ (...):

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է՝ տեսալսողական ամբողջական ստեղծագործության հեղինակներն են բեմադրող ռեժիսորը, սցենարի հեղինակը (...):

Համադրելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ Հանձնաժողովը գտել է, որ սցենարի հեղինակի (սցենարիստի) գործունեությունը «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 14-րդ մասի համատեքստում անհրաժեշտ է դիտարկել որպես ստեղծագործական աշխատանք: Հետևաբար, Հանձնաժողովի դիրքորոշումն է, որ սցենարիստի աշխատանքը համատեղելի է հանրային ծառայության հետ՝ պաշտոնեական լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունների գերակայության ապահովման պայմանով:

Դիմում 22.

Հանձնաժողով է ստացվել Գլխավոր դատախազի գրությունը՝ դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության պահանջները պահպանված կամ չպահպանված լինելու վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով: Գրության առարկան վերաբերել է պաշտոնավարմանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեության իրականացմանը՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության միջոցով:

Հանձնաժողովը գործի նյութերի համալիր քննության արդյունքում արձանագրել է, որ նշված անձի կողմից առևտրային ընկերության իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով և ժամկետում հավատարմագրային կառավարման չհանձնելը (հավատարմագրային կառավարման հանձնելու առնչությամբ տեղեկատվություն վերջինիս կողմից հայտարարագրված չէ համապատասխան հայտարարագրերում) հանգեցրել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտման: Անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտման հիմքով վերջինիս նկատմամբ հարուցվել է վարույթ: Որոշումը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ հետևյալ հղմամբ՝ http://cpcarmenia.am/files/legislation/1167.pdf:

Դիմում 23.

Մեկ այլ գրությամբ Հանձնաժողովի դիրքորոշումն է հայցվել առ այն, թե արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհամատեղելիության պահանջների տեսանկյունից խնդրահարույց չէ միաժամանակ համայնքի ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելը: Հիմք ընդունելով Հանձնաժողովի՝ նախկինում տրված մեկնաբանությունները, վերլուծելով վերաբերելի իրավական կարգավորումները, ի պատասխան գրության՝ Հանձնաժողովը պարզաբանել է, որ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար ավագանու անդամի պաշտոնը հանդիսանում է իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն, և դրանց համատեղումն օրենքի իմաստով թույլատրելի չէ:

Դիմում 24.

Հանձնաժողով վերահասցեագրված դիմումով Հանձնաժողովի դիրքորոշումն է հայցվել առ այն, թե արդյո՞ք քաղաքացիական ծառայողը կարող է համատեղությամբ կատարել լաբորանտի/ավագ լաբորանտի աշխատանք՝ գիտական լաբորատորիայում:

Հանձնաժողով հասցեագրված նույնաբովանդակ մեկ այլ դիմումով դիմումատուն դիրքորոշում է հայցել առ այն, թե արդյո՞ք ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում լաբորանտի աշխատանքը համարվում է գիտական կամ կրթական գործունեություն և համատեղելի է քաղաքացիական ծառայության հետ:

Ուսումնասիրելով նշված կազմակերպությունների կանոնադրությունները, դիմումատուների կողմից ներկայացված՝ աշխատանքի բնույթը նկարագրող լրացուցիչ փաստաթղթերը (ներառյալ՝ աշխատանքային պայմանագրերը), համադրելով դրանք գործող իրավակարգավորումների հետ՝ Հանձնաժողովը մեկնաբանել է, որ քննարկված դեպքերում աշխատանքի բնույթը գիտահետազոտական է, որն էլ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված թույլատրելի աշխատանք է:

Դիմում 25.

Դիմումատուն, Հանձնաժողով ուղարկված գրությամբ, հայտնել է, որ զբաղեցնում է քաղաքացիական ծառայության ավագ մասնագետի պաշտոն և հայցել պարզաբանում առ այն, թե արդյո՞ք մասնագիտական ծառայությունների տրամադրման նպատակով կարող է հանդես գալ որպես անհատ ձեռնարկատեր (ԱՁ): Հանձնաժողովը, վերլուծելով «Հանրային ծառայության մասին» օրենքի, Քաղաքացիական օրենսգրքի վերաբերելի կարգավորումները, պարզաբանել է, որ

քաղաքացիական ծառայության ավագ մասնագետի պաշտոն զբաղեցնող անձի համար պաշտոնավարմանը զուգահեռ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը, տվյալ դեպքում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսանալը, թույլատրելի չէ՝ անկախ ԱՁ-ի շրջանակներում իրականացման ենթակա գործունեության ուղղվածությունից կամ տեսակից:

Դիմում 26.

Հանձնաժողով ուղարկված գրությամբ դիմումատուն հայտնել է, որ դիմել է Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն)՝ իր անունով գրանցված ԱՁ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով, որը Գործակալության կողմից մերժվել է, և հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումը՝ ստեղծված իրավիճակի առնչությամբ:

Հանձնաժողովը, վերլուծելով վերաբերելի իրավակարգավորումները, մեկնաբանել է, որ անհատ ձեռնարկատերը, օրենքի իմաստով, ֆիզիկական անձ է, ով ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է անձամբ՝ իր անունից և իր ռիսկով, իսկ ԱՁ-ի կառավարումն այլ անձի կամ կազմակերպության փոխանցելու/հանձնելու որևէ իրավական հնարավորություն կամ ընթացակարգ օրենսդրությամբ նախատեսված չէ: Հետևապես, հավատարմագրային կառավարման՝ օրենսդրությամբ սահմանված կարգավորումներն ԱՁ-ի դեպքում կիրառելի չեն, իսկ Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի ապահովումը հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով ԱՁ-ն պետական հաշվառումից հանելու միջոցով:

Դիմում 27.

Համայնքի ավագանու երկու անդամներ համատեղ դիմում են ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ ավագանու անդամները, հանդիսանալով Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնի թեկնածուի որդին և եղբոր աղջիկը, մասնակցել են վերջինիս պաշտոնի նշանակման քվեարկությանը և քվեարկել են կողմ:

Դիմումը ուսումնասիրելով շահերի բախման համատեքստում՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ.

«Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և ոլորտային՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածի 1-ին մասով սահմանված են շահերի բախման կարգավորումներ, որոնք կիրառելի են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների և համայնքային ծառայողների նկատմամբ՝ պաշտոնավարման ընթացքում:

Գնահատելով վերը նշվածը՝ Հանձնաժողովը դիտարկել է, որ պետության անունից գործառույթ իրականացնող բոլոր մարմինները պետք է ապահովեն շահերի բախման իրավիճակների կառավարման և կանխարգելման միասնականությունը:

Բարեվարքության համակարգի բաղադրիչների միասնական ապահովումը միտված է մարմինների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև բարեվարք հանրային ծառայողի վարքագծի և կերպարի ստեղծմանը: Շահերի բախումը անհրաժեշտ է գնահատել բարեվարքության համակարգի ամբողջական համատեքստում և դիտարկել, որ շահերի բախման իրավիճակի վերաբերյալ տեղեկացնելը ոչ միայն օրենքի պահանջ է, այլ նաև հանրային ծառայողի վարքագիծ:

Վերլուծելով դիմումում նկարագրված իրավիճակը՝ Հանձնաժողովը գտել է, որ ավագանու անդամների՝ Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին որոշման քվեարկությանը մասնակցելը, քվեարկելը և հնարավոր շահերի բախման իրավիճակի մասին չհայտնելը՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումների խախտում է:

Համադրելով վերը թվարկված իրավակարգավորումները և հաշվի առնելով, որ այս դեպքում համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածուն հանդիսացել է համայնքի ավագանու անդամներից մեկի հետ փոխկապակցված անձ, վերջինիս ընտրության ընթացքում համայնքի ավագանու անդամները պարտավոր էին Օրենքով սահմանված կարգով հայտնել հնարավոր շահերի բախման իրավիճակի մասին և զերծ մնալ որևէ որոշում կամ գործողություն կատարելուց, մինչև իրավիճակի լուծմանն ուղղված առաջարկի ստացումը:

Միաժամանակ, Հանձնաժողովը նշել է, որ ավագանու անդամների շահերի բախման դեպքերի քննող և լուծող լիազոր մարմինը հանդիսանում է ավագանին կամ համայնքի ղեկավարը, ինչով պայմանավորված՝ առաջարկ է ներկայացրել ավագանու անդամներին՝ ուսումնասիրել կից դիմումը և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ Օրենքի պահանջների հնարավոր խախտումները հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով դրանք վերացնելու ուղղությամբ:

Դիմում 28.

Մեկ այլ դիմումով՝ դիմումատուն, հղում կատարելով «Ազատություն» ռադիոկայանի ռեպորտաժին, հայտնել է Վանաձոր համայնքի ավագանու անդամ Սեյրան Ղամբարյանի կողմից ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունած թիվ 11 որոշմանը շահերի բախմամբ մասնակցելու և քվեարկելու դեպքի մասին և հայցել Հանձնաժողովի գնահատականը նշված որոշման առնչությամբ:

Դիմումում ներկայացված հանգամանքների պարզաբանման նպատակով Հանձնաժողովը վերլուծել է իր լիազորությունները և շահերի բախման համատեքստում ավագանու անդամին ներկայացվող սահմանափակումները: Համաձայն դիմումում, ինչպես նաև հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Վանաձոր համայնքի ավագանին N 11 որոշմամբ հավանություն է տվել Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի 20/1 հասցեում գտնվող՝ Նելլի Ղամբարյանին պատկանող հողամասը համայնքային մեկ այլ՝ կադաստրային ավելի բարձր արժեք ունեցող հողամասի հետ փոխանակելուն: Որոշման քվեարկությանը մասնակցել է նաև Նելլի Ղամբարյանի հայրը՝ ավագանու անդամ Սերյան Ղամբարյանը՝ այդպիսով նպաստելով դստեր կողմից արտոնության ստացման:

Հանձնաժողովը գործի նյութերի համալիր վերլուծության արդյունքում եկել է եզրահանգման, որ Սեյրան Ղամբարյանի կողմից ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N 11 որոշման քվեարկությանը մասնակցելը, քվեարկելը և հնարավոր շահերի բախման իրավիճակի մասին չհայտնելը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի կարգավորումների խախտում է:

Հանձնաժողովը գրության հիման վրա առաջարկությամբ դիմել է իրավասու մարմնին՝ դիմումում բարձրացված հարցին օրենքով սահմանված կարգով ընթացք տալու նպատակով՝ հաշվի առնելով, որ համայնքի ավագանու անդամի շահերի բախման իրավիճակները քննելու և լուծելու լիազորություն Հանձնաժողովը չունի, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը (այդ թվում՝ շահերի բախման դեպքերի) վերապահված է Կառավարության լիազոր մարմնին և մարզպետարանին:

Դիմում 29.

Հանձնաժողով ուղարկված դիմումով հայցվել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, թե արդյո՞ք ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում լաբորանտի աշխատանքը համարվում է գիտական կամ կրթական գործունեություն և համատեղելի է քաղաքացիական ծառայության հետ: Հանձնաժողովը, քննարկելով դիմումը «Հանրային ծառայության մասին» և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքների կարգավորումների, ինչպես նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կանոնադրության համատեքստում գտել է, որ նշված ինստիտուտում լաբորանտի աշխատանքը գիտահետազոտական աշխատանք է, ինչն, Օրենքի իմաստով, համատեղելի է քաղաքացիական ծառայության հետ: Միաժամանակ, դիմումատուին տեղեկացվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված

պարտականությունները գերակա են իր կողմից իրականացվող գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հանդեպ:

Դիմում 30.

Դիմումատուն Հանձնաժողով ուղարկված գրությամբ հայցել է Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, թե արդյո՞ք համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը կարող է պաշտոնավարման ընթացքում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Հանձնաժողովը քննարկել է դիմումը «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումների շրջանակներում և մեկնաբանել, որ համայնքային հայեցողական պաշտոնը հանրային պաշտոն է, որի նկատմամբ կիրառելի են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց Օրենքով ներկայացվող պահանջները և սահմանափակումները:

Վերոգրյալից ելնելով՝ դիմումատուին տեղեկացվել է, որ համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնավարման ընթացքում չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և օրենքով սահմանված կարգով նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր է ապահովել սահմանված պահանջների կատարումը:

2.2 Մեդիա հրապարակումներ

Հանձնաժողովը, ի թիվս այլ լիազորությունների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի առնչությամբ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարույթ կարող է հարուցել լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա: Նույն հոդվածի 5-րդ մասի սահմանմամբ՝ լրատվամիջոցների հրապարակումները կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման դեպքի առերևույթ խախտման հատկանիշներ: Բերված գործառույթի շրջանակներում Հանձնաժողովը 2023 թվականի ընթացքում շարունակել է մեդիա մոնիթորինգի (մշտադիտարկման) իրականացումը:

Այսպես, մեդիա մոնիթորինգի արդյունքում վերհանված դեպքերի առնչությամբ 2023 թվականի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է թվով 13 մեդիա հրապարակման ուսումնասիրություն: Նշված հրապարակումներից 11-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 2-ը՝ շահերի բախմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված մեդիա հրապարակումներն են՝

1. *«Արսեն Թորոսյանի ընտանիքի ձկնաբուծական նոր բիզնեսը», https://hetq.am/hy/article/149580, «Հետք» լրատվական կայք, հոկտեմբերի 25, 2022*

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Հետք» լրատվական կայքի՝ «Արսեն Թորոսյանի ընտանիքի ձկնաբուծական նոր բիզնեսը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Առողջապահության նախկին նախարար, այժմ՝ ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյանի ընտանիքը ձկնաբուծական բիզնես է սկսել Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղում: «Ֆիշ Ֆարմ Մենեջմենթ» ՍՊ ընկերության բաժնետերերից մեկը հանդիսանում է պաշտոնյայի հայրը: Ընկերության հիմնադիրներից է Շավարշ Գրիգորյանը, ով զբաղեցրել է Առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը:

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Արսեն Թորոսյանը պաշտոնավարման ընթացքում որևէ բաժնեմասնակցություն չի ունեցել «Ֆիշ Ֆարմ Մենեջմենթ» ՍՊ ընկերությունում: Միաժամանակ, հրապարակման հիման վրա ուսումնասիրվել են Շավարշ Գրիգորյանի՝ առևտրային կազմակերպություններում մասնակցության վերաբերյալ տվյալները: Առողջապահության նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց հետո՝ շուրջ մեկ տարի, վերջինս հանդիսացել է «ՀԱՅՆԱՎԹ» ՓԲ ընկերության 100% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար: Շավարշ Գրիգորյանը նշված ընկերության իր բաժնեմասը չի հանձնել հավատարմագրային կառավարման՝ զուգահեռաբար շարունակելով մնալ նաև որպես գործադիր մարմնի ղեկավար, ինչով թույլ է տվել օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ մասի՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել **հավատարմագրային կառավարման**:

Այդուհանդերձ, 2022 թվականին ապրիլին Շ. Գրիգորյանը դադարեցրել է Առողջապահության նախարարությունում իր պաշտոնավարումը, հետևապես՝ այլ իրավական հետևանքներ ապահովելու հիմքեր առկա չեն եղել:

2. *«Փաստաթուղթ. դատավոր Սեդա Սաֆարյանի խոստովանությունը», https://armlur.am/1244291/ , «Ժողովուրդ» օրաթերթ, փետրվարի 11, 2023*

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ժողովուրդ» օրաթերթի՝ «Փաստաթուղթ. դատավոր Սեդա Սաֆարյանի խոստովանությունը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանն իր պաշտոնի հետ զուգահեռ փաստաբանական գործունեություն է ծավալել՝ ինքնախոստովանելով իր անթույլատրելի արարքը գործընկեր դատավորների մոտ, որն արձանագրվել է ՀՀ Սահմանադրական դատարանում:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Ուսումնասիրության շրջանակներում հանձնաժողովը պարզաբանում է հայցել ՀՀ փաստաբանների պալատից, որին ի պատասխան Հանձնաժողովը տեղեկացել է, որ Սեդա Սաֆարյանը իր փաստաբանական գործունեությունը դադարեցրել է մինչ պաշտոնը ստանձնելը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սեդա Սաֆարյանի կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում չի արձանագրվել:

3. «Փրկարար ծառայության նորանշանակ տնօրեն Կամո Ցուցուլյանը չի հայտարարագրել բիզնեսի իր բաժնեմասը», https://www.hetq.am/hy/article/152143, «Հետք» լրատվական կայք, հունվարի 16, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Հետք» լրատվականի՝ «Փրկարար ծառայության նորանշանակ տնօրեն Կամո Ցուցուլյանը չի հայտարարագրել բիզնեսի իր բաժնեմասը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Կամո Ցուցուլյանն իր զբաղեցրած պաշտոնի հետ զուգահեռ «Կենցաղսպասարկում» ՍՊ

ընկերությունում ունեցել է 67 տոկոս բաժնեմասնակցություն և չի հայտարարագրել նշված ընկերության իր բաժնեմասը:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վերջինիս հայտարարագրի, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրներում առկա տվյալները: Ըստ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների՝ Կամո Ցուցուլյանը 2017 թվականի հունիսի 16-ից հանդիսացել է «Կենցաղսպասարկում» ՍՊ ընկերության 67 տոկոս բաժնեմասի բաժնետեր: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հարցում է ուղարկել պաշտոնատար անձին՝ հայցելով հավատարմագրային կառավարման պայմանագիրը:

Ներկայացված պայմանագրի ուսումնասիրության արդյունքում օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտում չի արձանագրել: Միաժամանակ, հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելու հիմքով Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի ՎԻՎ/01/2023 որոշմամբ Կ. Ցուցուլյանի նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Վարույթի շրջանակներում Հանձնաժողովն ընդունել է որոշում, որի համաձայն՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2021 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի տարեկան հայտարարագրում» ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Կամո Ցուցուլյանի նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200000 ՀՀ դրամի չափով:

4. «Ներքին գործերի նորանշանակ փոխնախարար Դավիթ Համբարյանը չի հայտարարագրել իր բաժնեմասը», https://hetq.am/hy/article/152434, «Հետք» լրատվական կայք, հունվարի 24, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Հետք» լրատվական կայքի՝ «Ներքին գործերի նորանշանակ փոխնախարար Դավիթ Համբարյանը չի հայտարարագրել իր բաժնեմասը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ներքին գործերի նախարար Դավիթ Համբարյանը «Դ-Արտ» ՍՊ ընկերությունում հանդիսացել է 50 տոկոս բաժնեմասի սեփականատեր և իր ունեցած բաժնեմասը չի հայտարարագրել իր կողմից ներկայացված հայտարարագրերում:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրներում առկա տվյալների համաձայն՝ Դավիթ Համբարյանը 2018 թվականի սեպտեմբերի 18-ից հանդիսացել է «Դ-Արտ» ՍՊ ընկերության 50 տոկոս բաժնետեր:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել Դ. Համբարյանի կողմից Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերի համալիր վերլուծություն, որը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ է եղել:

5. «ՆԳ փոխնախարարի պաշտոնյա ամուսինը չի հայտարարագրել իր բաժնեմասը», https://hetq.am/hy/article/152312, «Հետք» լրատվական կայք, հունվարի 24, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Հետք» լրատվականի՝ «ՆԳ փոխնախարարի պաշտոնյա ամուսինը չի հայտարարագրել իր բաժնեմասը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ներքին գործերի փոխնախարար Արփինե Սարգսյանի ամուսինը՝ Արշակ Վարդապետյանը, ով 2022 թվականից հանդիսանում է Արդարադատության նախարարի խորհրդական, 2018 թվականի ապրիլի 12-ին հիմնադրել է «Արմոթորս» ՍՊ ընկերությունը: Ընկերության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալները հայտարարագրված չեն վերջինիս հայտարարագրում: Պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների համակարգի տվյալների համաձայն՝ ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է եղել:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը պարզաբանում է հայցել Արշակ Վարդապետյանից՝ առևտրային կազմակերպության բաժնեմասնակցության վերաբերյալ: Ներկայացված պարզաբանման արդյունքում արձանագրվել է, որ Արշակ Վարդապետյանի կողմից հիմնադրված ընկերությունը գործունեությունը դադարեցրել է մինչ վերջինիս պաշտոնի նշանակվելը, հետևապես, վերջինիս կողմից չեն խախտվել օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները:

6. «Դատավորի կնոջ ղեկավարած ՍՊԸ-ն կեղծիքներով շինթույլտվություն է ստացել նրան օգնել է դատավոր ամուսինը», https://hetq.am/hy/article/157240, «Հետք» լրատվական կայք, հունիսի 17, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Հետք» լրատվական կայքի՝ «Դատավորի կնոջ ղեկավարած ՍՊ ընկերությունը կեղծիքներով շինթույլտվություն է ստացել. նրան օգնել է դատավոր ամուսինը» վերտառությամբ հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Վճռաբեկ դատարանի դատավոր Արտակ Կրկյաշարյանը և Երևանի քաղաքապետը փոխհամաձայնության են եկել դատավորի կնոջ ղեկավարած ընկերությանը շինթույլտվություն տրամադրելու, շինթույլտվության թղթերը բնակիչների համաձայնության վերաբերյալ կեղծելու, դատավորի՝ անձամբ բնակիչների տուն այցելելու, վերջիններիս համաձայնությունը ստանալու և ոչ օրինաչափ գործողություններ իրականացնելու վերաբերյալ:

Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ հրապարակման մեջ հիշատակվող հանգամանքները հնարավոր չէ պարզել Հանձնաժողովի լիազորությունների սահմաններում և այն առավելապես իրավապահ մարմինների իրավասության տիրույթում է: Միաժամանակ, հաշվի առնելով, որ Ա. Կրկնաշարյանը իր 2021 և 2022 թվականների տարեկան հայտարարագրերում չի հայտարարագրել հայտարարագրման ենթակա՝ գործին վերաբերելի տվյալները՝ Հանձնաժողովը որոշել է իրականացնել վերջինիս հայտարարագրերի համալիր վերլուծություն: Վերլուծության գործընթացը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ եղել է ընթացքի մեջ:

7. «Ժողովուրդ». ՔՊ-ական պատգամավորը հեղափոխությունից հետո բնակարան ու կայանատեղի է գնել», https://news.am/arm/news/772410.html *news.am, հուլիսի 26, 2023*

Հանձնաժողովն ուսումնասիրել է news.am լրատվական կայքի «ՔՊ-ական պատգամավորը հեղափոխությունից հետո բնակարան ու կայանատեղի է գնել» վերտառությամբ հրապարակումը: Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ազգային ժողովի պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանը 2022 թվականի տարեկան հայտարարագրում, բացի Ազգային ժողովից ստացվող աշխատանքի վարձատրության, հայտարարագրել է եկամուտ «Ժուռնալիստների ասպարեզ» ակումբից և «Կանանց իրավունքների տուն» կազմակերպությունից:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը պարզաբանում է հայցել Հերիքնազ Տիգրանյանից, ով, ի պատասխան հարցման, Հանձնաժողով է ներկայացրել նշված կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերը: Ներկայացված հիմնավորումների արդյունքում՝ Հանձնաժողովը եզրահանգել է, որ կատարված աշխատանքը կրթական և ստեղծագործական բնույթի է, ուստի վերջինիս կողմից չեն խախտվել օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները:

8. «Չարենցավանի համայնքապետը նախկին պատգամավոր Վահան Հարությունյանից 223 միլիոն դրամ եկամուտ է ստացել», https://hetq.am/hy/article/158850 , «Հետք» լրատվական կայք, 09 օգոստոս, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Չարենցավանի համայնքապետը նախկին պատգամավոր Վահան Հարությունյանից 223 միլիոն դրամ եկամուտ է ստացել» վերտառությամբ՝ «Հետք» լրատվական կայքի հրապարակումը: Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանը 2022 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրել է մասնակցություն առևտրային 4 կազմակերպություններում: Հանձնաժողովն իրականացրել է վերջինիս անհամատեղելիության պահանջների համալիր վերլուծություն՝ մասնավորապես՝ ուսումնասիրելով Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում Հակոբ Շահգալդյանի մասնակցությամբ գրանցված բոլոր առևտրային կազմակերպությունների վերաբերյալ առկա տվյալները: Ընկերությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է հայցվել նաև այլ իրավասու մարմիններից, իսկ առկա անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում է հայցվել Հակոբ Շահգալդյանից: Վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված պայմանագրերի ուսումնասիրությամբ՝ Հանձնաժողովը գտել է, որ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վարույթ հարուցելու հիմքեր առկա չեն: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Հակոբ Շահգալդյանը, ով 2007 թվականից զբաղեցրել է Չարենցավան քաղաքի քաղաքապետի, ապա՝ 2017 թվականից՝ համայնքի ղեկավարի պաշտոնը, պաշտոնավարմանը զուգահեռ շարունակել է ուղղակի մասնակցություն և ներկայացվածություն ունենալ առևտրային կազմակերպություններում, որոնք, այնուամենայնիվ, վերացված են եղել վերջինիս՝ պաշտոնում վերընտրվելու պահին: Հարկ է նշել, որ անհամատեղելիության օրենսդրական պահանջները սահմանված են կոնկրետ պաշտոնի նկատմամբ, ինչը թույլ չի տալիս նախկին պաշտոնավարման ժամանակահատվածում թույլ տված խախտումների պարագայում արձանագրել այդ խախտումը և դրա առնչությամբ ապահովել համապատասխան իրավական հետևանքներ:

9-10. «ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը և պատգամավոր Հայկ Ցիրունյանը թերի են լրացրել իրենց հայտարարագրերը», https://hetq.am/hy/article/159946, «Հետք» լրատվական կայք, 12 սեպտեմբեր, 2023

Հանձնաժողովն ուսումնասիրել է «ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը և պատգամավոր Հայկ Ցիրունյանը թերի են լրացրել իրենց հայտարարագրերը» վերտառությամբ՝ «Հետք» լրատվականի հրապարակումը:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը 2022 թ. իր տարեկան հայտարարագրում նշում չի կատարել «Ռեալ էլեքշնս» ժողովրդավարության աջակցության ՀԿ-ում իր նախագահության վերաբերյալ: Համաձայն «Հանրային

ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում (...): Այսպիսով՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար ոչ առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելու արգելք օրենսդրությամբ սահմանված չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս դրա դիմաց ստանում են եկամուտ: Հանձնաժողովը ՊԵԿ իրականացված տվյալների հարցմամբ պարզել է, որ պաշտոնավարման ընթացքում Հակոբ Արշակյանը «Ռեալ էլեքշնս» հասարակական կազմակերպությունից եկամուտ չի ստացել: Այսպիսով՝ Հակոբ Արշակյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում հրապարակման ուսումնասիրության արդյունքում չի հայտնաբերվել:

Նշվածի առնչությամբ Հանձնաժողովը, կարևորելով հանրային շահի գերակայությունը և հաշվի առնելով իր կողմից նախկինում հանրային վտանգավորության տեսանկյունից հանրային շահի գնահատման իրավակիրառ պրակտիկան, արձանագրում է, որ սույն դեպքերում հասարակական կազմակերպությունների անդամակցության վերաբերյալ տվյալների չհայտարարագրումը այնպիսի հանրային վտանգավորություն չի ներկայացնում, որի արդյունքում էական վնաս կպատճառվի շահերի հայտարարագրման գործիքակազմի միջոցով կանոնակարգվող իրավահարաբերություններին և կխաթարվի պաշտոնատար անձանց կողմից հնարավոր շահերի բախման իրավիճակները կանխարգելելու կամ բացառելու օրենսդրի իրավաչափ նպատակը: Վերոնշյալի կապակցությամբ օրենսդիրն ի տարբերություն առևտրային կազմակերպությունների՝ անհամատեղելիության և շահերի բախման համատեքստում թույլատրելի է համարում պաշտոնատար անձանց մասնակցությունը հասարակական կազմակերպություններին, դրանով իսկ առավել նվազ դիտարկելով դրա հանրային վտանգավորությունը:

Նույն հրապարակման համաձայն՝ ԱԺ պատգամավոր Հայկ Ցիրունյանը 2022 թվականի տարեկան հայտարարագրում չի հայտարարագրել «ՄԱՏՏԵՐՍՈՆ ՀՈՄ» ՍՊԸ-ի իր բաժնեմասնակցությունը: Ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների համաձայն՝ «ՄԱՏՏԵՐՍՈՆ ՀՈՄ» ՍՊԸ-ի գործունեությունը դադարեցվել է Հայկ Ցիրունյանի ՝ ԱԺ պատգամավորի պաշտոնը ստանձնելուց հետո օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում, ուստի, վերջինիս կողմից անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում չի արձանագրվել:

11. «Դատախազ Գևորգ Քոչարյանը պաշտոնավարում է առևտրային ընկերություններում տնօրեն լինելուն զուգահեռ», https://infocom.am/hy/article/100082, «Ինֆոքոմ» լրատվական կայք, ապրիլի 10, 2023

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ Գևորգ Քոչարյանը, ըստ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների, իր պաշտոնեական գործունեությունը շարունակում է առևտրային ընկերություններում տնօրեն լինելուն զուգահեռ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վերջինիս հայտարարագրի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլ. համակարգի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրներում առկա տվյալները: Ըստ պետական ռեգիստրի տվյալների՝ Գևորգ Քոչարյանը ներկայացվածություն է ունեցել 2 առևտրային կազմակերպությունների կառավարման մարմիններում, ինչպես նաև վերջինիս անունով գրանցված է եղել ԱՁ: ՊԵԿ հարցմամբ ստացված տվյալների համաձայն՝ կազմակերպությունների գործունեությունը դադարել է մինչև Գևորգ Քոչարյանի պաշտոնավարումը: ԱՁ-ն ևս չի գործել պաշտոնի ստանձնման պահին: Այսպիսով՝ Գևորգ Քոչարյանի կողմից անհամատեղելիության պահանջների խախտում չի արձանագրվել:

12. «Թալինի ղեկավարը մոտ 16 մլն դրամի պայմանագիր է կնքել իր ընտանիքին պատկանող ընկերության հետ», https://hetq.am/hy/article/162667, դեկտեմբերի 8, 2023

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը պետական գնումների մրցույթի արդյունքում երկու պայմանագիր է կնքել իր ընտանիքի անդամներին պատկանող գազալցակայանի հետ:

Հանձնաժողովն ուսումնասիրել է գնումների ARMEPS տեղեկատվական շտեմարանի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրներում առկա տվյալները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Տավրոս Սափեյանը 2023 թվականի ընթացքում գնման 2 պայմանագիր է կնքել իր հետ՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով փոխկապակցված անձանց՝ հոր և հորեղբոր բաժնեմասնակցությամբ ընկերության հետ:

Հաշվի առնելով, որ Տավրոս Սափեյանը թույլ է տվել Օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումների առերևույթ խախտում՝ Հանձնաժողովը որոշել է շահերի բախման կարգավորումները չպահպանելու հիմքով Տ. Սափեյանի նկատմամբ հարուցել վարույթ, որը 2024 թվականի դրությամբ ընթացքի մեջ է:

13. «150 հազար դոլար ավանդ, 3 անշարժ գույք, 2 «Մերսեդես». Քանաքեռ-Զեյթունի թաղապետի խոշոր ունեցվածքը», https://hetq.am/hy/article/162877, «Հետք» լրատվական, դեկտեմբերի 15, 2023

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Քանաքեռ -Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանը 2016 թվականի դեկտեմբերի 20-ին հիմնադրել է «Բիգբիո» ՍՊ ընկերությունը հանդիսանում է վերջինիս 100 տոկոս բաժնետեր:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վերջինիս հայտարարագրի, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլ. համակարգի, ՊԵԿ տեղեկատվական շտեմարանի և Հանձնաժողովին հասանելի այլ տեղեկատվական աղբյուրներում առկա տվյալները:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ Արտակ Հովակիմյանը «ԲԻԳԲԻՈ» ՍՊ ընկերության գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է 2018 թվականի սեպտեմբերի 28-ին՝ մինչև պաշտոնի ստանձնումը, հետևաբար, 2022 թվականի տարեկան հայտարարագրում բաժնեմասի հայտարարագրման պարտավորություն չի ունեցել: Այսպիսով, Արտակ Հովակիմյանի կողմից անհամատեղելիության պահանջների և հայտարարագրման օրենքով սահմանված կարգի խախտում չի արձանագրվել:

2.3 Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, առաջնորդվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելման ջանքերն առավել թիրախային և արդյունավետ դարձնելու նպատակով 2021 թվականից իրականացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց տարբեր կատեգորիաների անհամատեղելիության պահանջների պահպանման ստուգում:

Նշված գործառույթի ապահովման նպատակով՝ 2023 թվականին Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության կողմից սահմանված ռիսկային ցուցիչների հիման վրա իրականացվել է անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկում (այսուհետ՝ Մշտադիտարկում): Մշտադիտարկումն իրականացվել է Հանձնաժողովի կողմից նախապես սահմանված և հաստատած պետական մարմինների/պաշտոնների շրջանում:

Հաշվետու ժամանակահատվածում մշտադիտարկումը նպատակ է հետապնդել ուսումնասիրության և տվյալների համադրության միջոցով դուրս բերել գործադիր իշխանության մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում առկա անհամատեղելիության պահանջների խախտումները, վերլուծել խախտումների բնույթը և հնարավոր պատճառները և, որպես վերջնանպատակ, ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ համանման խախտումների հետագա կանխարգելման ուղղությամբ: Մշտադիտարկման իրականացման համար հիմք են ծառայել Հանձնաժողովի՝ Օրենքով վերապահված լիազորությունները և Հայաստանի Հանրապետության ստանձնած՝ վերաբերելի միջազգային պարտավորությունները: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակի ընտրության իմաստով՝ Հանձնաժողովը կարևոր է համարել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) գնահատման 5-րդ շրջափուլի զեկույցի նախագծով նախանշված պաշտոնները, որոնք այս փուլում ընդգրկում են կառավարման կենտրոնական ապարատում բարձրագույն գործադիր պաշտոն զբաղեցնող անձանց և անդրադառնում վերջիններիս շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը և բարեկարգության խթանմանը:

Մշտադիտարկման ենթակա սուբյեկտների շրջանակը բնականորեն համընկել է նաև 2023 թվականի ընթացքում Հանձնաժողով հասցեագրվող դիմում-գրությունների և ուսումնասիրվող մեդիա հրապարակումների սուբյեկտների հետ: Այսպիսով, Հանձնաժողովի կողմից 2023 թվականին անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում իրականացնելու նպատակով որպես թիրախային խումբ սահմանվել էր գործադիր իշխանության՝ կառավարության, կառավարության ենթակա մարմինների, վարչապետի ենթակա մարմինների ղեկավար կազմը (սահմանված է Մշտադիտարկման պլանի հավելվածով)՝ ընդհանուր թվով 108 անձ:

Մշտադիտարկման ամբողջ գործընթացը՝ ներառյալ ռիսկային ցուցիչները, իրականացման մեթոդը, մանրամասն նկարագրված են մշտադիտարկման պլանում, որը հրապարակված է Հանձնաժողովի կայքէջում:

Միաժամանակ, հիմք ընդունելով հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերի ներկայացման օրենքով սահմանված ժամկետները, ուսումնասիրությունների գերակշիռ մասն իրականացվել է երկրորդ կիսամյակում: 2023 թվականի դեկտեմբերին արդեն Վարչությունում մեկնարկել են մշտադիտարկման արդյունքների ամփոփման աշխատանքները:

Այսպես, նախնական ուսումնասիրության արդյունքում՝ հանրային պաշտոն զբաղեցնող թվով 108 անձանցից 49-ի շահերի հայտարարագրերի և պետական գրանցամատյաններում առկա տվյալների համադրության արդյունքում դուրս են

բերվել առերևույթ անհամապատասխանություններ կամ պարզաբանման ենթակա հարցեր, որոնց առնչությամբ ապահովվել է անհրաժեշտ կապը պաշտոնատար անձանց հետ:

Ուսումնասիրության ընթացքում Հանձնաժողովի կողմից առերևույթ անհամապատասխանություն են դիտարկվել մասնավորապես այն դեպքերը, երբ ուսումնասիրության սուբյեկտ հանդիսացող պաշտոնատար անձինք իրենց տարեկան հայտարարագրերում, բացի հիմնական աշխատավարձից հայտարարագրել են այլ աղբյուրից ստացված եկամուտներ կամ վարձատրություն, որտեղ միանշանակ չի նշվել վարձատրության ստացման հիմքը կամ կատարված աշխատանքի բնույթը: Հանձնաժողովի կողմից որպես առերևույթ անհամապատասխանություն են գնահատվել նաև բոլոր այն դեպքերը, երբ անձինք գույքի հայտարարագիր բաժնում հայտարարագրել են առևտրային կազմակերպության բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալներ, մինչդեռ հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ տվյալներ հայտարարագրում նշված չեն եղել: Ուսումնասիրության շրջանակներում ստուգման են ենթարկվել նաև պաշտոնատար անձանց՝ հիմնական պաշտոնին զուգահեռ այլ պաշտոններ զբաղեցնելու կամ այլ աշխատանք կատարելու հանգամանքը: Այս համատեքստում, ընդհանուր առմամբ, պաշտոնատար անձանց ուղարկվել է թվով 46 գրություն:

Հանձնաժողովն ուսումնասիրության ընթացքում բաց աղբյուրներից և տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալները հստակեցնելու/ամբողջացնելու նպատակով կատարել է հարցումներ Պետական եկամուտների կոմիտե, Կենտրոնական դեպոզիտարիա և վերաբերելի այլ կառույցներ: Ստացված պարզաբանումների հիման վրա ուսումնասիրություններն ամփոփվել են:

Մինչև այժմ իրականացված մշտադիտարկման արդյունքում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցվել է թվով երկու վարույթ, որոնցից մեկը կարճվել է: Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված թվով մեկ վարույթի կարճման համար հիմք է հանդիսացել պաշտոն զբաղեցնող անձի կողմից դրսևորած դրական վարքագիծը, առ այն, որ սեփական դիմումի համաձայն, հրաժարվել է ավագանու անդամությունից՝ 2023 թվականի դեկտեմբերի 5-ից չի հանդիսանում համայնքի ավագանու անդամ՝ այդպիսով վերացնելով խախտումը: Կարճման վերաբերյալ որոշումը հրապարակված է հանձնաժողովի կայքէջում:

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման Ռեեստրի ներդնումը

««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքի ընդունմամբ օրենսդիրը վերանայեց հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու արգելքին առնչվող իրավակարգավորումները: Ի թիվս այլ կարգավորումների սույն օրենքով սահմանվեց, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր):

Օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես, նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման կարգերը, սահմանելու լիազորությունը վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Ի կատարումն օրենսդրական պահանջի՝ 2023 թվականին Հանձնաժողովի կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ):

2023 թվականի դեկտեմբերի 22-ին Նախագիծն ընդունվել է Հանձնաժողովի 01-Ն որոշմամբ և հրապարակվել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Որոշումը սահմանված կարգով հրապարակված է նաև Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում (arlis.am):

Հարկ է նշել, որ նվերների հաշվառման թվային Ռեեստրի կառուցման նպատակով Հանձնաժողովը պայմանագրային բանակցությունների մեջ է

գործընկեր կազմակերպության հետ, գործընթացը գտնվում է ակտիվ փուլում: Միաժամանակ, մինչև նվերների հաշվառման թվային Ռեեստրի գործարկումը, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացվող թույլատրելի նվերների հաշվառումը պատշաճ ապահովելու նպատակով, Հանձնաժողովը մշակել և հաստատել է նվերների հաշվառման էլեկտրոնային ձևաթուղթ, որը հրապարակված է Հանձնաժողովի կայքէջում: Ձևաթղթին կից հրապարակվել է նաև ձևաթղթի լրացման ուղեցույցը՝ տեսաձայնագրության տարբերակով:

4. Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ և վերապատրաստումներ

Հանձնաժողովը 2023 թվականին շարունակել է բարեվարքության համակարգի և դրա առանձին տարրերի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների իրականացումը: Միաժամանակ, իրազեկման գործընթացներն ուղղված են եղել և՛ հանրության շրջանում, և՛ հանրային ծառայողների շրջանում իրազեկվածության բարձրացմանը: Այս նպատակով Հանձնաժողովն իրականացրել է նախապես սահմանված թիրախային խմբերի վերապատրաստումներ, ինչպես նաև այլ գերատեսչությունների և միջազգային գործընկերների հետ համատեղ ձեռնարկել իրազեկման աշխատանքներ:

1. Կարևորելով հանրային ծառայողների վարքագծի կանոնների ներդրման և կիրարկման գործընթացում հանրային իշխանության մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների դերը և վերջիններիս կարողությունների զարգացման անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովը 2023 թվականի առաջին կիսամյակում իրականացրել է բարեվարքության հարցերով կազմակերպիչների վերապատրաստումներ:

Այսպես, Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի միջոցառումների երրորդ փուլի շրջանակում կազմակերպվել է «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» խորագրով վերապատրաստողների վերապատրաստման (TOT) դասընթացը: Սույն վերապատրաստման դասընթացը անցկացվել է 2 փուլով՝ թվով 60 բարեվարքության հարցերով կազմակերպիչների շրջանում: Դասընթացի շրջանակներում ներկայացված թեմաներից են եղել

վարքագծի սկզբունքները և կանոնները, շահերի բախման բացահայտման և կառավարման, նվերների ընդունման սահմանափակումների, հանրային ռեսուրսների օգտագործման, կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ ազդարարման կարգավորումները: Առանձին մոդուլներ նվիրվել են նաև դասընթացների վարման մեթոդաբանություններին, որպեսզի հետագայում վերջիններս իրենց աշխատավայրը հանդիսացող մարմիններում կարողանան իրականացնել համանման վերապատրաստումներ: Անցկացված դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի նորություններ բաժնում:

2. Նույն ժամանակահատվածում բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար իրականացվել է մեկ այլ վերապատրաստում Արդարադատության նախարարության հետ համատեղ: Վերապատրաստումն իրականացվել է 2 փուլով: Առաջին փուլը իրականացվել է անցանց, իսկ մյուսը՝ առցանց ձևաչափով: Վերապատրաստմանը մասնակցել են բարեվարքության հարցերով շուրջ 60 կազմակերպիչներ: Վերապատրաստումն ուղղված է եղել «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարված վերջին օրենսդրական փոփոխությունների և դրանց առնչությամբ բարեվարքության հարցերով կազմակերպիչների գործառույթների մասին իրազեկմանը: Վերապատրաստման ընթացքում ներկայացվել են հանրային ծառայողների վարքագծի սկզբունքների և դրանցից բխող կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման սահմանափակումների, շահերի բախման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:

3. Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը, ԱՄՆ ՄԶԳ ծրագրի իր գործընկերների աջակցությամբ և Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, իրականացրել է «Համայնքային ծառայողների բարեվարքությունը» թեմայով վերապատրաստողների վերապատրաստման (ToT) դասընթաց՝ Երևանի համայնքապետարանի և Երևանի վարչական շրջանների թվով 18 համայնքային ծառայողների համար: Վերապատրաստման ընթացքում մասնակիցներին ներկայացվել են Հանձնաժողովի կողմից մշակված՝ Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները և դրանց մեկնաբանությունները: Վերապատրաստման շրջանակներում համայնքային ծառայողները հնարավորություն են ունեցել ծանոթանալու նաև դասընթացների վարման մեթոդաբանության տարրերին, ինչպես նաև՝ գործնականում ներկայացնելու իրենց աշխատանքները: Վերապատրաստումը նպատակ է հետապնդել աջակցել որպես վերապատրաստող ընտրված համայնքային ծառայողներին՝ համապատասխան մարմիններում կազմակերպելու հանրային ծառայողների

բարեվարքության վերաբերյալ դասընթացներ՝ ծառայողների ավելի լայն շրջանակների համար:

4. 2023 թվականի հոկտեմբերի 5-ին և 6-ին «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանությունների ձեռնարկ»-ի նախագծի շուրջ ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի աջակցությամբ իրականացվել են վերապատրաստում-քննարկումներ Հանձնաժողովի աշխատակազմի համար: Վերապատրաստմանը մասնակցել են Հանձնաժողովի բոլոր ստորաբաժանումների աշխատակիցները, ինչպես նաև Հանձնաժողովի անդամները: Քննարկումների ընթացքում վերհանված դիտարկումները և առաջարկներն օգտագործվել են մեկնաբանությունների ձեռնարկի հետագա լրամշակման համար:

5. 2023 թվականին Մաքսային ծառայության նախաձեռնությամբ մաքսային ծառայության թվով 566 գործող ծառայողների և թեկնածուների, ինչպես նաև մաքսային համակարգի ղեկավար անձնակազմի 56 պաշտոնատար անձանց համար անցկացվել է բարեվարքության տարրերի վերաբերյալ դասընթաց: Ուսումնական ծրագրի շրջանակներում ներառված են եղել բարեվարքության համակարգին վերաբերող թեմատիկ դասընթացներ, որի ընթացքում գործող և թեկնածու մաքսային ծառայողներին ներկայացվել են անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին, շահերի բախմանը, նվերներ ընդունելու սահմանափակումներին, ինչպես նաև մաքսային ծառայողների վարքագծի կանոններին առնչվող կարգավորումները, դրանց խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցները, ոլորտային օրենսդրական փոփոխությունները:

II. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2023 թվականին գործարկվել է հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգը, որը հայտարարագրման գործընթացի լավարկման մեծ հնարավորություններ է բացել: Թեև համակարգը դեռևս ներդրման փուլում է և զգալի աշխատանք կա կատարելու՝ դրա ամբողջական ներդրումն ապահովելու համար, այնուամենայնիվ, հաշվետու ժամանակաշրջանում այս ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում արդեն իսկ տեսանելի են դրա առավելություններն ու հնարավորությունները:

2.1 Հայտարարատու պաշտոնատար անձանց գրանցում, հայտարարագրերի ներկայացում

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացել և հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել թվով 1080 ռեեստր 3270 հայտարարատու անձանց պաշտոնների՝ 5009 փոփոխությունների վերաբերյալ: Ստացված ռեեստրներում առկա տվյալների համաձայն՝ փոփոխությունները վերաբերել են՝ 2734-ը պաշտոնի ստանձնմանը, 2275-ը՝ պաշտոնի դադարեցմանը:



Ռեեստրներով ստացված պաշտոնների փոփոխությունների մուտքագրման արդյունքում տարեվերջի դրությամբ Համակարգում գրանցված գործող հայտարարատուների թիվը կազմել է 14345, այդ թվում՝ պաշտոնատար անձանց թիվը կազմել է 6165, իսկ ընտանիքի անդամների թիվը՝ 8180:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Հանձնաժողովը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տվյալների հիման վրա գրանցում է բացառապես պաշտոնատար անձանց տվյալները. պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների լրացումն իրականացվում է բացառապես պաշտոնատար անձանց կողմից:



2023 թվականից սկսած՝ պաշտոնատար անձանց և նրանց անդամների հայտարարագրերի բոլոր տեսակները ներկայացվել են ներդրված հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով է ներկայացվել 17,149 հայտարարագիր, այդ թվում՝

	Տարեկան հայտարարագիր	**Ստանձնելու հայտարարագիր**	**Դադարեցնելու հայտարարագիր**	**Ընդամենը**
Պաշտոնատար անձ	6181	1259	912	**8352**

Ընտանիքի անդամ	6941	989	867	**8797**
Ընդամենը՝	**13122**	**2248**	**1779**	**17149**

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիրն էլեկտրոնային տարբերակով հանձնել չկարողանալու պատճառով ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով Հանձնաժողով է ներկայացվել 3 հայտարարագիր, այդ թվում՝ 1 հայտարարագիրը՝ 2022 թվականի տարեկան, որը համապատասխան մասնագետների կողմից մուտքագրվել է համակարգ և սահմանված կարգով հրապարակվել, և 2 հայտարարագիր՝ 2020 թվականի տարեկան, որոնք դեռևս չեն մուտքագրվել նոր համակարգ՝ ֆունկցիոնալության ժամանակավոր բացակայության պատճառով:

Համակարգի փոփոխություններով պայմանավորված՝ ժամանակավորապես կասեցված է Հանձնաժողովի թույլտվության հիման վրա հայտարարագրերում փաստացի փոփոխություններ կատարելու գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը ստացել է հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ 311 դիմում, որից 218 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից, 84 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից, 7 դիմումը ստացվել է կուսակցությունների ղեկավար մարմնի անդամների կողմից: Հայտարարագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ ներկայացված թվով 1 դիմում մերժվել է, քանի որ դիմումատուի կողմից առերևույթ հայտարարագրման ենթակա առանձնապես խոշոր չափերով գույք թաքցնելու և ապօրինի հարստանալու դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 443-րդ հոդվածի 1-ին մասով և 444-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որով դիմումատուի կողմից ներկայացված հայտարարագրերը հանդիսացել են ապացույց:



Հայտարարատու պաշտոնատար անձանցից ստացված 311 դիմումներից 158-ը վերաբերել են 2015-2022 թվականների տարեկան, 28-ը՝ միաժամանակ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու և տարեկան, 25-ը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, 7-ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագրերում փոփոխություններ կատարելուն:

Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից ներկայացված թվով 84 դիմումները վերաբերել են 2015-2023 թվականների հայտարարագրերում փոփոխություն կատարելուն:

Հայտարարագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումները հիմնականում վերաբերել են հայտարարագրված հետևյալ տվյալների ճշգրտմանը.

- ✓ հիփոթեքային վարկավորմամբ գնման իրավունքի ձեռք բերման գործարքներ,
- ✓ բաժնային կամ համատեղ սեփականությամբ գույքային իրավունք,
- ✓ եկամուտներ,
- ✓ հայտարարագրման ենթակա ծախսեր,
- ✓ արժեթղթեր,
- ✓ հավատարմագրային կառավարման հանձնված կազմակերպություններ,
- ✓ հանձնված և վերադարձված փոխառություններ,
- ✓ ստացված փոխառությունների մնացորդներ,
- ✓ դրամական միջոցների մնացորդներ,

- ✓ կուսակցություններին անդամակցություն և այլն:

Նոր էլեկտրոնային համակարգում նախորդ համակարգի տվյալների փոխադրումն ավարտելուց հետո Հանձնաժողովը հնարավորություն կընձեռի բոլոր դիմումատուներին կատարել թույլատրված ուղղումները:

2.2 Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ

Հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգը գործարկվել է 2023 թվականի փետրվարի 1-ից և էապես տարբերվում է հայտարարագրման նախկին էլեկտրոնային համակարգից:

Ի տարբերություն նախկին էլեկտրոնային համակարգի՝ Համակարգը ապահովվել է ավտոմատացված մի շարք ֆունկցիոնալներով, այդ թվում՝

- ✓ Ընթացիկ գաղտնաբառի սահմանում հայտարարատուի կողմից,
- ✓ Մոռացված գաղտնաբառի վերականգնում հայտարարատուի կողմից,
- ✓ Պահանջվող հայտարարագրերի ինքնաշխատ գեներացում,
- ✓ Նախորդ տարեկան հայտարարագրի տարեվերջին լրացված տվյալների ինքնաշխատ բեռնման ապահովում հաջորդ տարեկան հայտարարագրի տարեսկզբին լրացվող տվյալներում,
- ✓ Փոխգործելիության հարթակի միջոցով պետական մարմինների համապատասխան շտեմարաններից հայտարարագրման ենթակա տվյալների ինքնաշխատ բեռնման ապահովում: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ԲՊՌ, ՊԵԿ շտեմարանների հասանելիությունը, պետական մյուս շտեմարանների հետ փոխգործելիությունը գտնվում է թեստավորման փուլում: Պետական շտեմարանների հետ փոխգործելիության ապահովման հիմնական խոչընդոտը հանդիսացել է տվյալների որակը:
- ✓ Հայտարարագրերի լրացման դաշտերի վավերապայմանների առկայություն,
- ✓ Հայտարարագրերի քարտերի լրացվածության գունային վիզուալիզացիայի ապահովում:



Համակարգի ներդրմամբ պարզեցվել է հայտարարագրման գործընթացը: Այն ինքնաշխատ եղանակով ներբեռնում է մի շարք տվյալներ, ինչպես նաև հուշումների միջոցով ապահովում է հայտարարագրմանն առնչվող օրենսդրական դրույթների և հայտարարագրերի լրացման կանոնների պահպանման հնարավորությունը, ինչը հայտարարատուներին կօգնի հայտարարագրերում ներկայացնելու ճշգրիտ և ամբողջական տվյալներ:

Համակարգը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- ✓ Վահանակ,
- ✓ Պրոֆիլ,
- ✓ Հայտարարագրեր,
- ✓ Օգնություն,
- ✓ Ուղեցույցներ:



«Վահանակ» բաժնում ցուցադրվում են հայտարարատուի (նրա ընտանիքի անդամների) հայտարարագրերի մասին ամփոփ տվյալներ, այդ թվում՝ ընթացիկ հայտարարագրերի ներկա վիճակը, քանակը, լրացվածության տոկոսը և այլն:

«Պրոֆիլ» բաժինը ներառում է հայտարարատուի անձնական տվյալները, պաշտոնատար անձի դեպքում՝ նաև ընտանիքի անդամների, մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց և զբաղեցրած պաշտոնների վերաբերյալ տեղեկություններ:

«Հայտարարագրեր» բաժինը բաղկացած է «Տարեկան», «Ստանձնելու», «Դադարեցնելու» ենթաբաժիններից, որտեղ արտացոլվում են հայտարարատուի համապատասխան հայտարարագրերը:

«Օգնություն» բաժինը նախատեսված է համակարգի միջոցով Համակարգի ադմինիստրատորի հետ կապ հաստատելու համար:

«Ուղեցույցներ» բաժնում հասանելի են հայտարարագրերի լրացման տեխնիկական և բովանդակային ուղեցույցները:

Հանձնաժողովը, Համակարգում գրանցված հայտարարատուների տվյալները ճշգրտելու նպատակով, Համակարգը նախագծող ընկերությունից պահանջել և ստացել է 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ պաշտոնավարումը շարունակող պաշտոնատար անձանց անվանացանկը, դրանք ուղարկել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ տվյալները ստուգելու և հաստատումով կամ փոփոխված տարբերակով Հանձնաժողով վերադարձնելու խնդրանքով:

Այնուհետև, համապատասխան մարմիններից ստացված ճշգրտված տվյալները մուտքագրվել են Համակարգ, որից հետո 2022 թվականի տարեկան հայտարարագրի ներկայացման պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների համար Համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով ստեղծվել են 2022 թվականի տարեկան հայտարարագրերը, վերոնշյալ անձանց փուլային եղանակով ուղարկվել են ծանուցումներ՝ Համակարգ մուտք գործելու անհրաժեշտ ցուցումներով և վավերապայմաններով:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերը լրացնելու և ներկայացնելու համար Համակարգում հասանելիությունն ապահովվել է 2023 թվականի մարտի 20-ից:

Նշված հայտարարագրերը ներկայացնելու պարտականություն ունեցող հայտարարատուներին (պաշտոնատար անձ և ընտանիքի անդամ) իրենց կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեներին Համակարգի կողմից փուլային եղանակով ուղարկվել են ինքնաշխատ ծանուցումներ՝ Համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ ցուցումներով:

Հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնների փոփոխությունների վերաբերյալ տվյալները Համակարգի ներդնումից հետո նախատեսված էր գրանցել Համակարգում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված ռեեստրները Համակարգ ներմուծելու միջոցով: Նշված ֆունկցիոնալը համակարգում ապահովվել է, սակայն համապատասխան մարմիններից ստացված տվյալները անհամապատասխան ֆորմատներով լրացնելու պատճառով Համակարգում առաջացել են ռեեստրների մուտքագրման խոչընդոտներ, ինչի արդյունքում Համակարգը նախագծող ընկերության կողմից ապահովվել է նոր ֆունկցիոնալ՝ հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնների փոփոխությունների վերաբերյալ տվյալները Համակարգում մեխանիկական եղանակով գրանցելու համար, մինչև նախատեսվող՝ Պետական եկամուտների կոմիտեից հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ տվյալների՝ Համակարգում ինքնաշխատ բեռնելու ֆունկցիոնալի ապահովումը:

Հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների փոփոխությունների վերաբերյալ տվյալները մեխանիկական եղանակով Համակարգ մուտքագրվել են փուլային եղանակով՝ ըստ ստացված ռեեստրների ժամանակագրական հաջորդականության, ինչի արդյունքում պաշտոնների փոփոխություններ ունեցող հայտարարատուները համապատասխան հայտարարագրերը լրացնելու և ներկայացնելու հնարավորություն ունեցել են վերոնշյալ տվյալները Համակարգ մուտքագրելուց և համապատասխան հայտարարագրերը ստեղծելուց հետո:

Հայտարարատուների կողմից նախկինում ներկայացված հայտարարագրերը հայտարարագրման նախկին էլեկտրոնային համակարգից նոր էլեկտրոնային համակարգ տեղափոխելու գործընթացի կազմակերպման շրջանակներում 2023 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 14:00-22:00 ժամանակահատվածում, Համակարգը ժամանակավորապես անհասանելի է եղել՝ 2022 և 2023 թվականների պաշտոնեական պարտականությունները ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի տեղափոխման աշխատանքներն իրականացնելու նպատակով, ինչի վերաբերյալ Հանձնաժողովը պաշտոնական հաղորդագրություն է տարածել:

Համակարգ մուտք գործելու հնարավորությունն ապահովելու և իրենց կողմից ներկայացված հայտարարագրերին հասանելիությունն ապահովելու նպատակով 2023 թվականի ապրիլի 22-ին հայտարարագրման էլեկտրոնային համակարգում երբևէ գրանցված բոլոր հայտարարատուներին փուլային եղանակով ուղարկվել են ծանուցումներ՝ միաժամանակ տեղեկացնելով, որ այն պաշտոնատար անձինք, ովքեր տվյալ պահին հայտարարատու պաշտոն չեն զբաղեցնում, հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չունեն:

Նոր ներդրված համակարգում՝ որպես ծանուցման անհատականացման եղանակ, ընտրվել է անհատական էլեկտրոնային փոստի տարբերակը, ինչը ենթադրում է, որ միևնույն էլեկտրոնային փոստի հասցեն չի կարող կրկնվել Համակարգում գրանցված այլ օգտատիրոջ մոտ: Սրա արդյունքում հայտարարագրման նախկին էլեկտրոնային համակարգից նոր էլեկտրոնային համակարգ տեղափոխվել են միայն այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնք չեն կրկնվել այլ օգտատերերի մոտ, իսկ կրկնվող էլեկտրոնային փոստերի դեպքում՝ առաջնահերթությունը տրվել է պաշտոնատար անձանց անձնական տվյալներում էլեկտրոնային փոստի հասցեի առկայությանը, քանի որ ընտանիքի անդամների վերաբերյալ կարգավորումները գտնվում են նրանց տիրույթում: Այդպիսով, պաշտոնատար անձինք Համակարգում գրանցված էլեկտրոնային փոստի հասցեներին ստացել են ծանուցումներ՝ համապատասխան վավերապայմաններով, որից հետո հնարավորություն են ունեցել իրենց «Պրոֆիլ» բաժնի «Ընտանիքի կազմ» ենթաբաժնում, ըստ անհրաժեշտության, կատարել համապատասխան փոփոխությունները:

Համակարգի ներդրման արդյունքում արձանագրված խնդիրների գերակշիռ մասը վերաբերել են հայտարարատուների կողմից ծանուցումներ չստանալուն, ինչպես նաև առանձին դեպքերով արձանագրվել են տեխնիկական խնդիրներ, որոնք փոխանցվել են համակարգը նախագծող և սպասարկող ընկերությանը և հնարավորինս կարճ ժամկետում բոլոր խնդիրները կարգավորվել են:

Ծանուցումներ չստանալու հետ կապված խնդրի հիմնական պատճառները եղել են անձնական տվյալներում էլեկտրոնային փոստի բացակայությունը, Համակարգում գրանցված ոչ վավեր էլեկտրոնային փոստերի հասցեների առկայությունը, էլեկտրոնային փոստի հասցեների ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում տվյալ էլեկտրոնային փոստի հասցեն նամակներ չի ընդունել:

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ մուտք գործելու հնարավորություն չունեցող հայտարարատուների տվյալները հավաքագրելու, կանոնակարգելու և նշված խնդրին լուծում տալու նպատակով Հանձնաժողովի

կողմից ստեղծվել է համապատասխան տվյալները լրացնելու վերաբերյալ ձևաթուղթ, որի մասին պաշտոնական հաղորդագրություն է տարածվել, որի արդյունքում հայտարարատու պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի կողմից Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում գրանցված հայտերի հիմնական խնդիրները վերաբերել են էլեկտրոնային փոստերի հասցեների փոփոխություններին:

Հայտարարագրման գործընթացի հետ կապված խնդիրներին ու հարցադրումներին արագ արձագանքելու նպատակով Համակարգում ներդրվել է «Օգնություն» բաժինը, որը հնարավորություն է ստեղծել հայտարարատուների համար Համակարգի միջոցով ուղիղ կապ հաստատել Հանձնաժողովի համապատասխան մասնագետի հետ, տեղեկացնել արձանագրված խնդիրների մասին կամ ներկայացնել հարցադրումներ ու ստանալ սպառիչ պատասխաններ:

Հայտարարատուներին հայտարարագրման գործընթացում շարունակական աջակցություն ցուցաբերելու նպատակով կազմվել և Համակարգում տեղադրվել է հայտարարագրերի տեխնիկական լրացման ուղեցույցը, ինչպես նաև Համակարգի առանձին բաժիններում և դաշտերում տեղադրվել են հուշումներ՝ հայտարարատուների կողմից տվյալները ճշգրիտ լրացնելու համար:

Հանձնաժողովի նոր կայքի տվյալների օգտագործման տեսանկյունից արդյունավետ հասանելիության ապահովման նպատակով նախապես ուղարկված հրավերի հիման վրա 2023 թվականի մայիսի 18-ին Հանձնաժողովում կազմակերպվել է «Հայտարարագրման էլեկտրոնային համակարգի հանրային հատվածի տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ» թեմայով աշխատանքային քննարկում լրագրողների հետ: Աշխատաժողովի նպատակը լրագրողների ակնկալիքների և նրանց կողմից բարձրաձայնվելիք խնդիրների հավաքագրումն էր:

Հայտարարագրման էլեկտրոնային համակարգը նախագծող ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է համակարգի հանրային հատվածի՝ առաջարկվող տարբերակը, որի շուրջ տեղի են ունեցել քննարկումներ՝ այն պարբերաբար բարելավելու ուղղությամբ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակական համագործակցության, որի շրջանակներում լրագրողները կներկայացնեն իրենց աշխատանքային պահանջմունքները, իսկ համակարգը նախագծող ընկերությունը, Հանձնաժողովի համաձայնությամբ, ըստ առաջնահերթությունների ու կարևորության, դրանք կինտեգրի համակարգի հանրային հատվածում:

2023 թվականի հունիսի 6-ին Հանձնաժողովը պաշտոնական հաղորդագրություն է տարածել առ այն, որ 2022 թվականի տարեկան հայտարարագրերի՝ օրենքով սահմանված ժամկետներում հրապարակումն ապահովելու ընթացքում Համակարգի՝ 2023 թվականին առաջին անգամ գործարկմամբ պայմանավորված, հնարավոր տեխնիկական և անվտանգային խնդիրները շտկելու նպատակով համակարգը նախագծող ընկերության կողմից համապատասխան աշխատանքների իրականացման համար 2023 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 14:00-16:00, համակարգն անհասանելի կլինի, որից հետո մեկօրյա ժամկետում նոր համակարգով ներկայացված հայտարարագրերը կսինխրոնիզացվեն հայտարարագրերի հրապարակային ռեեստրում, և կապահովվի դրանց հանրային հասանելիությունը:

Արդեն 2023 թվականի հունիսի 9-ին տարածած հաղորդագրությամբ Հանձնաժողովը տեղեկացրել է, որ ներկայացված հայտարարագրերի՝ օրենքով սահմանված կարգով հրապարակումն ապահովելու նպատակով գործարկվել է հայտարարագրերի հրապարակային ռեեստրի նախնական տարբերակը, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://registry.cpcarmenia.am/:



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրերի հրապարակային ռեեստրը գործարկվում է հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի գործարկումից հետո առաջին անգամ՝ Հանձնաժողովը խնդրել է շահագրգիռ բոլոր անձանց հնարավոր տեխնիկական խնդիրներ հայտնաբերելու դեպքում տեղեկացնել՝ դրանք հնարավորինս սեղմ ժամկետում շտկելու համար՝ միաժամանակ առաջարկելով հայտարարագրերի հրապարակային ռեեստրի տեխնիկական հնարավորությունները շարունակական բարելավելու և զարգացնելու նպատակով դիտարկումներն ու առաջարկները ներկայացնել Հանձնաժողով՝ քննարկելու և գործնականում կիրառելի դարձնելու համար: Միաժամանակ տեղեկացվել է, որ փորձարկման փուլում է հայտարարագրերը pdf և excel տարբերակներով արտահանելու հնարավորությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարատուները (պաշտոնատար անձ, ընտանիքի անդամ) 2022 թվականի տարեկան հայտարարագրերը, ինչպես նաև 2023 թվականի ստանձնելու և դադարեցնելու

հայտարարագրերը նոր համակարգով ներկայացրել են առաջին անգամ՝ Հանձնաժողովը համակարգը սպասարկող ընկերության հետ ձեռնամուխ է եղել հայտարարատուների կողմից 2023 թվականի 1-ին կիսամյակում արձանագրված խնդիրների լուծման, ինչպես նաև օգտագործողի (այդ թվում՝ հայտարարատու, Համակարգի կառավարիչ, հանրային օգտվող) տեսանկյունից Համակարգի ֆունկցիոնալ բարելավման աշխատանքների իրականացմանը:

Համակարգի օգտագործման տեսանկյունից հրատապություն պահանջող խնդիրների լուծման գործընթացի ավարտից հետո Հանձնաժողովը էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի աջակցությամբ ապահովել է համակարգը սպասարկող ընկերությունից Համակարգի և դրան կապակցված տվյալների բազաների ֆիզիկական տեղափոխման աշխատանքները:

Հայտարարագրերի նոր հրապարակային ռեեստրում հայտարարագրված տվյալների՝ օգտագործողների տեսանկյունից մշակման մատչելիությունն ապահովելու նպատակով տարվող աշխատանքներն ընթացքում են: 2024 թվականի հունվարից ապահովվելու է հայտարարագրերը մեքենայական ընթեռնելի տվյալներով արտահանելու հնարավորությունը: Նախատեսվում է նաև պաշտոնատար անձի տվյալների որոնման արդյունքում ապահովել ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների արտացոլումը և հակառակը:

2.3 Իրազեկման միջոցառումներ, խորհրդատվություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի առանցքային նպատակներից մեկը հայտարարատուների վարքագծի փոփոխությունն է՝ հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուների շարունակական իրազեկվածության ապահովման նպատակով Հանձնաժողովի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար տեղադրվել են իրազեկման հաղորդագրություններ:

Պետական մարմինների հետ համագործակցության շրջանակներում հանրային իշխանության մարմիններին ուղարկված շրջաբերականների, հեռախոսազանգերի, ինչպես նաև համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով իրականացված խորհրդատվության արդյունքում արձանագրվել է պաշտոնատար անձանց կողմից տարեկան հայտարարագրերի ներկայացման աննախադեպ ցուցանիշ, մասնավորապես 2022 թվականի պաշտոնատար անձանց տարեկան հայտարարագրերից չի ներկայացվել ընդամենը 5 հայտարարագիր:

Հանձնաժողովը խորհրդատվություն և աջակցություն է տրամադրել նաև հեռախոսազանգերի և Համակարգում «Օգնություն» բաժնի միջոցով, որը գործարկվել է 2023 թվականի փետրվար ամսին և հանդիսանում է Հանձնաժողովի հետ կապի առավել արագ և արդյունավետ միջոց: Պարզաբանումներ են տրվել հեռախոսազանգերի միջոցով՝ շուրջ 8000 հարցադրումների, իսկ Համակարգի «Օգնություն» բաժնի միջոցով՝ 901 հայտի:

Բոլոր այն հայտարարատուները, ովքեր չեն ստացել Համակարգ մուտք գործելու համար տվյալներ կամ ում չի հաջողվել ստացված տվյալներով մուտք գործել Համակարգ, իրենց տվյալները լրացրել են Հանձնաժողովի կայքում հրապարակված հղումով ներկայացված ձևաթղթում, որոնց մեկօրյա աշխատանքային ժամկետում ուղարկվել են օգտանուն և գաղտնաբառ: Տարեվերջի դրությամբ վերոնշյալ հայտարարատուների կողմից ներկայացված հայտերի թիվը կազմել է 1968՝ ներառյալ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնում պաշտոն զբաղեցնող անձանց հայտերը:



Հայտարարատուների հետ տարվող աշխատանքները կանոնակարգելու, համակարգելու և նրանց հարցումներին արագ արձագանքելու նպատակով Հանձնաժողովի առաջարկով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակված՝ հայտարարագրման գործընթացի խորհրդատուների հետ շարունակվել են համակարգված աշխատանքները. խորհրդատուները հավաքագրել են տվյալ մարմնի հայտարարատուներից ստացված խնդիրներն ու հարցադրումները, առանձնացված աշխատանքային էլեկտրոնային փոստի հասցեի և հեռախոսահամարի միջոցով փոխանցել են Հանձնաժողով, Հանձնաժողովի կողմից Համակարգը սպասարկող ընկերության աջակցությամբ կարգավորվել են առաջացած խնդիրները:

Հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգը ներկայացնելու, այն փորձարկելու, հնարավոր խնդիրները վեր հանելու և դիտարկումները տեղայնացնելու նպատակով 2023 թվականի փետրվարի 6-ից 8-ը Հանձնաժողովը օրենսդիր, գործադիր և դատական մարմինների՝ շուրջ 120 հայտարարատու պաշտոնատար անձանց համար կազմակերպել է եռօրյա աշխատանքային քննարկումներ:

Հայտարարատուները փաստել են, որ նոր համակարգի գործարկմամբ էապես դյուրին է դարձել հայտարարագրման գործընթացը՝ միևնույն ժամանակ ներկայացնելով առանձին առաջարկներ՝ անհրաժեշտության դեպքում Համակարգում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Հայտարարագրերի լրացման աջակցության նպատակով Հանձնաժողովը նախաձեռնել է աշխատանքային քննարկումներ, որոնց մասնակցելու հնարավորություն է տրվել շահագրգիռ բոլոր անձանց:

2023 թվականի մարտի 29-31ը կազմակերպված «Հայտարարագրման գործընթաց» թեմայով աշխատանքային քննարկումներին մասնակցել է 55 անձ՝ պետական և տեղական ինքնակառավարման տարբեր մարմիններից, այդ թվում՝ նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, նախարարություններից և դրանց ենթակա մարմիններից, տեսչական մարմիններից, Երևանի քաղաքապետարանից և վարչական շրջաններից, մարզպետարաններից և համայնքապետարաններից, ինչպես նաև գործընթացով հետաքրքրված քաղաքացիներ:

ԵՄ աջակցությամբ «Արդարադատության ոլորտի բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում 2023 թվականի ապրիլի 28-ին կազմակերպվել է աշխատաժողով ՋԼՄ ներկայացուցիչների համար: Լրագրողներին են ներկայացվել հայտարարագրման գործընթացի մանրամասները, մասնավորապես՝ Համակարգի նպատակը, հայտարարատու պաշտոնների խմբերը, հայտարարագրերի տեսակները, հայտարարագրման ենթակա տվյալները, դրանց մանրամասները: Լրագրողների ուշադրությանն են ներկայացվել այն հիմնական թերությունները, որ հայտարարատուները թույլ են տալիս հայտարարագրեր լրացնելիս, ինչպես նաև՝ դրանց ուղղման՝ իրավական նորմերից բխող կարգավորումները: ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ «Հայաստանի բարեվարքություն» ծրագրի օժանդակությամբ 2023 թվականի մայիսի 12-ին կազմակերպվել է «Կոռուպցիայի Կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով աշխատաժողով, որի ժամանակ, ի թիվս այլ թեմաների, լրագրողների ուշադրությանն է ներկայացվել հայտարարագրման էլեկտրոնային նոր համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ:

2023 թվականի հունիսի 14-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի և ԱՄՆ ՄԶԳ աջակությամբ, տեղի է ունեցել «Թվայնացում Հայաստանում՝ կոռուպցիայի դեմ պայքարի համար» խորագրով աշխատաժողով: Միջոցառման շրջանակում ներկայացվել է կոռուպցիայի կանխարգելման համար թվայնացման ռազմավարության ներդրման համատեքստում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված ուսումնասիրության զեկույցը, հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգը, համակարգի տեխնիկական հատկանիշները և ֆունկցիոնալությունը, ինչպես նաև՝ հակակոռուպցիոն շրջանակի համար առկա թվային ճարտարապետությունը:

III. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարագրերի ներկայացման հանգամանքի ստուգում

Հանձնաժողովը, հայտարարագրերի ներկայացման գործընթացի շրջանակներում շարունակաբար տեղեկացրել է 2022 թվականի տարեկան, 2023 թվականի ստանձնելու և 2023 թվականի դադարեցնելու հայտարարագրեր չներկայացրած անձանց՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունենալու վերաբերյալ՝ իրական ռեժիմում տեղեկանալով և կարգավորելով վերոնշյալ հայտարարատուների կողմից արձանագրված խնդիրները:

Վերոնշյալ գործընթացներն ամփոփելուց հետո հաշվետու ժամանակահատվածում համապատասխան հայտարարագրերը չներկայացրած, ինչպես նաև հայտարարագրման գործընթացի շրջանակներում հայտնաբերված և մինչև 2023 թվականը համապատասխան հայտարարագրերը չներկայացրած 503 հայտարարատուների ուղարկվել են գրավոր ծանուցումներ: Ընդ որում՝ վերոնշյալ ծանուցումները վերաբերել են հայտարարագրերի հետևյալ տեսակներին՝

- 2023 թվականի ստանձնելու հայտարարագիր՝ 136
- 2023 թվականի դադարեցնելու հայտարարագիր՝ 113
- 2022 թվականի տարեկան հայտարարագիր՝ 214
- 2022 թվականի ստանձնելու հայտարարագիր՝ 13
- 2021 թվականի տարեկան հայտարարագիր՝ 21
- 2021 թվականի ստանձնելու հայտարարագիր՝ 1
- 2021 թվականի դադարեցնելու հայտարարագիր՝ 1
- 2020 թվականի տարեկան հայտարարագիր՝ 4:



Հայտարարատուներին հայտարարագիր չներկայացնելու վերաբերյալ գրավոր ծանուցումների արդյունքում համապատասխան հայտարարագրերը ներկայացվել են, իսկ թվով 22 հայտարարագրերի մասով կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:

Վերը թվարկված ծանուցումներից բացի Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում և նրանց աջակցությամբ ապահովել է նշված մարմինների՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող թվով 535 հայտարարատուների ծանուցումը:

3.2 ՀԼՄ հրապարակումների և անձանց գրավոր դիմումների հիման վրա ուսումնասիրություն

Հանձնաժողովի կողմից իրականացված մամուլի մոնիթորինգի արդյունքում, ինչպես նաև ստացված դիմումների հիման վրա հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 27 ուսումնասիրություններ, այդ թվում՝ անձանց գրավոր 3 դիմումների, լրատվամիջոցների 24 հրապարակումների հիման վրա:

Այսպիսով, իրականացվել են ներքոնշյալ հայտարարատուների և, ըստ անհրաժեշտության, նաև նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի՝ մամուլում տեղ գտած հրապարակման մեջ արձանագրված առերևույթ խնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններ[1].

N	Ուսումնասիրության հիմք	Հղում (հրապարակման դեպքում)	Անուն	Ազգանուն	Եզրակացություն
1	Դիմում		Արթուր	Խլղաթյան	Ստուգվել է դիմումում նշված գույքերի՝ սահմանված կարգով հայտարարագրման փաստը, մնացած մասով բարձրացված հարցերը Հանձնաժողովի լիազորություններից դուրս են եղել: Ստուգման արդյունքում հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել:

[1] Սույն ցանկում ներկայացված հրապարակումների ուսումնասիրությունների մի մասի արդյունքներն ամփոփվել են 2024 թվականին, սակայն հանրային հնչեղությունից ելնելով ներկայացվում են սույն հաղորդման շրջանակներում:

2	ԶԼՄ հրապարակում	https://www.aravot.am/2023/03/24/1330780/	Արման	Եղոյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել: Մասնավորապես, ուսումնասիրությամբ պարզվել է, որ հրապարակմամբ նշված գույքի ձեռքբերումը հիմնավորվում է հայտարարատուի օրինական եկամուտներով:
3	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/152312	Արշակ	Վարդապետյան	Որոշում է կայացվել իրականացնել հայտարարագրերի վերլուծություն, ինչի արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ 2024 թվականին Արշակ Վարդապետյանից հայցվել է պարզաբանում: Ներկայացված պարզաբանումների գնահատման արդյունքում Հանձնաժողովի մտահոգությունները փարատվել են և որոշում է կայացվել թույլատրել Արշակ Վարդապետյանին՝ համապատասխան հայտարարագրերում կատարել ուղղում:
4	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/152312	Արփինե	Սարգսյան	Որոշում է կայացվել իրականացնել հայտարարագրերի վերլուծություն, ինչի արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ 2024 թվականին Արփինե Սարգսյանից հայցվել է պարզաբանում: Ներկայացված պարզաբանումների գնահատման արդյունքում

					Հանձնաժողովի մտահոգությունները փարատվել են:
5	ԶԼՄ հրապարակում	https://infocom.am/hy/article/105601	Արտակ	Թադևոսյան	Որոշում է կայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել հայտարարատուից: Արդյունքում, իրականացվել է ընթացիկ տարեկան ծախսի վերահաշվարկ, որում ներառվել են ինչպես ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերը՝ դիտարկելով վերջիններիս որպես մեկ տնտեսություն, այնպես էլ պարզաբանմամբ լրացուցիչ ներկայացված տվյալները: Հիմք ընդունելով անհամապատասխանությունների բնույթը և վաղեմությունը՝ 2024 թվականին որոշվել է ավարտել ուսումնասիրությունը:
6	ԶԼՄ հրապարակում	https://infocom.am/hy/article/115623	Գարեգին	Բեգոյան	Հայտարարագրերի վերլուծության, ինչպես նաև վարչական իրավախախտման վարույթի հարուցման համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների վաղեմությունը և Հանձնաժողովի ձևավորած պրակտիկան, առ այն, որ եթե նույն գործարքի մասին հայտարարագրի մի բաժնում նշում է կատարվել,

					իսկ մյուսում՝ ոչ, Հանձնաժողովն այդ հիմքով վարույթ չի հարուցում:
7	ԶԼՄ հրապարակում	https://www.tert.am/am/news/2023/11/16/zhoghovurd/4033086	Դավիթ	Դանիելյան	Որոշում է կայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել հայտարարատուից: 2024 թվականին ստացված պարզաբանումների և դրանց կից ներկայացված նյութերի համադրման արդյունքում պարզվել է, որ Դավիթ Դանիելյանին են պատկանում 2 անշարժ գույքեր, իսկ մեկ անշարժ գույքի մասով դեռևս առկա է կառուցվող շենքից գույք գնելու իրավունք, ինչը, սակայն, Դավիթ Դանիելյանը հայտարարագրել է որպես առկա անշարժ գույք: Անդրադարձ է կատարվել նաև մամուլում արձանագրված՝ Արտակ Խաչատրյանից ստացված եկամտին, որը հանդիսանում է Դավիթ Դանիելյանի նկարած նկարների վաճառքից ստացված եկամուտը:
8	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/162815	Խաչիկ	Ղազարյան	Որոշում է կայացվել պարզաբանում հայցել հայտարարատուից ինչպես մամուլում արձանագրված անհամապատասխանությունների, այնպես էլ Խաչիկ Ղազարյանի կողմից հայտարարագրված

					դրամական միջոցների և որպես նվիրատվություն ստացված եկամուտների ծագման աղբյուրի, հայտարարագրված այլ տվյալների արժանահավատության վերաբերյալ, որոնց ի պատասխան 2024 թվականին Խաչիկ Ղազարյանից ստացվել է պարզաբանում և պարզաբանումները հավաստող փաստաթղթեր: Պարզաբանումները գնահատման փուլում են:
9	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/158850	Հակոբ	Շահգալդյան	Որոշում է կայացվել 2023 թվականի տարեկան հայտարարագրերի համադրմամբ իրականացնել հայտարարագրերի վերլուծություն:
10	ԶԼՄ հրապարակում	https://armlur.am/1284150/	Համբարձում	Մաթևոսյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել: Հրապարակման մեջ նշված էր, որ Վարչապետի խորհրդականը եկամուտ չի հայտարարագրել, մինչդեռ Համբարձում Մաթևոսյանը Վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնը ստանձնել է 16/02/2023 թվականին՝ ներկայացնելով 2023 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու հայտարարագիրը, որում անհրաժեշտ էր հայտարարագրել 2023 թվականի

					հունվարի 1-ից մինչև փետրվարի 16-ը ստացած եկամուտները:
11	ԶԼՄ հրապարակում	https://news.am/arm/news/772410.html	Հերիքնազ	Տիգրանյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել: Հերիքնազ Տիգրանյանի կողմից բնակարանի և ավտոկայանատեղիի ձեռքբերման վերաբերյալ ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ անշարժ գույքերի ձեռքբերումը հիմնավորվում է օրինական եկամուտներով:
12	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/160090	Մանվել	Հակոբյան	Որոշում է կայացվել պարզաբանում հայցել հայտարարատուից՝ ներկայացված ուղղման դիմումում նշված տվյալների վերաբերյալ:
13	ԶԼՄ հրապարակում	https://infocom.am/hy/article/115679	Միհրան	Բուլղադարյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն, հաշվի առնելով այն պրակտիկան, որ եթե նույն գործարքի մասին հայտարարագրի մի բաժնում նշում է կատարվում, իսկ մյուսում՝ ոչ, Հանձնաժողովն այդ հիմքով վարույթ չի

					հարուցում, ինչպես նաև հիմք ընդունելով Միհրան Բուլղադարյանի՝ 30/06/2023 թվականին Հանձնաժողով մուտքագրված ուղղման դիմումը:
14	ԶԼՄ հրապարակում	https://www.tert.am/am/news/2023/11/01/zhoghovurd/4025466	Միքայել	Թումասյան	Որոշում է կայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել հայտարարատուից: 2024 թվականին ներկայացված պարզաբանումների և հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, Հանձնաժողովը պարզել է, որ Միքայել Թումասյանի և նրա կնոջ դրամական միջոցների առաջնային ծագման աղբյուրը հանդիսացել է 2012 թվականին անշարժ գույքի վաճառքից ստացված 114 մլն ՀՀ դրամ եկամուտը: Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել, և Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը:
15	ԶԼՄ հրապարակում	https://factor.am/646465.html	Նարեկ	Տերյան	Մամուլի հրապարակման հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման իրականացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել հայտարարագրերի

					համալիր վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված առերևույթ անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովը որոշել է Նարեկ Տերյանից և նրա ընտանիքի անդամից պահանջել պարզաբանում: Վերլուծությունը գտնվում է ընթացիկ փուլում:
16	ԶԼՄ հրապարակում	https://www.tert.am/am/news/2023/11/10/zhoghovurd/4030204	Շավարշ	Գրիգորյան	Որոշում է կայացվել հայտարարատուից պարզաբանում հայցել 2020 թվականի պաշտոնեական պարտականությունների դադարեցման հայտարարագրում համապատասխան արժեթղթերի վերաբերյալ նշումներ չկատարելու, անշարժ գույքի օտարման, իր մասնակցությամբ կազմակերպությունից հնարավոր եկամտի ստացման մանրամասների վերաբերյալ, ինչի արդյունքում 2024 թվականին Շավարշ Գրիգորյանը ներկայացրել է պարզաբանումներ, և Հանձնաժողովը որոշել է ավարտել ուսումնասիրությունը՝ հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայության հիմքով:

17	ԶԼՄ հրապարակում	https://www.tert.am/am/news/2023/11/17/zhoghovurd/4033710	Ռուստամ	Բաքոյան	Որոշում է կայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել հայտարարատուից: Ռուստամ Բաքոյանի կողմից 2024 թվականին ներկայացվել են պարզաբանումներ, որոնք դեռևս գնահատման փուլում են:
18	ԶԼՄ հրապարակում	https://armlur.am/1284603/	Սերգեյ	Բագրատյան	Մամուլի հրապարակման հիման վրա հայտարարագրված տվյալների ստուգման իրականացման արդյունքում Հանձնաժողովը որոշել է իրականացնել հայտարարագրերի համալիր վերլուծություն: Հանձնաժողովը որոշել է Սերգեյ Բագրատյանից և նրա ընտանիքի անդամից պահանջել պարզաբանում: Պարզաբանումները գտնվում են գնահատման փուլում:
19	ԶԼՄ հրապարակում	https://infocom.am/hy/article/115622	Սիրո	Ամիրխանյան	Որոշում է կայացվել արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ պարզաբանում հայցել համապատասխան հայտարարատուներից: Պարզաբանումները ստանալուց և գնահատելուց հետո 2024 թվականին որոշում է կայացվել իրականացնել հայտարարագրերի վերլուծություն՝ 2023

					թվականի տարեկան հայտարարագրերի համադրմամբ:
20	ԶԼՄ հրապարակում	https://yerkir.am/hy/article/2023/08/28/16849, https://yerkir.am/hy/article/2023/08/15/16391	Սուրեն	Պապիկյան	Որոշում է կայացվել իրականացնել Սուրեն Պապիկյանի և նրա կնոջ կողմից ներկայացված 2022 թվականի տարեկան հայտարարագրերի վերլուծություն: Վերլուծություն արդյունքում Սուրեն Պապիկյանից և նրա կնոջից հայցվել է պարզաբանում: Պարզաբանումներով Հանձնաժողովին են ներկայացվել հիմնավորող փաստաթղթեր: Դրանց արդյունքում մի շարք կետերով Հանձնաժողովի կասկածները համարվել են փարատված, 2 անհամապատասխանության վերաբերյալ որոշում է կայացվել վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով Հանձնաժողովի ձևավորած պրակտիկան: Միաժամանակ, Սուրեն Պապիկյանի կնոջ կողմից 2023 թվականի մայիսի 29-ին ներկայացված

					«Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի» (այսուհետ՝ Հայտարարագիր) վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ առերևույթ իրավախախտման՝ Հայտարարագրի «Գ.1 Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի եկամուտներ» բաժնի «Գ.1.1. Հաշվետու տարվա եկամուտներ» ենթաբաժնում հարսանեկան միջոցառումից ստացված եկամուտի վերաբերյալ տվյալներ չներկայացնելու դեպքի կապակցությամբ հարուցվել է ՎԻՎ վարույթ:
21	Դիմում		Սպարտակ	Պողոսյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել, քանի որ Սպարտակ Պողոսյանի և վերջինիս ընտանիքի անդամների գույքի ավելացումը հիմնավորվում է վերջիններիս կողմից հայտարարագրված եկամուտներով, իսկ դիմումով բարձրացված մյուս հարցերը Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում չեն եղել: Արդյունքում, Հանձնաժողովը 2024 թվականին որոշում է կայացրել ավարտել ուսումնասիրությունը:

22	Դիմում		Սպարտակ	Պողոսյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել, քանի որ Սպարտակ Պողոսյանի և վերջինիս ընտանիքի անդամների կողմից տարբեր տարիների տարեկան հայտարարագրերը չներկայացնելու հանգամանքը չի հաստատվել: 2024 թվականին որոշում է կայացվել ավարտել ուսումնասիրությունը:
23	ԶԼՄ հրապարակում	https://news.am/arm/news/775054.html	Վահագն	Հովակիմյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ գույքի ձեռքբերումը հիմնավորվում է հայտարարագրված եկամուտներով: Վարչական իրավախախտման վարույթի հիմքեր նույնպես առկա չեն եղել:
24	ԶԼՄ հրապարակում	https://infocom.am/hy/article/110089	Վահե	Խաչատրյան	Հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքներ առկա չեն եղել՝ հաշվի առնելով անհամապատասխանությունների բնույթը և վաղեմությունը:

25	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/162586	Դիանա	Գասպարյան	Որոշում է կայացվել իրականացնել Դիանա Գասպարյանի, Արամայիս Միրզոյանի և Շահեն Շահինյանի հայտարարագրերի համալիր վերլուծություն:
26	ԶԼՄ հրապարակում	https://hetq.am/hy/article/162414	Վարդան	Մանուկյան	Հանձնաժողովն իրականացրել է բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն, որի շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Վարդան Մանուկյանը ներկայացրել է պարզաբանում: Բարեվարքության վերաբերյալ և մամուլի հրապարակման հիմքով կատարված ուսումնասիրությունների և ներկայացված պարզաբանումների արդյունքում Հանձնաժողովը եզրահանգել է, որ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության և օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն եղել:
27	ԶԼՄ հրապարակում	https://www.tert.am/am/news/2023/12/19/zhoghovurd/4050855	Արմեն	Ղուլարյան	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ պաշտոնը ներառված է ԿԿՀ 29.05.2023թ. N 01-Լ որոշմամբ հաստատված ցանկում, որոշում է կայացվել ԶԼՄ հրապարակմանն անդրադառնալ

					նշված որոշման համատեքստում վերլուծություն իրականացնելու շրջանակներում:

3.3 Հայտարարագրերի վերլուծություն

Պաշտոնատար անձանց գույքային դրության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման, կոռուպցիոն հնարավոր ռիսկերի վերհանման ու զսպման նպատակով Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում շարունակել է հայտարարագրերի վերլուծության գործընթացը: Մասնավորապես, Հանձնաժողովի՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 02-Լ որոշմամբ սահմանվել են ռիսկային համարվող այն պետական պաշտոնները, որոնք ունեն պետության համար որոշումների կայացման և լիազորությունների լայն շրջանակ: Համաձայն նշված որոշման՝ վերլուծության են ենթարկվել ցանկում ներառված պետական պաշտոն զբաղեցնող 96 անձանց և նրանց ընտանիքի անդամների՝ 2021 թվականի տարեկան, ինչպես նաև 2022 թվականի պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը:

Հիմք ընդունելով Հանձնաժողովի՝ 2023 թվականի մայիսի 29-ի N 01-Լ որոշումը՝ հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչների հիման վրա պաշտոնատար անձանց (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների) վերլուծությունները շարունակվել են 2023 թվականի ընթացքում՝ ներառելով վերոնշյալ հայտարարատուների 2022 թվականի հայտարարագրերը:

Միաժամանակ, վերոնշյալ որոշմամբ և հիմքերով շարունակվել են համապատասխան դատավորների (այդ թվում՝ նրանց ընտանիքի անդամների)՝ 2021-2022 թվականներին ներկայացված հայտարարագրերի վերլուծությունները:

Հայտարարագրերի վերլուծության ընթացքում Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ անձանցից պահանջել և ստացել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, գույքի փաստացի տիրապետումը, ինչպես նաև երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերելը կամ հայտարարատուի կողմից այդ գույքից փաստացի օգուտ

ստանալը կամ այդ գույքը տնօրինելն ստուգելու նպատակով դիմել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին և ստացել անհրաժեշտ տեղեկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կատարվել են 133 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի 340 անդամների հայտարարագրերի վերլուծություններ:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Հանձնաժողովի կասկածները փարատելու նպատակով վերլուծության արդյունքում համապատասխան պաշտոնատար անձանցից և նրանց ընտանիքի անդամներից հայցվել և ստացվել են պարզաբանումներ: Միևնույն ժամանակ, նշված գործընթացը հնարավորություն է տալիս հայտարարատուներին՝ ներկայացնելու պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ իրենց փաստարկները, ինչպես նաև առկայության դեպքում դրանք հիմնավորող նյութերը:

Վերլուծված հայտարարագրերի ընդհանուր թիվը կազմել է 1132, այդ թվում՝

Հայտարարատուի տեսակ	**Վերլուծված հայտարարագրերի քանակը**
Պաշտոնատար անձ	484
Ընտանիքի անդամ	648
Ընդամենը՝	**1132**

Հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրվել են մի շարք խնդիրներ և պարզաբանման ենթակա հարցեր, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը պարզաբանումներ է հայցել հայտարարատուներից և ըստ ներկայացված պարզաբանումների լուծել դրանց ընթացքը, մասնավորապես՝

✓ գույքի ավելացումը կամ ծախսը չի հիմնավորվել հայտարարագրված եկամուտներով,

✓ հայտարարագրման ենթակա գույքի ձեռքբերումից տարբերվող նպատակներով կատարված ձեռքբերումների տարեկան հաշվարկային մեծությունը (ընթացիկ տարեկան ծախսը) էականորեն գերազանցել է մյուս հաշվետու ժամանակաշրջանների նույն ցուցանիշը կամ տարեկան եկամուտների հանրագումարը,

✓ հայտարարագրված գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, առաջնային ծագման աղբյուրը հայտարարատուի օրինական եկամուտների համադրությամբ արժանահավատության ռիսկեր է առաջացրել,

✓ հայտնաբերված ծախս, որը չի հայտարարագրվել

✓ հայտարարագրված բանկային հաշիվների մնացորդների և բանկերից ստացված տեղեկությունների անհամապատասխանություն,

✓ փոխառությունների վերաբերյալ տեղեկությունների սխալ կամ թերի հայտարարագրում,

✓ հայտարարագրված եկամուտների և Պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկությունների անհամապատասխանություն,

✓ գույքի, մասնավորապես անշարժ գույքի վերաբերյալ, տեղեկությունների հայտարարագրման բացակայություն կամ թերի հայտարարագրում,

✓ շահերի հայտարարագրի թերի լրացում,

✓ հաշիվների համախառն մուտքերի անհայտ ծագման աղբյուրը,

✓ անհայտ նվիրատուն/նվիրատուները, անհայտ կապի բնույթ,

✓ նախորդ տարեվերջին հայտարարագրված տվյալների անհամապատասխանություն հաջորդ տարեսկզբին հայտարարագրված տվյալների միջև,

✓ անշարժ գույքի գնման իրավունքի վերաբերյալ տվյալների թերի կամ սխալ հայտարարագրում,

✓ ընտանիքի անդամների՝ առևտրային կազմակերպություններում բաժնեմասնակցության և/կամ առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում նրանց ներկայացվածության վերաբերյալ տվյալների հայտարարագրման բացակայություն,

✓ օտարված գույքից (շարժական, անշարժ և այլն) ստացված գումարը որպես եկամուտ չհայտարարագրելը:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունվարի 26-ին Հանձնաժողովը շրջանառել է 2022 թվականի ընթացքում «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կիրառման արդյունքում վերհանված խնդիրների մասին փաստաթուղթը, իսկ 2023 թվականի փետրվարի 15-ին՝ նախաձեռնել հանրային քննարկում, որին մասնակցել են ինչպես ԱԺ-ի, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Արդարադատության նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, այնպես էլ կուսակցությունների, աուդիտորական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

2023 թվականի 1-ին կիսամյակում Հանձնաժողովն ակտիվորեն համագործակցել է ինչպես պետական մարմինների, այնպես էլ միջազգային գործընկերների հետ: Մասնավորապես Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող՝ ԵՄ-ի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի միջոցառումների երկրորդ փուլի՝ «Հայաստանում քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման և ստուգման, մշտադիտարկման և վերահսկողության հետ կապված գործող իրավական և ինստիտուցիոնալ դաշտի վերլուծություն» թեմայի շրջանակում Եվրոպայի Խորհրդի Տնտեսական հանցագործությունների և համագործակցության բաժնի ներկայացուցիչների հետ քննարկվել են կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության առչվող հարցեր, ինչի արդյունքում Հանձնաժողովը ստացել է մի շարք առաջարկություններ:

2023 թվականի փետրվարի 15-ին Հանձնաժողովի նախաձեռնությամբ և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության աջակցությամբ՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ տեղի է ունեցել հանրային քննարկում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի կիրառման ընթացքում վերհանված խնդիրների և դրանց հնարավոր լուծումների վերաբերյալ, որին մասնակցել են ԱԺ-ի, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Արդարադատության նախարարության, ՀՀ Կենտրոնական բանկի, այնպես էլ

կուսակցությունների, աուդիտորական կազմակերպությունների և քաղհասարակության ներկայացուցիչներ:

2023 թվականի մարտի 16-ին «Հակակոռուպցիոն պայմանագրերի և ստանդարտների իրականացում» ծրագրի շրջանակում, որը ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի աջակցությամբ համատեղ իրականացրել են Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում «Քաղաքական ֆինանսավորմանն առնչվող իրավախախտումների քննության և պատժամիջոցների վերաբերյալ» թեմայով, որին մասնակցել է նաև Հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանը ներկայացրել է կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության ոլորտում 2022 թվականին իրականացված աշխատանքները, օրենքի կիրառման ընթացքում ծագած խնդիրները, մասնավորապես՝ կուսակցությունների պետական նպատակային ֆինանսավորման հիմքերի, պետական ֆինանսավորման նվազեցման կամ դադարեցման հիմքերի առկայության ստուգման, կուսակցությունների ֆինասավորման աղբյուրների, սահմանաչափերի և այլնի մասին, միաժամանակ կարևորելով դրանց արդյունավետ լուծմանն առչվող օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը:

Արդեն 2023 թվականի մարտի 24-ին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում, տեղի է ունեցել հերթական հանրային քննարկումը կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Քննարկման օրակարգում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության բաժնի կողմից մշակված և շրջանառված՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթն էր:

Հանրային քննարկման ընթացքում կուսակցություններին ներկայացվել է օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթը, ինչպես նաև առաջարկվել հանրային քննարկման ընթացքում հնչած բոլոր առաջարկները, իսկ այլ առաջարկների դեպքում դրանք ևս ամփոփել և ներկայացնել գրավոր՝ նախագծերի փաթեթում ներառելու համար:

2023 թվականի ապրիլի 17-21-ը Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (International Foundation for Electoral Systems (IFES)) Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի կողմից կազմակերպվել է «Քաղաքական ֆինանսավորման վերահսկողության հետաքննություններ և պատժամիջոցներ»

(Investigations and Sanctions in Official Political Finance Oversight) թեմայով աշխատաժողով Չեխիայի Հանրապետությունում, որին մասնակցություն է ունեցել նաև Հանձնաժողովը: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է, թե Հանձնաժողովն ի՞նչ լիազորություններ և ռեսուրսներ ունի կուսակցությունների պետական ֆինանսավորմանն առնչվող խախտումների հետաքննության համար, այդ լիազորությունների իրականացման համար արդյո՞ք Հանձնաժողովին տրված գործիքակազմերը բավարար են, թե կարիք է լինում դիմելու այլ մարմինների՝ աջակցություն ստանալու, արդյո՞ք առկա են այնպիսի իրավական ընթացակարգեր, որոնց արդյունքում կարող են վերանայվել կամ վերացվել Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները, ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում ՀՀ-ում կուսակցությունների ֆինանսավորման խախտումների քննության առնչությամբ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2023 թվականի 1-ին կիսամյակում ավարտին է հասցրել կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողությանն առնչվող համապատասխան խնդիրների լուծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները և այն ներկայացրել իրավասու մարմնին՝ օրենքով սահմանված կարգով շրջանառելու նպատակով, որն էլ հանրային քննարկման է դրվել իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական հարթակում:

Շարունակական բնույթ է կրել կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի շրջանակում համագործակցությունը ինչպես շահագրգիռ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների հետ:

2023 թվականի նոյեմբերի 27-28-ը տեղի է ունեցել «Հայաստանում կուսակցությունների հանրային ֆինանսավորման համակարգ: Գնահատման արդյունքները և առաջընթացի ուղիները» թեմայով աշխատաժողովը: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է Հայաստանում կուսակցությունների պետական ֆինանսավորման համակարգը՝ ընդգծելով կուսակցություններին հատկացվող նպատակային պետական ֆինանսավորման կառուցակարգերի վերանայման և հատկացման չափանիշների հնարավոր բարելավման ուղղությունների համաձայնեցման կարևորությունը՝ արդյունավետ հարթակ տրամադրելով ազգային իշխանությունների, կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ

կուսակցությունների ֆինանսավորման առնչությամբ առկա միջազգային լավագույն փորձի քննարկման համար:

Աշխատաժողովը կազմակերպվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի շրջանակում, համաֆինանսավորվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից և իրականացվել Եվրոպայի խորհրդի կողմից «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում:

Արդյունքում հնարավոր է դարձել քարտեզագրել ոլորտում առկա հիմնախնդիրները, օրենսդրական բացերը, ծանոթանալ միջազգային լավագույն փորձին, նախանշել այն հրատապ լուծում պահանջող խնդիրները, որոնք հնարավոր է լուծել օրենսդրական բարեփոխումների միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որոր նման բարեփոխումները պետք է իրականացվեն հանրային լայն քննարկումների, շահագրգիռ բոլոր կողմերի ակտիվ ներգրավմամբ, ինչը փաստացի հնարավոր չի եղել կազմակերպել 2023 թվականի ընթացքում, ուստի որպես ժամանակավոր լուծում ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը, որոնց ընդունման արդյունքում մի շարք կարգավորումների ուժի մեջ մտնելը հետաձգվել է ևս մեկ տարով՝ հնարավորություն ընձեռնելով օրենսդրական լայն բարեփոխումներին անդրադառնալ 2024 թվականի ընթացքում:

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառույթի շրջանակներում Հանձնաժողովում իրականացվել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների 2021 թվականի և 2022 թվականի տարեկան հաշվետվությունները հրապարակելու, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացնելու՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված պահանջների պահպանվածությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 70 կուսակցությունների պաշտոնատար անձինք չեն հրապարակել կամ Հանձնաժողով չեն ներկայացրել 111 տարեկան հաշվետվություններ, ինչի վերաբերյալ համապատասխան թղթային ծանուցումներ են ուղարկվել վերջիններիս՝ առաջարկելով ներկայանալ Հանձնաժողով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն մասնակցելու:

33 կուսակցությունների 55 տարեկան հաշվետվությունները սահմանված կարգով չհրապարակելու կամ Հանձնաժողով չներկայացնելու դեպքերի առթիվ 1-

ին փուլով կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 55 արձանագրություն:

Վարչական իրավախախտման վերաբերյալ վերը նշված 55 արձանագրությունները կազմելուց հետո մինչև գործի քննության ավարտը Հանձնաժողով է ներկայացվել 49 տարեկան հաշվետվություն: Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության գործառույթը Հանձնաժողովին վերապահվելուց հետո առաջին անգամ է, որ կուսակցության տարեկան հաշվետվությունը չի հրապարակվել կամ Հանձնաժողով չի ներկայացվել, ինչպես նաև մինչև գործի քննության ավարտն այդ կուսակցությունները ներկայացրել են պահանջվող տարեկան հաշվետվությունները՝ Հանձնաժողովը կատարված վարչական իրավախախտումը դիտարկել է նվազ նշանակության և 49 տարեկան հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով չհրապարակելու կամ Հանձնաժողով չներկայացնելու դեպքի առթիվ նախաձեռնված 49 վարչական վարույթներն կարճել է՝ ազատելով այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն: Մնացած 6 տարեկան հաշվետվությունների մասով նախաձեռնված վարչական վարույթների ընթացքը կասեցվել է, քանի որ հնարավոր չի եղել այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց պատշաճ ծանուցել վարչական վարույթի գործի քննությանը մասնակցելու:

Ուսումնասիրության 2-րդ փուլում 33 կուսակցության պաշտոնատար անձանց ուղարկվել են 53 գրավոր ծանուցումներ՝ իրենց տարեկան հաշվետվությունները սահմանված կարգով չհրապարակելու կամ Հանձնաժողով չներկայացնելու դեպքերի առթիվ:

Իրականացված ողջ գործողությունների արդյունքում հաշվետու ժամանակահատվածում հնարավոր չի եղել պատշաճ ծանուցել 21 կուսակցության, ուստի, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի դրույթները՝ համապատասխան ծանուցումները տեղադրվել են ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և ուղարկվել այդ կուսակցությունների պաշտոնատար անձանց վերջին հայտնի բնակության վայրի համայնքների ղեկավարներին: Միաժամանակ, այն կուսակցությունների պաշտոնատար անձանց դեպքում, որոնց էլեկտրոնային փոստի հասցեներն առկա են եղել Հանձնաժողովում, ուղարկվել են նաև այդ հասցեներին և նշված 21 կուսակցություններից 4-ը ներկայացրել են պահանջվող տարեկան հաշվետվությունը:

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով 2023 թվականի դեկտեմբերի 6-ին հաստատվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի մասին» հայտարարությունը, համաձայն որի՝ Հանձնաժողովը հայտարարել է Մրցույթ «Վերածնվող Հայաստան», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունների 2022 թվականի տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպության ընտրության նպատակով:

Ստորև ներկայացվում են վիճակահանության փուլի հիման վրա կնքված պայմանագրերի վերաբերալ տեղեկությունները.

	Կուսակցության անվանում	**Աուդիտորական կազմակերպության անվանում**
1	«Վերածնվող Հայաստան»	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ
2	«Հայ յեղափոխական դաշնակցություն»	«Թրաստ Աուդիտ» ՓԲԸ
3	«Բարգավաճ Հայաստան»	«Թրաստ Աուդիտ» ՓԲԸ
4	«Հանրապետություն»	«Թրաստ Աուդիտ» ՓԲԸ
5	«Քաղաքացիական պայմանագիր»	«Թրաստ Աուդիտ» ՓԲԸ

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է նաև պետական ֆինանսավորում չստացող, սակայն աուդիտի ենթակա 3 կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման գործընթաց, որը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ դեռևս ավարտված չի եղել:

Վ.ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Շարունակելով պետության կողմից որդեգրած հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում Հանձնաժողովին վերապահված առանցքային լիազորություններից մեկի՝ պետական պաշտոններում հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրության գործընթացը՝ 2023 թվականի հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է դատավորների թեկնածուների հավակնորդների, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների, դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազների, Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրություն, որոնց արդյունքում իրավասու մարմիններին են ներկայացվել անձանց բարեվարքության վերաբերյալ եզրակացություններ:

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը 2023 թվականի ընթացքում իրականացրել է 483 անձանց բարեվարքության ուսումնասիրություն, ինչի արդյունքում իրավասու մարմիններին են ներկայացվել նույնքան խորհրդատվական բնույթի եզրակացություններ:

Ներկայացված 483 եզրակացություններից 277-ը եղել են դրական,138-ը՝ դրական վերապահումով, 63-ը՝ բացասական: 5 անձի բարեվարքության

վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ գնահատականին կողմ չեն քվեարկել Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, կամ ձայները հավասար են բաշխվել:



Ներկայացված եզրակացությունները վերաբերել են՝

- 76-ը՝ դատավորների թեկնածուների հավակնորդներին.
- 73-ը՝ Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 29-ը՝ Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 7-ը՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուներին.
- 136-ը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց.
- 73-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազներին.
- 35-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց.

- 54-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող անձանց:



Դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 76 եզրակացություններից 55-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 37 թեկնածուներ, իսկ պաշտոնում նշանակվել է 17-ը:

Եզրակացություններից 7-ը եղել են բացասական, որոնցից թվով 3 թեկնածու ընդգրկվել է համապատասխան ցուցակում, այնուհետև նշանակվել են պաշտոնում:

Եզրակացություններից 14-ը եղել են դրական վերապահումով, որոնցից 11-ը ընդգրկվել են համապատասխան ցուցակում, պաշտոնում նշանակվել են 6-ը:



Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների համապատասխան ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց (թեկնածուների) վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 73 եզրակացություններից 40-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 26 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 8-ը, թվով 8 թեկնածու հանվել է ցուցակներից:

Եզրակացություններից 9-ը եղել են բացասական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 5 թեկնածուներ, պաշտոնում նշանակվել են 1-ը, թվով 1 թեկնածու հանվել է ցուցակներից, 2-ը՝ հանվել են ցուցակից:

Եզրակացություններից 23-ը եղել են դրական՝ վերապահումով, որոնցից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 14 թեկնածու, 5-ը նշանակվել են համապատասխան պաշտոնում, թվով 2 թեկնածու հանվել է ցուցակից:

Թվով 1 անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի անդամների ձայները բաշվել են հավասար: Թեկնածուն ընդգրկվել է ցուցակում և նշանակվել է պաշտոնում:



Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 29 եզրակացություններից 14-ը եղել են դրական, որոնցից համապատասխան ցուցակում ընդգրկվել են 11 թեկնածուներ, պաշտոնում ԱԺ կողմից ընտրվել են 3-ը:

Եզրակացություններից 5-ը եղել է բացասական, թվով 3 թեկնածու ընդգրկվել են համապատասխան ցուցակում, ոչ ոք չի ընտրվել Ազգային ժողովի կողմից:

Եզրակացություններից 10-ը եղել է դրական վերապահումով, թվով 7 թեկնածու ընդգրկվել են համապատասխան ցուցակում, ԱԺ կողմից ընտրվել են 3-ը:



Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուների վերաբերյալ կազմված և իրավասու մարմին ներկայացված բարեվարքության 7 եզրակացություններից 4-ը եղել է դրական, որից 3 թեկնածուները ընտրվել են Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում, 2-ը՝ դրական վերապահումով, որից 1 թեկնածու ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում, թվով 1-ը բացասական եզրակացությամբ թեկնածուն չի ընտրվել:



Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության 136 եզրակացություններից 74-ը եղել են դրական, որոնցից ցուցակում ընդգրկվել են 13 թեկնածուներ, 12-ը նշանակվել են պաշտոններում:

Եզրակացություններից 21-ը եղել են բացասական, 1-ը ընդգրկվել ցուցակում և նշանակվել պաշտոնում:

Եզրակացություններից 41-ը եղել են դրական վերապահումով, որից 8 թեկնածուներ ընդգրկվել են ցուցակում և նշանակվել պաշտոններում:



Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 73 եզրակացություններից 41-ը եղել են դրական, որ որոնցից առաջխաղացման ցուցակում ընդգրկվել են 35-ը, պաշտոնում նշանակվել՝ 32-ը: թեկնածու:

Եզրակացություններից 10-ը եղել են բացասական, որից 6 թեկնածուներ ընդգրկվել են ցուցակում, պաշտոններում նշանակվել են 5-ը:

Եզրակացություններից 19-ը եղել են դրական՝ վերապահումով, որոնցից ցուցակում ընդգրկվել են 15-ը, 13-ը նշանակվել են պաշտոններում:

Թվով 3 անձի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ գնահատականին կողմ չեն քվեարկել Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին (2 կողմ, 1 դեմ):





Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 54 եզրակացություններից 27-ը եղել են դրական, ու թեկնածուներից 25-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել համապատասխան պաշտոններում:

Եզրակացություններից 6-ը եղել են բացասական: Թեկնածուներից ոչ ոք չի ընդգրկվել ցուցակում:

Եզրակացություններից 20-ը եղել են դրական՝ վերապահումով: Թեկնածուներից 15-ն ընդգրկվել են ցուցակում, որից 14-ը նշանակվել համապատասխան պաշտոններում, իսկ թվով 1 թեկնածու հրաժարվել է պաշտոնում նշանակվելուց:

1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի ներկայացվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեկնածուի բարեվարքության վերաբերյալ գնահատականին կողմ չեն քվեարկել Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին (2 կողմ, 1 դեմ), թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:



Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված և ներկայացված բարեվարքության 35 եզրակացություններից 22-ը եղել են դրական: Թեկնածուներից 20-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել համապատասխան պաշտոններում:

Եզրակացություններից 4-ը եղել են բացասական: Թեկնածուներից ոչ ոք չի ընդգրկվել ցուցակում:

Եզրակացություններից 9-ը եղել են դրական՝ վերապահումով: Թեկնածուներից 6-ն ընդգրկվել են ցուցակում և նշանակվել համապատասխան պաշտոններում:



5.2 Բարեվարքության ուսումնասիրության գործընթացի արդյունքում ներկայացված եզրակացությունների առանձնահատկությունները

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ***դրական*** եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ ուսումնասիրությունների արդյունքում վերջիններիս բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոնների վերաբերյալ տեղեկություններ Հանձնաժողովը ձեռք չի բերել: Միաժամանակ գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները մեծամասամբ ազդեցություն չեն ունեցել թեկնածուների բարեվարքության գնահատականի վրա այն դեպքերում, երբ, հաշվի առնելով դրանց քանակը և բնույթը, Հանձնաժողովը դրանք չի դիտարկել որպես բացասական գործոն կամ խախտումների մեծ մասը եղել է տեխնիկական բնույթի և (կամ) վերաբերել է թեկնածուների ընտանիքի անդամներին, ինչպես նաև այն դեպքերում, երբ թեկնածուների կողմից ներկայացված պարզաբանումները և տրամադրված լրացուցիչ փաստաթղթերը փարատել են Հանձնաժողովի մոտ թեկնածուի և վերջինիս ընտանիքի անդամների գույքային դրության արժանահավատության առնչությամբ մտահոգություններն ու ռիսկերը:

Հարկ է նաև նշել թեկնածուների կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը, ինչպես նաև դրա վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալ չներկայացնելը գնահատվել են յուրաքանչյուր դեպքով առանձին՝ հաշվի առնելով դրանց քանակը, բնույթը և վաղեմության ժամկետներ:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ***դրական վերապահումով*** եզրակացություններ ներկայացվել են բոլոր այն դեպքերում, երբ՝

- բարեվարքության հարցաթերթիկում և հայտարարագրերում ներկայացված տվյալների, ինչպես նաև Հանձնաժողովին հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների համադրման արդյունքներով դուրս են բերվել թեկնածուների գույքային դրության վերաբերյալ որոշակի անհամապատասխանություններ, որոնք թեև առանձին-առանձին որպես բացասական գործոն չեն դիտարկվել, սակայն իրենց համակցության մեջ ձևավորել են թեկնածուի և նրա ընտանիքի անդամի գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն և ռիսկ: Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ արձանագրված գույքային անհամապատասխանությունների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, բայց նաև բավարար չեն եղել բացասական գնահատականի ձևավորման համար՝ Հանձնաժողովը դրանք նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն.
- թեկնածուները ենթարկված են եղել վարչական կամ կարգապահական պատասխանատվության: Յուրաքանչյուր դեպքի համար Հանձնաժողովն ուսումնասիրել է դրանց քանակը և բնույթը, նշանակված կարգապահական տույժի ժամկետները՝ ինչից ելնելով նշված հանգամանքները Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն: Միաժամանակ, բարեվարքության գնահատականի կազմման համար Հանձնաժողովը վարչական իրավախախտումների՝ ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների քանակը և դրանց բնույթը, դիտարկել է բարեվարքության վրա ազդեցություն ունեցող այլ գործոնների վերաբերյալ տեղեկությունների համադրմամբ.
- թեկնածուների աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագծի առնչությամբ առկա տեղեկությունները, դրանց վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների քանակը և բնույթը, ինչպես նաև դրանց վերաբերյալ անկողմնակալ դիտորդի հնարավոր ընկալումները Հանձնաժողովի մոտ ձևավորել են

թեկնածուների անկախության, անաչառության և ապաքաղաքական լինելու պահանջների ապահովման խոցելիության առնչությամբ որոշակի ռիսկեր:

Թեկնածուների աշխատանքային գործունեության շրջանակներում դրսևորած վարքագծի առնչությամբ Հանձնաժողովը նաև գնահատել է վերջիններիս կողմից կայացված որոշումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման դեպքերին՝ անդրադառնալով նաև դրանց առնչությամբ անկողմնակալ դիտորդի տեսանկյունից հնարավոր ընկալումներին և զանգվածային լրատվության միջոցներում դրանց վերաբերյալ առկա հրապարակումներին:

Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ **բացասական** եզրակացություններ ներկայացվել են հիմնականում այն դեպքերում, երբ՝

- թեկնածուների և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերում ու բարեվարքության հարցաթերթիկում ներկայացվել են էական նշանակություն ունեցող՝ թեկնածուի գույքային դրության վերաբերյալ ոչ ամբողջական տվյալներ, իսկ առանձին դեպքերում ներկայացված տվյալները պաշտոնական այլ աղբյուրներից ստացված տվյալներով չեն հաստատվել, ինչի արդյունքում դուրս են բերվել գույքային դրության առնչությամբ անհամապատասխանություններ, որոնք ձևավորել են վերջիններիս գույքի ծագման աղբյուրների կամ եկամուտների օրինականության վերաբերյալ անարժանահավատություն: Այն դեպքերում, երբ առկա անհամապատասխանությունները, մասնավորապես՝ գույքի ծագման աղբյուրների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, ձևավորելով գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն և ռիսկ, Հանձնաժողովը դրանք գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող բացասական գործոն: Թեկնածուների ընտանիքի անդամների գույքային դրության առնչությամբ Հանձնաժողովի մտահոգություններն առավել ընդգծվել են այն համատեքստում, երբ վերջիններիս ընտանիքի անդամները տարիներ շարունակ զբաղեցրել են հիմնականում պետական պաշտոններ: Թեկնածուների հետ համատեղ բնակվող անձանց՝ հիմնականում ամուսինների և ծնողների, հայտարարագրեր չներկայացնելու փաստը Հանձնաժողովը նույնպես գնահատել է որպես բարեվարքության գնահատականի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հետագայում օրենքով սահմանված կարգով բոլոր հայտարարագրերը ներկայացնելու ուժով Հանձնաժողովը

զրկված չի եղել թեկնածուների և նրանց ընտանիքի անդամների գույքային դրության վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն կատարելու հնարավորությունից.

- թեկնածուների՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը և դրանց վերաբերյալ բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելը, հատկապես հաշվի առնելով կարգապահական տույժերի քանակը, խախտման բնույթը, տույժի խիստ տեսակը, ինչպես նաև կարգապահական տույժերը վերջին տարիներին կիրառված լինելու հանգամանքները, Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարքության գնահատականի վրա ազդող գործոն.
- թեկնածուների աշխատանքային գործունեության շրջանակներում դրսևորած վարքագծի առնչությամբ Հանձնաժողովը նաև գնահատել է վերջիններիս կողմից կայացված որոշումներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտման դեպքի հանգամանքները:

Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում տրամադրված որոշ եզրակացությունների արդյունքներով Հանձնաժողովն արձանագրել է, որ առկա են թեկնածուների բանկային հաշիվների մուտքերի-ելքերի և ստացած եկամուտների միջև էական տարբերություններ, որոնք մեծամասամբ պայմանավորված են եղել թեկնածուների կողմից խաղադրույքներ կատարելու և շահումով խաղերի արդյունքում նույն բանկային հաշիվներով գումար ստանալու հանգամանքով:

Հարկ է նշել նաև, որ մյուս բոլոր խնդիրները, մասնավորապես՝ թեկնածուների կողմից բարեվարքության հարցաթերթիկում տվյալներ չներկայացնելը, թեկնածուներին համապատասխան պաշտոններում նշանակելու դեպքում շահերի բախման հնարավոր իրավիճակները և այլն, Հանձնաժողովը յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրել և դիտարկել է թեկնածուների վերաբերյալ արձանագրված այլ անհամապատասխանությունների հետ համադրությամբ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում բարեվարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում հանցագործության առերևույթ հատկանիշների առկայության հիմքով 8 անձի վերաբերյալ համապատասխան հաղորդումներ են ներկայացվել Գլխավոր դատախազություն, որից 4 անձի վերաբերյալ նախաձեռվել է քրեական վարույթ:

5.3 Բարեվարքության ուսումնասիրությունների գործընթացի կատարելագործմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքները

Հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց Հանձնաժողովը փոխել է իր մոտեցումները որոշ տվյալների ուսումնասիրության և գնահատման չափանիշների տեսանկյունից: Որպես օրինակ կարելի է նշել զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված տվյալների կիրառությունն ու ազդեցությունը եզրակացությունների կազմման գործընթացում:

Հանձնաժողովին վերապահված՝ բարեվարքության ուսումնասիրության լիազորության համատեքստում խիստ ակնհայտ են նաև թեկնածուների վարքագծային փոփոխությունները, ինչը կանխարգելիչ գործառույթի ցայտուն օրինակ է հանդիսանում: Թեկնածուների վարքագծային փոփոխությունները Հանձնաժողովի կողմից մշտապես հիմք են հանդիսանում նախկինում տրված եզրակացությունների վերանայման համար:

Կոռուպցիայի կանխարգելման մանդատի շրջանակներում, հաշվի առնելով Հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացությունների արդյունքները, 37 թեկնածու (ընդհանուր 52 անձ՝ այդ թվում ընտանիքի անդամներ) դիմել է Հանձնաժողովին՝ բարեվարքության ուսումնասիրության իրականացման գործընթացում հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանություններն ուղղելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ ի կատարումն դեկտեմբեր ամսինկնքված՝ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ II»-ի ԵՄ բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրի շրջանակում ամրագրված պարտավորությունների՝ շրջանառության մեջ է դրվել օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով 2024 թվականից նախատեսվում է իրականացնել ինչպես Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց բարեվարքության ուսումնասիրություն, այնպես էլ բոլոր դատավորների, դատախազների, քննիչների, օպերատիվ գործառույթներ իրականացնող անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն:

Միաժամանակ, գործընթացի կատարելագործման, ինչպես նաև հանրային հաշվետվողականությունը բարձրացնելու նպատակով, օրենսդրական փոփոխությունների արդյունքում ակնկալվում է իրականացնել են հետևյալ բարեփոխումները. նախատեսվում է ընթացիկ բարեվարքության

ուսումնասիրության արդյունքում տրամադրված եզրակացությունների եզրափակիչ մասերը դարձնել հրապարակային, իսկ բացասական եզրակացությունների հիմքով՝ նախատեսել կարգապահական վարույթներ: Դրանով Հանձնաժողովը նպատակ է հետապնդում իր գործողություններում առավել թափանցիկ լինել հանրության առջև՝ ավելի բարձրացնելով իրավասու մարմինների և ուսումնասիրության գործընթացի հանրային հաշվետվողականությունը:

Գործընթացի թափանցիկությանն ու հանրային հաշվետվողականության բարձրացմանը կխթանի նաև այն, որ իրավասու մարմնի կողմից բացասական կամ դրական՝ վերապահումով եզրակացությունների դեպքում թեկնածուների նշանակման որոշումը կլինի պատճառաբանված ու հրապարակային: Վերը նշված լիազորությունների արդյունավետ իրականացման առնչությամբ Հանձնաժողովին անհրաժեշտ կլինեն համապատասխան մասնագիտական և մարդկային որակներով օժտված նոր աշխատակիցներ: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ Հանձնաժողովը նաև ձեռնամուխ է եղել կառուցվածքային ստորաբաժանումների և հաստիքացուցակի վերաբերյալ Կառավարության որոշման նախագծի մշակմանը, իսկ նախագիծը ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ հետագա ընթացքն օրենքով սահմանված կարգով ապահովելու նպատակով:

VI. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կոռուպցիայի կանխարգելման հարցում առանցքային նշանակություն ունեն Հանձնաժողովին օրենսդրությամբ վերապահված՝ առանձին տեսակի վարույթներ իրականացնելու լիազորությունները, ինչպես նաև կոնկրետ գործերով դրանց իրացման արդյունքում կայացված որոշումներն ու եզրակացությունները:

Հատկանշական է այն, որ վերջին տարիներին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հանձնաժողովին են վերապահվել այնպիսի լիազորություններ, որոնք ուղղված են վարչական վարույթների իրականացմանը հանրային իրավահարաբերություններից ծագող՝ կոռուպցիայի կանխարգմանն ուղղված այնպիսի խախտումների կապակցությամբ, ինչպիսիք են կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին, ինչպես նաև նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող խախտումները:

Հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակատվածում ***իրականացրել է՝***

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված՝
  - հայտարարագրմանն առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ.
  - նվերների ընդունման սահմանափակումների առնչվող վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթներ.
  - կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման հետ կապված իրավախախտումների վերաբերյալ վարույթներ.

- «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ:

2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԿՀ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ*[2]



6.1 Հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, այն է՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, գրավոր ծանուցման հիման վրա հայտարարագիր չներկայացնելու խախտումների հիմքով հարուցվել են **թվով 20** վարույթներ:

[2]Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից 2023 թվականի ընթացքում իրականացվել և եզրափակվել են 2022 թվականին հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների վերաբերյալ վարույթներ, նաև՝ իրավիճակային շահերի բախման դեպքի վերաբերյալ վարույթ, տես Հաղորդման «*6.4 Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման դեպքի վերաբերյալ վարույթներ» բաժնում:*

Նշված վարույթները, ինչպես նախորդիվ Հանձնաժողովի կողմից նույնանման փաստական հանգամանքներով կայացված որոշումներով, երբ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից գործի քննության ընթացքում ներկայացվել են այն հայտարարագրերը, որոնց կապակցությամբ հարուցվել էին կոնկրետ վարույթները, նշված պարագայում *ևս արարքի նվազ նշանակության հիմքով* եզրափակվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի կարճմամբ՝ խախտում թույլ տված անձանց հայտարարելով բանավոր նկատողություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է հայտարարագրվող տվյալներին առնչվող վարչական իրավախախտման վերաբերյալ **2** վարույթ, որոնց համար հիմք են հանդիսացել հայտարարագրերի վերլուծության արդյունքում հայտնաբերված՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավախախտումները: Նշված խախտումները հայտնաբերվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի (ԱԺ պատգամավորի) և վարչական պաշտոն զբաղեցնող անձի (փոխոստիկանապետի) 2021 թվականի տարեկան հայտարարագրերում:

Տվյալ վարույթներով իրականացված գործի քննության արդյունքում Հանձնաժողովը կիրառել է վարչական տուգանք՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելու արարքի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

6.2 Նվերներ ընդունելու սահմանափակումների խախտումների վերաբերյալ վարույթներ

2023 թվականի հունվարի 2-ին ուժի մեջ մտած ՀՕ-540-Ն օրենքով «Հանրային ծառայության մասին» օրենքում և հարակից օրենքներում կատարված փոփոխություններով հանձնաժողովին վերապահվեց նվերների ընդունման սահմանափակումների նկատմամբ հսկողության գործառույթը, ինչպես նաև այդ խախտումների կապակցությամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթների իրականացման իրավասությունը:

Այսպես, նշված բնույթի խախտումների մասով առաջին անգամ գործի քննություն իրականացնելու և իրավակիրառ պրակտիկա ձևավորվելու առիթ է հանդիսացել քրեակատարողական հիմնարկի կողմից Հանձնաժողովին

հասցեագրված գրությունը, որով Հանձնաժողովին, որպես նվերների ընդունման սահմանափակումների նկատմամբ հսկողության գործառույթ իրականացնող մարմնի, ներկայացվել էին քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների նկատմամբ հարուցված ծառայողական քննության նյութերը, իսկ համապատասխան քննությունը կասեցվել էր մինչև իրավասու մարմնի կողմից վարչական պատասխանատվության հարցի լուծումը:

Նշվածով պայմանավորված՝ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 166.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, այն է՝ նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման հիմքով հարուցվել են **թվով 3** վարույթներ: Հանձնաժողովը նշված գործերով հաստատված է համարել նվերների ընդունման սահմանափակումների խախտումները, արդյունքում խախտում թույլ տված անձանց՝ կոնկրետ պարագայում քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների նկատմամբ կիրառել է վարչական տույժեր[3]):

6.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման հետ կապված խախտումների վերաբերյալ վարույթներ

2022 թվականի մայիսի 20-ին ուժի մեջ մտած ՀՕ-115-Ն սահմանադրական օրենքով «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում կատարված փոփոխության արդյունքում Հանձնաժողովին վերապահվեց կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության ու ամբողջականության ստուգման (նաև՝ կուսակցությունների պետական ֆինանսավորման շրջանակներում) գործառույթը, որի առնչությամբ Հանձնաժողովին վերապահվեցին մի շարք այլ վարութային գործառույթներ, մասնավորապես, կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ վարույթների իրականացումը:

Այսպես, 2023 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, այն է՝ կուսակցությունների 2021 և 2022 թվականների ընթացքում ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվությունները օրենքով սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողով

[3] (տե՛ս՝ http://cpcarmenia.am/files/legislation/1086.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/1087.pdf, http://cpcarmenia.am/files/legislation/1085.pdf

չներկայացնելու կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետում չհրապարակելու հիմքով հարուցվել են թվով **107** վարույթներ, որոնցից հաշվետու տարվա ընթացքում եզրափակվել են թվով **49** վարույթներ: Նշված վարույթներից թվով **58** գործերի քննությունները սահմանված վարութային ընթացակարգերի պահպանմամբ մեծամասամբ իրականացվել են հաշվետու տարվան հաջորդող ամիսներին: Ընդ որում, նշված վարույթները հաշվետու ժամանակահատվածում չեզրափակելը պայմանավորված է եղել գործերի քննությունների կասեցմամբ՝ ելնելով վարչական մարմնի կողմից վարույթի մասնակցին գործի քննությանը ներկայություն ապահովելու հնարավորության՝ պատշաճ ծանուցված լինելու հիմքերի ապահովման անհրաժեշտությունից: Հաշվետու տարվա ընթացքում եզրափակված վերոնշյալ վարույթներով *արարքի նվազ նշանակության հիմքով* կուսակցությունների *պատասխանատու պաշտոնատար անձինք ազատվել են պատասխանատվությունից և վերջիններիս օրենքով սահմանված կարգով հայտարարվել է բանավոր դիտողություն: Հանձնաժողովի նման եզրահանգման համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ավարտը ներկայացվել են տարեկան հաշվետվությունները և դրանց հրապարակման փաստը վկայող ապացույցները: Միաժամանակ, համակցության մեջ գնահատվել է նաև այն հանգամանքը, որ Օրենսգրքի 189.13-րդ հոդվածով նախատեսված դրույթը խախտված լինելու առնչությամբ արարքը հայտնաբերվել և խախտման կապակցությամբ ծանուցումներ են ներկայացվել առաջին անգամ:*

6.4 Անհամատեղելիության պահանջների խախտումների և շահերի բախման դեպքի վերաբերյալ վարույթներ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացվել և եզրափակվել են **նախորդ հաշվետու ժամանակահատվածում հարուցված**՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ թվով 8 վարույթներ:

Մասնավորապես, անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Ազգային ժողովի պատգամավորների նկատմամբ թվով 6[4] վարույթները հարուցվել էին Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Նախաձեռնության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների շրջանակում իրականացված պատգամավորների 2021 թվականի տարեկան շահերի հայտարարագրերի ստուգմամբ հայտնաբերված առերևույթ խախտումները, որոնք հիմնականում առնչվել են առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերը հավատարմագրային կառավարման հանձնված լինելու վերաբերյալ տվյալները հայտարարագրերում ներկայացված չլինելու դեպքերին: Նշված վարույթները եզրափակվել են հաշվետու ժամանակահատվածում՝ խախտման բացակայության մասին Հանձնաժողովի եզրակացությունների ընդունմամբ:

Նման եզրահանգման համար, մասնավորապես, Հանձանաժողովի կողմից հիմք են ընդունվել վարույթի ընթացքում իրավասու մարմիններից ձեռք բերված տվյալներով հաստատված այն փաստական հանգամանքները, որոնց համաձայն՝ առևտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցն ող անձանց կողմից հավատարմագրային կառավարման հանձնված չլինելը՝ իրացման շրջանառության, ինչպես նաև շահույթի ստացման բացակայության պարագայում, որակվել է որպես «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջի՝ տվյալ գործերով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքին առնչվող դրույթների ձևական առումով խախտում և չի հանգեցրել անհամատեղելիության պահանջների բովանդակային խախտման:

Իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի առթիվ Շիրակի մարզպետ Ն.Բ.-ի նկատմամբ նախորդ տարի հարուցված վարույթի հարուցման հիմք է հանդիսացել անձի՝ Հանձնաժողովին հասցեագրված գրավոր դիմումը, որով դիմումատուն հայտնել է, որ մարզպետը դրսևորել է կամայական վարքագիծ՝ իր հետ փոխկապակցված անձին՝ եղբորը նշանակելով պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի անդամ:

[4] http://cpcarmenia.am/files/legislation/930.pdf,
/http://cpcarmenia.am/files/legislation/931.pdf,
/http://cpcarmenia.am/files/legislation/932.pdf
/http://cpcarmenia.am/files/legislation/985.pdf
/http://cpcarmenia.am/files/legislation/950.pdf
/http://cpcarmenia.am/files/legislation/951.pdf

Նշված վարույթը եզրափակվել է մարզպետի գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության մասին եզրակացության ընդունմամբ[5] : Ընդ որում, Հանձնաժողովի կազմավորման օրվանից առաջին անգամ է մարմնի կողմից իրականացված վարչարարությամբ ընդունվում շահերի բախման իրավիճակի առկայության մասին համապատասխան եզրակացություն՝ ձևավորելով իրավակիրառ պրակտիկա նաև նշված ոլորտում:

Սույն գործով Հանձնաժողովը հաստատված է համարել, որ մարզպետը իր որոշմամբ իրացրել է իր լիազորությունները՝ եղբորն առաջադրելով «Ախուրյանի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ, ինչը ողջամտորեն կարող է մեկնաբանվել իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել, որը տվյալ դեպքում հանգեցրել է իր հետ փոխկապակցված անձի՝ եղբորը՝ պաշտոնի նշանակմանը:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Երևանի քաղաքապետի տեղակալ Տ.Ա.-ի նկատմամբ վարույթի հարուցման հիմք է հանդիսացել լրատվամիջոցի հրապարակումը, որում տեղ գտած նյութի համաձայն՝ պաշտոնատար անձը հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նախագահ: Հաշվետու ժամանակահատվածում նշված վարույթը կասեցվել է, և գործով ձեռք բերված նյութերը Հանձնաժողովի համապատասխան պատճառաբանված որոշմամբ ուղարկվել են Գլխավոր դատախազություն՝ իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ գործողություններ կատարելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով Հանձնաժողովի կողմից հարուցվել են ևս թվով **5** վարույթներ:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովի պատգամավոր Ա.Զ.-ի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով թվով **1** վարույթը հարուցվել է օրենքով նախատեսված այլ (անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման) վարույթ իրականացնելիս առերևույթ խախտման հայտնաբերման հիմքով, այն է՝ պատգամավորի կողմից իր պաշտոնավարման ընթացքում գիտական, կրթական աշխատանքից բացի վճարովի այլ աշխատանքի կատարման առերևույթ խախտման կապակցությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում նշված վարույթը կասեցվել է, և գործով ձեռք բերված նյութերը Հանձնաժողովի համապատասխան պատճառաբանված որոշմամբ ուղարկվել են Գլխավոր դատախազություն՝ իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ գործողություններ կատարելու համար:

[5] տե՛ս եզրակացությունը՝ http://cpcarmenia.am/files/legislation/994.pdf):

Ինչ վերաբերում է հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով հարուցված մյուս վարույթներին, ապա նշված վարույթներից **3**-ը հարուցվել էին Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Նախաձեռնության համար հիմք են հանդիսացել մի դեպքում (ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցված վարույթ) Հանձնաժողովի կողմիցդատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուի վերաբերյալ բարեվարքության ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված առերևույթ խախտման հատկանիշները, մյուս երկու դեպքերում՝ Հանձնաժողովի կողմից Կառավարության անդամների և Կառավարությանը ենթակա մարմինների ղեկավարների ու նրանց տեղակալների 2022 թվականի շահերի տարեկան հայտարարագրերի ստուգման արդյունքում հայտնաբերված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում զբաղեցնելու առերևույթ խախտման հատկանիշները:

Գլխավոր դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ իրականացված թվով **1** վարույթ ևս հարուցվել է Գլխավոր դատախազության՝ «Դատախազության մասին» օրենքի 49-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները պահպանված լինելու հարցի վերաբերյալ դիմումի հիման վրա:

Նշված վարույթներից **1-ը՝** (Գեղարքունիքի մարզի դատախազությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ Գ.Ա-ի նկատմամբ հարուցված վարույթը.) եզրափակվել է անհամատեղելիության պահանջների բովանդակային խախտման բացակայության վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությամբ[6] :

Հանձնաժողովի նման եզրահանգման համար, մասնավորապես, հիմք է ընդունվել այն, որ թեև օրենքի ձևական տեսանկյունից խախտվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ տարածվող անհամատեղելիության պահանջները, և դա, մասնավորապես, դրսևորվել է պաշտոնատար անձի կողմից պաշտոն ստանձնելուց հետո առևտրային կազմակերպության՝ իր բաժնեմասն օրենքով սահմանված կարգով հավատարմագրային կառավարման չհանձնելու արարքով, ինչպես նաև առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնելու հանգամանքով պայմանավորված (որպես գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում) ընկերության անունից Պետական եկամուտների կոմիտեին հասցեագրելով դիմում՝ ընկերության առնցանց լիազոր նշանակելու մասին, ինչն օրենքի իմաստով ներկայացուցչական բնույթի գործողություն է: Այնուամենայնիվ, վարույթի ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝

[6] տե՛ս եզրակացությունը՝ http://cpcarmenia.am/files/legislation/1179.pdf

առևտրային կազմակերպության գործունեությունը 2011 թվականի հունվարի 31-ից ժամանակավոր դադարեցված է եղել և առևտրային կազմակերպությունը 2017-2022 թվականների ընթացքում իրացման շրջանառություն, ինչպես նաև հասցեագրված հարկվող շահույթ չի ունեցել, պաշտոնատար անձը տվյալ ընկերությունից որևէ եկամուտ չի ստացել: Հանձնաժողովի նման եզրահանգման համար մեկ այլ էական հանգամանք է դիտարկվել այն, որ վերջինիս կողմից 2017 թվականի սեպտեմբերի 4-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում տվյալ է ներկայացվել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում **բաժնեմասնակցության** վերաբերյալ:

Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոն զբաղեցնող անձ Վ.Ա.-ի նկատմամբ հարուցված թվով 1 վարույթը կարճվել է[7]: Նշված վարույթի կարճման համար հիմք է հանդիսացել մի շարք հանգամանքների համակցությունը: Մասնավորապես, ըստ գործում առկա փաստական տվյալների՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ վերացնելու Օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների խախտումը: Արդյունքում, վերջինս 2023 թվականի դեկտեմբերի 5-ից չի հանդիսացել համայնքի ավագանու անդամ, իսկ համապատասխան համայնքի անդամի մանդատը փաստացի դադարած է, հետևաբար նաև, գործով քննարկված հանգամանքների շրջանակում վերացվել է պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձի կողմից այլ՝ համայնքի ավագանու անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու խախտումը, որի կապակցությամբ պետք է ընդունվեր համապատասխան եզրակացություն: Ընդ որում, Հանձնաժողովի նման եզրահանգման համար հիմք է հանդիսացել նաև այն, որ գործով քննարկվող խախտումը, ըստ ներկայացված պարզաբանման, դրսևորվել է՝ ելնելով վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենքի ձևակերպումներով պայմանավորված՝ պաշտոնների համատեղելիության տեսանկյունից տարընկալման հանգամանքից:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվող անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով Կառավարությանը ենթակա մարմնի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձ Ա.Կ-ի և Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության

[7] տե՛ս որոշումը՝ http://cpcarmenia.am/files/legislation/1251.pdf

նկատմամբ հսկողության վարչության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ Գ.Ի-ի նկատմամբ հարուցված թվով **2** վարույթները գտնվել են ընթացիկ փուլում և եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող հունվար ընթացքում:[8]

Իսկ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքի հիմքով նախորդող հաշվետու ժամանակահատվածներում իրականացվող թվով երկու գործով նյութերը Գլխավոր դատախազություն ուղարկելու հիմքով կասեցված վարույթները վերսկսվել և եզրափակվել են հաշվետու տարվան հաջորդող մարտ ամսվա ընթացքում[9]:

Միաժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ հաշվետու ժամանակահատվածում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով իրականացվող ընթացիկ վարույթում քննարկվող փաստական հանգամանքների և գործող օրինադրույթների պահանջների համադրմամբ, Հանձնաժողովն արձանագրել է գույքի (քննվող վարույթով պաշտոնատար անձի բաժնեմասի) հավատարմանագրային կառավարման ինստիտուտի նկատմամբ վերահսկողական մեխանիզմի արդյունավետության խնդիրներ:

Մասնավորապես, մինչև 2022 թվականի դեկտեմբերի 7-ին ընդունված ՀՕ-543-Ն օրենքի ուժի մեջ մտնելը (ուժի մեջ է մտել 2023 թվականի հունվարի 3-ին) առևտրային կազմակերպության՝ մասնավորապես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկությունների գրառման պահանջ օրենսդրությամբ սահմանված չի եղել: Հետևաբար, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը առևտրային կազմակերպության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ պարունակող միասնական պետական գրանցամատյանը սկսել է վարել 2023 թվականի հունվարի 3-ից հետո կնքվող և գործակալություն ներկայացվող հավատարմագրային կառավարման պայմանագրերի մասով:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև նշված իրավակարգավորումների ուժի մեջ մտնելը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը հավատարմագրային կառավարման պայմանագրերի պարտադիր հաշվառման միասնական պետական գրանցամատյան չի վարել, Հանձնաժողովը օբյեկտիվորեն հնարավորություն չունի ձեռք բերելու առևտրային կազմակերպության բաժնեմասը

[8] 1267.pdf (cpcarmenia.am)
1301.pdf (cpcarmenia.am)
[9] http://cpcarmenia.am/files/legislation/1373.pdf
http://cpcarmenia.am/files/legislation/1379.pdf

հավատարմագրային կառավարման հանձնելու փաստական հանգամանքի վերաբերյալ որևէ այլ ապացույց, որպիսի հանգամանքներում վարչական մարմինն առաջնորդվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ապացուցման բեռի կանոնակարգումների, ինչպես նաև նույն օրենքով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունք հանդիսացող հավաստիության կանխավարկածով, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

VII. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶՍՊՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակում կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևորվում է հանրային և մասնավոր հատվածում կոռուպցիոն ռիսկերի կառավարումը՝ որպես պետական պաշտոնյաների գործառույթներին բնորոշ կոռուպցիոն ռիսկերի մասին իրազեկվածության, պետական ֆինանսների կառավարման թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման, պետական կառավարման համակարգում կոռուպցիայի վտանգների մասին պարբերական հաշվետվությունների հրապարակման, մասնավոր կազմակերպությունների գործունեության թափանցիկության խրախուսման և վերջիններիս գործունեությունը կարգավորող ընթացակարգերի չարաշահումների կանխարգելման արդյունավետ մեխանիզմ:

Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործողությունները փորձ էին անում թիրախավորել կոռուպցիայի դրսևորումները և ոչ դրանց առաջացման խորքային պատճառները: Սակայն կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի արդյունավետ կառավարման բացակայության դեպքում հանրային ընկալման տիրույթում և պետության կողմից մատուցվող ծառայությունների առնչությամբ ձևավորվում է բացասական վերաբերմունք, իրականացված առանձին աշխատանքների արդյունքների նկատմամբ ոչ համարժեք պատկերացում: Կոռուպցիոն ռիսկի բացահայտման նպատակը սովորաբար լրացնելն է փաստացի բացերը, և այն կարող է բացահայտել հիմքը, որը հետագայում վերաճում է կոռուպցիոն դրսևորման: Կոռուպցիոն ռիսկը հավասարեցվում է համակարգի կամ գործընթացի ներսում ինստիտուցիոնալ խոցելիության հետ, որը կարող է նպաստել կոռուպցիոն գործելաոճի զարգացմանը:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտությանն անդրադարձ է կատարվում ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ, որը վարչական կոռուպցիայի հաղթահարման, հանրային կառավարման մարմիններում և

ոլորտներում թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության բարձրացման, օրինականության ապահովման, կոռուպցիոն ռիսկերի ու ռիսկեր ծնող գործոնների չեզոքացման համար առանցքային է համարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, համայնքապետարանների աշխատակազմերում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգի ներդրումը՝ հիմնված միջազգայնորեն ընդունելի չափանիշների և կառուցակարգերի, միջազգային հակակոռուպցիոն կազմակերպությունների կողմից տրված առաջարկությունների վրա: Դրականորեն պետք է արձանագրել, որ նոր ռազմավարությունը գործուն կառուցակարգեր է նախատեսում հանրային և մասնավոր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի կառավարման ներդրման ապահովման, ինչպես նաև իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն գնահատման ինստիտուտի արդյունավետ գործարկման երաշխավորման ուղղությամբ (Հավելված 2, գործողություններ 1.7, 1.9, 4.3): Ռազմավարության գործողությունների ծրագրով նախատեսվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման համակարգ ներդնելուն ուղղված քայլերի իրականացում՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահելով կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման մեթոդաբանության մշակման, հաստատման և մի շարք այլ իրավասություններ:

Միջազգային և ներպետական կարգավորումներին զուգահեռ, կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրման նշանակալի կարիքի մասին են փաստում նաև 2022 թվականին Հայաստանում իրականացված հանրային հարցումների արդյունքները: Այսպես, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից 2022 թվականին հրապարակված՝ «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն» զեկույցն[10] արձանագրում է, որ ծառայությունների և ոլորտների կոռումպացվածության վերաբերյալ հարցվածների մոտ 55%-ը կոռուպցիան տարածված է համարել առողջապահության ոլորտում: Կոռումպացված լինելու տեսանկյունից, ըստ քաղաքացիների, երկրորդ տեղում է լրատվությունը (22,6%), ապա ընտրական գործընթացները (21,4%) (ընտրահանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթիկների հաշվարկ և այլն): Հարցվածների ընկալմամբ կոռուպցիայի տարածմանը նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են հանրության կողմից օրենքներին չհետևելը

[10] Տե՛ս՝ https://www.crrc.am/hy/research/armenia-integrity-project-public-perception-of-corruption/

(16%), օրենքների անկատարությունը (15%), տնտեսական ծանր վիճակը/աղքատությունը (14%) և պետության կողմից օրենքների կիրառումը չապահովելը (14%):

Համաշխարհային բանկի աջակցությամբ հանրային ծառայողների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հանրային ծառայողների դիտարկմամբ կոռուպցիոն ռիսկերին առավել հակված գործառույթներն են պետական գնումները, վերահսկողությունը և ֆինանսական կառավարումը:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարումը կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ է, որը մեծ կարևորություն ունի հանրային և մասնավոր հատվածի համար, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել համակարգի ֆունկցիոնալ ու կառավարման բացերը և գործել առավել արդյունավետ: Այն կոռուպցիայի կանխարգելման ցանկացած ռազմավարության և բարեվարքության քաղաքականության էական և անբաժանելի մասն է, որը հնարավորություն է տալիս կառույցներին բացահայտել կառավարման, կառուցվածքային, վերահսկողական և այլ մակարդակների թույլ կողմերը, որոնք կարող են նպաստել կոռուպցիայի առաջացմանը: Այն ապահովում է ռիսկերի վրա հիմնված շրջանակ, որն օգնում է մշակել կոռուպցիոն ռիսկերի նվազեցման գործողությունների ծրագրեր, որոնք արդյունավետորեն նվազագույնի են հասցնում կոռուպցիոն ռիսկերին կառույցի ենթարկվածությունը:

7.1. Կոռուպցիոն ռիսկերի կառավարման մեթոդաբանությունների մշակումը և պիլոտային գործարկումը

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովը կարևոր քայլեր է ձեռնարկել կոռուպցիոն ռիսկերի կառավարման հենասյունը կառուցելու ուղղությամբ իր օրինական լիազորությունների չափով, մասնավորապես, «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական հատվածում» ԵՄ Թվինինգ ծրագրի 4-րդ բաղադրիչի շրջանակում Հանձնաժողովը մշակել է պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որի հիման վրա մեկնարկել են կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատումները պետական մասնակցությամբ երեք կազմակերպություններում՝ «Հայաստան պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (ԱՆԻՖ), «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Երևանի համար 119 մանկապարտեզ» համայնքային ոչ

առևտրային կազմակերպություն: Կազմակերպությունների հետ իրազեկման բնույթի մի շարք հանդիպումներից հետո վերջիններս Հանձնաժողովի մեթոդական աջակցությամբ իրականացրել են ինքնագնահատում, որի արդյունքները նախատեսվում է ամփոփել 2024 թվականի առաջին եռամսյակում՝ ԵՄ թվինինգ ծրագրի հերթական առաքելության շրջանակում[11]: Այս գործընթացը նախևառաջ ընդգծեց պետական մասնակցությամբ կազմակերպությունների կարողությունների զարգացման, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության միջազգային ստանդարտների ներդրման անհրաժեշտությունը: Պիլոտային գնահատումների արդյունքներն ամփոփվել են 2024 թվականի հունվարին, ինչի արդյունքում մշակվել են համապարփակ զեկույց և գործողությունների ծրագրեր, որոնք առաջիկայում կներկայացվեն պատասխանատու պետական մարմինների և շահագրգիռ կողմերի քննարկմանը:

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովը քայլեր է ձեռնարկել նաև հանրային կառավարման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի պիլոտային գնահատման ուղղությամբ: Այսպես, կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ խոցելիության գնահատման և միջոցառումների իրականացման (արտաքին գնահատում) մեթոդաբանության նախագծի պիլոտային գործարկման նպատակով Հանձնաժողովը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, որի շրջանակում իրականացվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատում հաշմանդամության գնահատման համակարգում: Գործընթացի իրականացումն ապահովելու նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ներգրավված են Հանձնաժողովի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մասնագիտական ստորաբաժանումների, ինչպես նաև ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի ներկայացուցիչներ:

Գնահատման առաջին փուլում, որը ենթադրում է համակարգի առանցքային գործընթացների գնահատում, իրականացվել են հետևյալ գործողությունները.

1) գնահատման ոլորտի ընտրություն.

2) կոռուպցիոն ռիսկերի գնահատման պաշտոնական հաստատման ստացում համապատասխան պետական մարմնից.

3) գործողությունների ծրագրի մշակում.

4) նախնական և ընթացիկ հաղորդակցության ապահովում ոլորտի պատասխանատու նախարարության և այլ շահագրգիռ կողմերի հետ.

[11] Տե՛ս՝ https://www.youtube.com/watch?v=31g-rM-iTng

5) հաղորդակցության արձանագրումների համակարգի ստեղծում և կառավարում.

6) աշխատանքային խմբի աշխատակարգի մշակում.

7) աշխատանքային խմբի ձևավորում և աշխատանքների համակարգում.

8) ոլորտային փաստաթղթերի հավաքագրում (իրավական ակտեր, ուղեցույցներ և այլն).

9) ոլորտային փաստաթղթերի ուսումնասիրություն և քննարկումների կազմակերպում աշխատանքային խմբի շրջանակում.

10) ոլորտի գործընթացների քարտեզագրում.

11) հարցաշարի մշակում և լրացում.

12) հարցաշարի արդյունքների վերլուծություն:

Գնահատման երկրորդ փուլում նախատեսվում է բացահայտած խնդիրների խորքային պատճառները վերհանելու և դրանց վերաբերյալ լուծումներ առաջարկելու նպատակով որակական մեթոդների (անհատական և խմբային հարցազրույցներ, ֆոկուս խմբային քննարկումներ և այլն) կիրառման միջոցով իրականացնել հետազոտություն՝ համագործակցելով ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի հետ:

7.2. Կոռուպցիոն ռիսկերի կառավարման և դրա կարևորության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության համատեքստում մեծ կարևորություն ունի Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացումը, շահագրգիռ կողմերի ներգրավմամբ վերապատրաստումների և հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպումը: Այս ուղղությամբ 2023 թվականի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել է մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, 2023 թվականի սեպտեմբերի 18-ից 22-ը ԵՄ թվինինգ ծրագրի փորձագետների կողմից Հանձնաժողովի շուրջ 12 աշխատակիցների համար կազմակերպվել է վերապատրաստում պետական մասնակցությամբ կազմակերպություններում բարեվարքության համակարգի և կոռուպցիոն ռիսկերի կառավարման վերաբերյալ՝ տեսական և գործնական դասընթացների զուգակցմամբ[12]:

[12] Տե՛ս՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/09/22/1/

Ծրագրի շրջանակում Հանձնաժողովի կողմից մեկ այլ վերապատրաստում կազմակերպվել է պետական մասնակցությամբ կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի համար[13]: Այսպես, 2023 թվականի նոյեմբերի 21-22-ին Հանձնաժողովի կողմից անցկացվել է վերապատրաստում «Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարում» թեմայով, որին մասնակցում էին ինչպես պետական մասնակցությամբ կազմակերպությունների և համապատասխան նախարարությունների, այնպես էլ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, Հաշվեքննիչ պալատի, Երևանի քաղաքապետարանի և ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Վերապատրաստման ընթացքում մասնակիցներին ներկայացվել են կոռուպցիոն ռիսկերի կառավարման ազգային և միջազգային շրջանակը (Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (UNCAC), G20-ի բարձր մակարդակի սկզբունքներ, ՏՀԶԿ ուղեցույցներ), ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի մեթոդաբանության հիման վրա գնահատման գործընթացի, այդ թվում՝ ռիսկերի նվազեցման միջոցառումների մշակման և դրանց կատարման մոնիտորինգի վերաբերյալ թեմաներ:

Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ կատարվող աշխատանքը Հանձնաժողովը ներկայացրել է նաև մի շարք հանրային միջոցառումներում[14]:

Կոռուպցիոն ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության ապահովման տեսանկյունից Հանձնաժողովը շարունակում է բախվել հետևյալ խնդիրներին.

1. Համակարգի ներդրումից բխող գործառույթի իրականացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների և գործիքակազմի բացակայությունը սահմանափակում է Հանձնաժողովի կողմից իր գործառույթի իրականացումը: Հետևաբար, անհրաժեշտ է Հանձնաժողովին վերապահել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարման գործիքակազմը, ինչը հնարավորություն կտա ամբողջությամբ տեղայնացնել Հանձնաժողովի՝ կոռուպցիայի կանխարգելման մանդատից բխող գործառույթների արդյունավետ իրացումը:

[13] Տե՛ս՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/11/23/1/
[14] Տե՛ս՝ http://cpcarmenia.am/hy/news/item/2023/11/28/1/

2. Օրենսդրական համակարգի հստակեցմանը զուգահեռ անհրաժեշտ կլինի ապահովել Հանձնաժողովի՝ համապատասխան մասնագիտական և մարդկային որակներով օժտված նոր աշխատակիցներով համալրումը:

VIII. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթներից բխող իրավիճակի նկարագրություն

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված ՀՀ 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ՝ որպես ռազմավարական 3-րդ նպատակ սահմանված է հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման կառուցակարգերի կատարելագործումը[15], ըստ որի՝ Հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումները պետք է ուղղված լինեն նրան, որ հասարակության յուրաքանչյուր անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստի իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական կենսագործմանը:

Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հասարակության շրջանում հակակոռուպցիոն բարեփոխումների նկատմամբ վստահության բարձրացումը, որն իր հերթին, կարող է խթանել կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների առավել ակտիվ մասնակցությունը:

Ուշադրության է արժանի նաև այն, որ իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ առկա է անմիջական կապ՝ քաղաքացու կրթական, իրազեկման մակարդակի և կոռուպցիոն դրսևորումները ոչ կոռուպցիոն դրսևորումներից տարանջատելու, կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ իրենց կարողությունների նկատմամբ հավատի և պատասխանատվության զգացումի միջև: Մեկ այլ ուսումնասիրության համաձայն՝ նրանք, ովքեր ունեն ավելի բարձր կրթամակարդակ, ավելի քիչ հանդուրժող են կոռուպցիայի նկատմամբ: Այսինքն՝ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ոչ միայն կրթամակարդակի և կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության և պատասխանատվության միջև, այլև՝ հակակոռուպցիոն վարքագծի դրսևորման հավանականության:

[15] Տե՛ս՝ « ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությունը»

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով[16] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) վերապահված է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և միջոցառումների իրականացում:

Նշված համատեքստում Հանձնաժողովը հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղություններով 2023 թվականին իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ վերապատրաստումներ, իրազեկման արշավներ, բաց դասեր՝ նախատեսված միջին և ավագ դպրոցների աշակերտների համար և այլն:

8.2 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Կրթական միջոցառումների և հանրային իրազեկման հիմնական նպատակը հասարակության գիտակցության մեջ կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման մշակույթի ստեղծումն ու ամրապնդումն է:

Հանձնաժողովը կարևորում է երիտասարդ սերնդի հետ ակտիվ երկխոսությունն ու համագործակցությունը ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության շրջանակներում: Կրթության այս երկու ձևերն էլ ծառայում են երիտասարդների բարօրությանը, սոցիալականացմանը և հավելյալ գիտելիքների ստացմանը, սակայն իրարից տարբերվում են որոշակի նպատակներով, հետևաբար նաև՝ ակնկալվող ու ստացված արդյունքներով, դրանց խելամիտ համակարգմամբ ու կառավարմամբ:

Ոչ ֆորմալ կրթության միջոցով սովորողները կարող են ձեռք բերել գործնական փորձ, զարգացնել իրենց քննադատական մտածողությունը և խնդիրների լուծման ունակությունները, կատարելագործել հաղորդակցման և առաջնորդության հմտությունները: Սրանք հմտություններ են, որ շատ կարևոր են այսօրվա դինամիկ աշխարհում: Երկրորդ՝ ոչ ֆորմալ կրթությունը հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մտածել և տարբեր տեսանկյուններից մոտենալ մարտահրավերներին: Ավելին, ոչ ֆորմալ կրթությունը խրախուսում է ողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը, որի իրագործումը, սակայն, կոռուպցիայի կանխարգելման համար անհրաժեշտ է ոչ միայն

[16] Տե՛ս՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 16-րդ կետ:

համակարգային նոր մեխանիզմների ներդրում, այլ նաև այդ մեխանիզմների գործարկումն ապահովող միջավայր, տվյալ դեպքում՝ կոռուպցիայի նկատմամբ առկա զգայուն և դիմագրավող միջավայր:

Հենց դա է այն հիմնական պատճառը, որ Հանձնաժողովը իր գաղափարներն ու ռեսուրսները մշտապես ուղղում է նաև սովորողների համար համապատասխան միջավայր ապահովող շրջանակների, այն է՝ ուսուցիչների ու ծնողների մասնագիտական և անձնական զարգացմանը:

Կարևորելով հակակոռուպցիոն կրթության արմատավորումը դեռևս դպրոցական տարիներից, Հանձնաժողովը շարունակում է լայնածավալ կրթական և հանրային իրազեկման ծրագրերի մշակումն ու աշխատանքների իրականացումը:

Այսպես,

Կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ ԵՄ Թվինինգ ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) շրջանակներում բաղադրիչ 1-ի գործողություններն ուղղված են հակակոռուպցիոն կրթական և իրազեկման բարձրացման ծրագրերի մշակմանը, ինչպես նաև դրանց իրականացման աջակցման ոլորտում Հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը:

Մասնավորապես, բաղադրիչ 1-ի ենթաբաղադրիչները ենթադրում են՝

1.1 բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման համար գործող ենթակառուցվածքի ստեղծում.

1.2 բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ հանրակրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում.

1.3 բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ բարձրագույն կրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում.

1.4 հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի վերաբերյալ մասնագիտական զարգացման համակարգի ստեղծում և բարեվարքության վերապատրաստման ծրագրերի նյութերի մշակում, հաստատում և հրապարակում:

1.1 Բարեվարքության, հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման համար գործող ենթակառուցվածքի ստեղծում

Նշված գործողության ներքո 2023 թվականին իրականացվել է՝

- առկա նյութերի գույքագրում և վերապատրաստում.

- Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատակիցների ընդգրկում վերապատրաստման հայեցակարգերի և նյութերի մշակման մեջ.
- հատուկ առաջարկների մշակում (վերապատրաստման միջոցներ, ուսումնական նյութեր, ձեռնարկներ և այլն).
- մշակված հայեցակարգերի և նյութերի փորձարկում Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ.
- մշակված հայեցակարգերի և նյութերի հիման վրա աշխատաժողովների և ծրագրերի իրականացում/հանրային իրազեկվածության բարձրացում:

Վերապատրաստման թեմաները քննարկվել են Հանձնաժողովի աշխատակիցների հետ, որի արդյունքում փորձագետների կողմից մշակվել է վերապատրաստման ծրագրի նախագիծ և փորձարկվել Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ:

Հանձնաժողովը, Ծրագրի շրջանակներում ներգրավված փորձագետների աջակցությամբ, համատեղ աշխատանքի արդյունքում մշակել է լրատվամիջոցների հետ աշխատանքի՝ մեթոդական առումով տարբերվող նոր ձևաչափ, որն ավանդական սեմինարի կամ աշխատանքային քննարկման փոխարեն նպատակ է հետապնդել կարճ ժամանակահատվածում ավելի մեծ քանակությամբ թեմատիկ ուղղություններ առանձնացնել և խոսել նաև լրատվամիջոցների շրջանում հետաքրքրություն առաջացրած և Հանձնաժողովում քննության ենթարկված դեպքերի վերաբերյալ:

Նշված գործողության ներքո 2023 թվականի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են «Կոռուպցիայի Կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով թվով 3 աշխատաժողով՝ մայիսի 15-ին, դեկտեմբերի 13-ին և 14-ին, որին մասնակցել են թվով 73 լրատվամիջոցների ներկայացուցիչներ և տարբեր գերատեսչություններից մամլո խոսնակներ:

Աշխատաժողովի ընթացքում Հանձնաժողովի աշխատակիցների կողմից լրագրողների ուշադրությանն են ներկայացվել հետևյալ թեմաները՝

- Բարեվարքության ուսումնասիրությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ.
- Անհամատեղելիության պահանջները՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ.
- Շահերի բախումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ.
- Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ:

2024 թվականին նախատեսվում է նմանատիպ աշխատաժողով իրականացնել նաև քաղաքացիական հասարակության շրջանում:

Վերոնշյալ թեմաներով՝ փորձագետները և Հանձնաժողովի աշխատակիցները համատեղ մշակել են կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ թվով 4 կրթական մոդուլների նախագծեր՝ նախատեսված հանրային ծառայողների համար:

Թեմաները մշակվել են հաշվի առնելով միջազգային չափանիշները: Սա կարող է օգտագործվել որպես հիմնական գիտելիք վերապատրաստողների համար և ակնարկ՝ ներկայացնելու փաստացի իրավիճակը Հայաստանում: Այն ունի ուսուցողական նպատակ: Կախված վերապատրաստման թեմայից, այն կարող է օգտագործվել նաև որպես վերապատրաստման որոշակի թեմայի ներածություն: Վերապատրաստողները լայն տեսակետներ կունենան ընտրված թեմայի վերաբերյալ:

Սույն գործողության շրջանակներում դեռևս ընթացքի մեջ են քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով թվային հարթակի ստեղծման և գործարկման աշխատանքները, ինչը նպատակ է հետապնդում մշակել և ստեղծել ժամանակակից, օգտագործողի համար հարմար և տվյալների պաշտպանությանը համապատասխան ուսուցման էլեկտրոնային հարթակ, որն առանձնահատուկ նշանակություն կունենա ուսուցման բովանդակությունը նպատակային կերպով փոխանցելու կարողության տեսանկյունից: Ուսուցման հարթակի բազմակողմանի և գտնվելու վայրից անկախ օգտագործումը հնարավոր կլինի նաև շարժական սարքերում:

1.2 Բարեվարքության կրթական ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ հանրակրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում

Գործողություն 1.2-ի շրջանակներում ներգրավված միջազգային փորձագետների կողմից առաջին առաքելությունն իրականացվել է 2023 թվականի մարտի 19-26-ը և կենտրոնացած է եղել հակակոռուպցիոն կրթության, քաղաքացիական կրթության և ուսուցիչների վերապատրաստման (գործող և ապագա ուսուցիչների համար) բնագավառում հայաստանյան տարբեր շահագրգիռ կողմերի հետ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով փաստերի հավաքման միջոցով Ծրագրի գործողությունների մանրամասն իրականացման համար համարժեք և արդյունավետ պլանավորման հիմքեր ստեղծելու, անհրաժեշտ հաջորդ քայլերը հստակեցնելու, ինչպես նաև Հայաստանի դպրոցներում կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման կայուն պրակտիկային ուղղված հետագա առաջարկությունների ձևավորման համար:

Թվինինգ ծրագրի փորձագետների մասնակցությամբ Հանձնաժողովում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում՝ ուղղված հանրակրթության ոլորտում կոռուպցիայի կանխարգելման թեմաներով ներդրվող կրթական ծրագրերի և ուսումնաօժանդակ նյութերի ստեղծմանը: Քննարկմանը մասնակցել են Հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի, Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի, «ԿՀՆԱԿ» հիմնադրամի, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարարական կազմակերպության, «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի և «ՍԻՎԻՏԱՍ» ժաղովրդավարական հայկական կենտրոնի ներկայացուցիչները:

Հանդիպումների արդյունքում՝ որպես վերհանված խնդիրների արդյունավետ լուծում, փորձագետների կողմից առաջարկվել է՝

ա) որպես կոռուպցիայի կանխարգելման կարևոր միջոց՝ Ծրագրի շրջանակներում մշակել և իրականացնել կոռուպցիայի վերաբերյալ ընդհանուր իրազեկվածության վերապատրաստումներ դպրոցական բոլոր առարկաների դասավանդող ուսուցիչների համար.

բ) Ծրագիրը կարող է կենտրոնանալ կոռուպցիայի կանխարգելման ևս մեկ կարևոր միջոցառման վրա, որը վերաբերում է Հասարակագիտության ուսուցիչների վերապատրաստմանը, այսինքն՝ մեթոդական առումով ինչպես դասավանդել կոռուպցիայի կանխարգելման թեման դպրոցում: Հակակոռուպցիոն կրթությունն արդեն իսկ Հասարակագիտության ուսումնական ծրագրի մի մասն է ինչպես հանրակրթական դպրոցներում, այնպես էլ քոլեջներում, և այս թեմայի՝ ուսումնական ծրագրում էլ ավելի ընդլայնվելու դեպքում, անհրաժեշտ է ուսուցիչներին վերապատրաստել դպրոցում կոռուպցիայի կանխարգելման բարձրակարգ կրթություն իրականացնելու համար:

Երկու տարբերակներում էլ առաջարկվել է ծրագրի ընթացքում վերապատրաստել ուսուցիչ-վերապատրաստողներ, որպեսզի հետայսու նրանք կարողանան վերապատրաստել մյուս ուսուցիչներին:

Այս համատեքստում, կարևորելով հակակոռուպցիոն կրթական ծրագրերի ներդրումը և հակակոռուպցիոն իրազեկվածության բարձրացումը՝ մայիսի 31-ին և հոկտեմբերի 10-ից 12-ը կազմակերպել են «Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկվածությունը և վերջինիս կանխարգելումը հանրակրթության միջոցով» խորագրով աշխատաժողովներ:

Աշխատաժողովների նպատակն էր նույն բաղադրիչի նախորդ առաքելությունների արդյունքում հակակոռուպցիոն կրթության բովանդակության և դասավանդման մեթոդների վերաբերյալ ուսուցիչների և վերապատրաստողների համար մշակված նյութերի գործնական փորձարկումը, դրանց վերաբերյալ

մասնակիցներից հետադարձ կապի ստացումը և դրան հաջորդող աշխատանքների միջոցով տեղայնացումը: Հանդիպումներն իրականացվել են երկու հիմնական ուղղություններով՝ հակակոռուպցիոն կրթության մասնագիտական վերապատրաստումներ հասարակագիտության ուսուցիչների համար, հակակոռուպցիոն կրթության ընդհանուր վերպատրաստում կրթության կազմակերպիչների և մյուս առարկաների ուսուցիչների համար:

Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են շուրջ 45 մանկավարժներ՝ որպես վերապատրաստողներ: Դասընթացի ավարտին մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է միջազգային փորձագետների կողմից 100 ուսուցիչների և վերապատրաստողների վերապատրաստում, ովքեր այնուհետ իրենց գիտելիքները և կարողությունները կփոխանցեն մյուս ուսուցիչներին:

Միջազգային փորձագետների կողմից մշակված նյութերը հայկական միջավայրի համար տեղայնացնելու, ինչպես նաև հանրակրթական ծրագրերի մեջ ներառելու հնարավորությունները քննարկելու նպատակով իրականացվել է հանդիպում «ԿՀՆԱԿ» հիմնադրամի, «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հայաստանյան գրասենյակի, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի ներկայացուցիչների հետ և ձևավորվել համագործակցության միջավայր: Նշենք, որ մշակված նյութերը տրամադրվել են նաև շահագրգիռ կառույցներին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Առաջարկություններ Հանձնաժողովը ստացել է ԿԳՄՍ նախարարության, «ԿՀՆԱԿ» հիմնադրամի, «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարարական կազմակերպության կողմից, որոնք հիմք կհանդիսանան մշակված նյութերի տեղայնացման գործում:

Նախնական քննարկման արդյունքում որոշվել է ձևավորել աշխատանքային խումբ, որը, որպես մեթոդական ձեռնարկ, կլրամշակի միջազգային փորձագետների կողմից կազմված նյութերը, որից հետո այն կտրամադրվի ուսուցիչներին: Զուգահեռաբար նախատեսվում է շարունակական դարձնել վերապատրաստողների վերապատրաստման գործընթացը, որպեսզի հնարավոր լինի ապահովել ողջ հանրապետության ծածկույթով վերապատրաստումների իրականացումը:

2024 թվականի հունվարին, ենթաբաղադրիչի վերջին առաքելության ընթացքում նախատեսվում է բովանդակային սեմինարներ իրականացնել Թվինինգ ծրագրի փորձագետների և տարբեր մարզերից հայ մասնագետների հետ համատեղ (օրինակ, այդ թվում՝ նաև կրթական ՀԿ-ներ, ուսուցիչների վերապատրաստողներ, ինչպես ավագ դպրոցների, այնպես էլ միջին մասնագիտական հաստատությունների ուսուցիչներ):

Ի լրումն ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստումների՝ գործողություն 1.1-ի շրջանակում նախատեսվող էլեկտրոնային ուսուցման հարթակը, կարող է նաև ներառել ուսուցիչներին՝ որպես թիրախ խումբ, ապահովելով՝

ա) կոռուպցիայի, դրա ծախսերի, պատճառների և դրա դեմ պայքարի ուղիների վերաբերյալ զգայունությունը մեծացնող տեղեկատվություն.

բ) դպրոցներում հակակոռուպցիոն կրթության համար դիդակտիկ մեթոդները և նյութերը (օրինակ՝ Հասարակագիտության դասերին) ուսուցիչներին և ուսուցիչ-վերապատրաստողներին (ինչպես գործող, այնպես էլ ապագա ուսուցիչներ, ինչպես միջնակարգ դպրոցներ, այնպես էլ միջին մասնագիտական հաստատություններ, հետագա փուլում՝ նաև տարրական դպրոցներ) ամբողջ երկրում հասանելիությունը:

Ավելին, դպրոցների տնօրեններն ու ծնողները նույնպես կլինեն նման հարթակի համապատասխան թիրախային խմբեր (հնարավոր է նրանց ուղղակիորեն անդրադառնալ նույնիսկ հարթակի առանձին բաժիններում՝ համապատասխան և գրավիչ խտացված տեղեկություններով):

Հանձնաժողովի կողմից նախատեսվում է ուսուցիչների համար կազմակերպել ուղղորդիչ միջոցառումներ, ինչպես նաև մշակել և տպագրել ուղղորդիչ մեթոդական ձեռնարկ, ինչը կօգնի ուսուցիչներին թեմայի դասավանդման ընթացքում, ինչպես նաև թույլ կտա արդյունավետորեն կիրառել նախանշված մեթոդաբանությունը և, որպես հետևանք, բարձրացնել դասավանդման արդյունավետությունը:

1.3 Բարեվարքության կրթության ծրագրերի և/կամ վերապատրաստման դասընթացների, այդ թվում՝ բարձրագույն կրթական համակարգում ներդրման ենթակա նյութերի մշակում

Նշված գործողության ներքո իրականցվել են հետևյալ աշխատանքները՝

- Հայաստանյան բուհերում նոր մոդուլներ ներդնելու համար գնահատվել է իրավական դաշտը.
- Մշակվել է ընդհանուր հակակոռուպցիոն մոդուլների ցանկ, որոնք համապատասխանում են բարձրագույն ուսումնական հաստատություններին.
- Իրականացվել է թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ քննարկում և նրանց ներգրավվում վերապատրաստման հայեցակարգերի և նյութերի մշակման մեջ:
- Ներգրավված փորձագետների կողմից մշակվել են թվով 3 մոդուլների նախագծեր.

- Մշակված նյութերը տրամադրվել են հայաստանյան բուհերի ներկայացուցիչներին՝ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով.
- Ներկայացված դիտարկումների և առաջարկությունների հիման վրա խմբագրվել են նյութերը.
- Խմբագրված/լրամշակված նյութերը կփորձարկվեն և կշտկվեն հաջորդ՝ «Պրոֆեսորների վերապատրաստման» դասընթացի ժամանակ՝ 2024 թվականին:

Հաջորդ ենթագործողությունների արդյունավետությունը մեծապես կախված է բուհերի դասախոսների աջակցությունից և համագործակցությունից: Նրանց ներդրումն անհրաժեշտ է Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների համար հարմարեցված ամբողջ ուսումնական նյութը վերջնական տեսքի բերելու նպատակով:

1.4 Հանրային ծառայության համակարգում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների շրջանում բարեվարքության համակարգի վերաբերյալ մասնագիտական զարգացման համակարգի ստեղծում և բարեվարքության վերապատրաստման ծրագրերի նյութերի մշակում, հաստատում և հրապարակում:

Գործողության ներքո հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է՝

- վերապատրաստողների վերապատրաստման (ToT) հայեցակարգի մշակում՝ «կոռուպցիայի կանխարգելման» թեմայով.
- վերապատրաստման ծրագրի դասընթացավարների ընտրություն ToT ծրագրի համար (կենտրոնացումը՝ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատակիցների վրա).
- ToT ծրագրի և վերապատրաստման նյութերի նախագծի կազմում.
- կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ մասնագիտական վերապատրաստման դասընթացների համար վերապատրաստողների վերապատրաստում.
- Հանձնաժողովի ToT անցած աշխատակիցների կողմից ներքին վերապատրաստում:

- ToT վերապատրաստում՝ նախատեսված Հանձնաժողովի աշխատակիցների համար՝ SS աջակցող գործիքների վերաբերյալ:

- վերապատրաստողների վերապատրաստման մեթոդական ձեռնակի լրամշակում: Պատրաստված ձեռնարկը հիմնված է ԿԿՀ-ի

վերապատրաստողների խմբի հետ վերապատրաստման փորձի վրա և արտացոլում է կատարված դիտարկումները:

Հանձնաժողովը Ծրագրի պատասխանատուներին և փորձագետներին առաջարկել է կենտրոնանալ վերապատրաստողների վերապատրաստման (ToT) իրականացման 5 առաջնահերթ թեմաների վրա՝

- «Շահերի բախումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ».
- «Անհամատեղելիության պահանջները՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ».
- «Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ».
- «Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ».
- «Բարեվարքության ուսումնասիրությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ»:

Գործողության շրջանակում Հանձնաժողովի 12 աշխատակից ընտրվել է որպես վերապատրաստող: Վերապատրաստում անցած մասնակիցները վերը նշված թեմաներով Հանձնաժողովի նոր աշխատակիցների համար իրականացրել են ներքին վերապատրաստում և գնահատվել փորձագետների կողմից: Վերապատրաստում անցած աշխատակիցները, 2023 թվականի ընթացքում, նոր գիտելիքներով և դասավանդման նորագույն մեթոդների կիրառմամբ տարբեր թիրախային խմբերի համար իրականացրել են կոռուպցիայի կանխարգելման և բարեվարքության վերաբերյալ դասընթացներ:

Այսպիսով, ԵՄ Թվինինգ ծրագիրը՝ իր 4 բաղադրիչներով, չափազանց կարևոր և սպասված ծրագիր է Հանձնաժողովի համար:

Ակնկալվում է Ծրագրի ավարտին ունենալ քաղաքացիական ծառայողների համար բարեվարքության (հակակոռուպցիոն) իրազեկվածության բարձրացման նպատակով գործող էլեկտրոնային ուսուցման թվային հարթակ, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար նախատեսվող դասընթացների ծրագրեր, մշակված կրթական ծրագիր՝ նախատեսված հանրակրթական համակարգի համար, իսկ վերջինիս շրջանակներում՝ ուսուցիչների վերապատրաստման ծրագիր, բարձրագույն կրթական համակարգում մեկ կիսամյակի պարտադիր ներդրված բարեվարքության դասընթաց/ծրագիր՝ առնվազն 1 ԲՈՒՀ-ում, վերջինիս շրջանակներում վերապատրաստված դասախոսներ, կրթական տարբեր մակարդակների համար մշակված ուսումնաօժանդակ նյութեր, հանրային

ծառայողների համար մշակված մասնագիտական վերապատրաստման դասընթացներ և նյութեր:

Միաժամանակ, համագործակցային ծրագրերի տեսանկյունից՝ «Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համատեղ ևս իրականացվել են մի շարք ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:

Մասնավորապես,

«Քաղաքացիական մասնակցության ակումբ» ուսումնական խմբակների անցկացում (այսուհետ՝ Խմբակ), որոնց նպատակն է եղել նպաստել սովորողների մասնակցային արժեհամակարգի ձևավորմանը, դրա համար անհրաժեշտ գիտելիքի ավելացմանը և համապատասխան կարողությունների զարգացմանը: Նշված նպատակի իրականացումը հնարավորություն կստեղծի ավելի արդյունավետորեն ապահովել Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված համապատասխան կարողունակությունների ձևավորումը, ինչպիսիք են ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունները, ինչը ներառում է նաև բարեվարքության համակարգը:

Խմբակի բովանդակային առանցքը համայնքային մասնակցությունն ու ներգրավումն է, իսկ մեթոդական հենքը՝ ուսումնական և համայնքային նախագծերի կազմակերպումն ու իրականացումը:

Խմբակի շրջանակում սովորողները՝

● կխորացնեն իրենց գիտելիքները իրավունքի և օրենքի, մարդու և քաղաքացու, քաղաքացի-հանրային իշխանություն (պետություն) փոխհարաբերությունների մասին.

● կծանոթանան հանրային/համայնքային մասնակցության ձևերին, իրենց հետաքրքրող տեղեկությունը ստանալու հնարավորություններին, դրանց աղբյուրներին.

● կզարգացնեն անհրաժեշտ տեղեկություն ստանալու, ստացած տեղեկությունը համադրելու և վերլուծելու, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցվելու (մեդիագրագիտության) հմտություններ.

● կայցելեն համայնքային/այլ պատկան մարմիններ, կհյուրընկալեն ոլորտային մասնագետների և պատասխանատուների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների.

● ձեռք բերված գիտելիքն ու հմտությունները կփորձարկեն ուսումնական կամ համայքային նախագծերի իրականացման միջոցով:

Ուսումնական կամ համայնքային նախագծերի միջոցով ձեռք բերված գիտելիքի և հմտությունների փորձարկումը ունի երկու հիմնական նպատակ՝

1. ուսումնառությունը դարձնելու հնարավորինս իրական կյանքին մոտ (աուտենտիկ).

2. նպաստելու սովորողների ներգրավմանը հանրային կամ համայնքային խնդիրների բարձրաձայնմանը, դրանց ջատագովմանը, հնարավորության դեպքում՝ լուծմանը:

Այսպիսով,

Խմբակների համար տարեկան ծրագրով նախատեսված <<Կոռուպցիա>> թեման դասավանդել են Հանձնաժողովի աշխատակիցները և հանդիպումներ իրականացրել ՀՀ Տավուշի մարզի թվով 3 ուսումնական հաստատություններում

Արդյունքում Խմբակի մասնակիցները՝ շուրջ 60 աշակերտ, ավելի լավ պատկերացում կունենան իրենց իրավունքների և պարտականությունների մասին, կկարողանան ստանալ իրենց հետաքրքրող տեղեկությունը, կատարել համադրումներ և վերլուծություններ, ավելի արդյունավետ իրացնել իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Կարևորելով համանման հանդիպումները՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել այցելություն Հանձնաժողով, որտեղ աշակերտները մանրամասն կծանոթանան Հանձնաժողովի գործառույթներին՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մանդատ ունեցող մարմին:

Հանձնաժողովի աշխատակիցները իրազեկման արշավ են իրականացրել նաև անգլիալեզու ճամբարում, որին մասնակցել են թվով 100 աշակերտներ ՀՀ մարզերի տարբեր դպրոցներից:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակվել և իրականացվել են մի շարք կրթական և իրազեկման ծրագրեր :

Մասնավորապես՝

- Հանձնաժողովի նախաձեռնությամբ դպրոցականների համար մեկնարկել է «Դարձի՛ր փոփոխության առաջնորդ» հակակոռուպցիոն կրթական ծրագիրը, որին մասնակցել են 6 ուսումնական հաստատություններից մոտ 130 աշակերտ: «Դարձի՛ր փոփոխության առաջնորդ» հակակոռուպցիոն կրթական ծրագիրը բաղկացած է 2 փուլից. 1-ին փուլում աշակերտներին դպրոցներում Հանձնաժողովի աշխատակիցների կողմից մատուցվում են տեսական գիտելիքներ, կազմակերպվում են քննարկումներ, 2-րդ փուլում արդեն տեսական գիտելիքներին տիրապետող աշակերտները հյուրընկալվում են Հանձնաժողովում, որտեղ տեղի է ունենում 1-ին փուլից տարբերվող՝ իրավիճակային քննարկումների, խաղերի ձևով անցկացվող գործնական պարապմունք՝ ապահովելով տեսական գիտելիքների գործնական կիրառությունը:

Կրթական ծրագրի 1-ին փուլի ընթացքում աշակերտներին ներկայացվել է «կոռուպցիա» հասկացությունը, դրա դեմ պայքարի միջոցները, հակակոռուպցիոն բարեփոխումները, կոռուպցիայի դրսևորումները, պատճառները, տեսակները,

կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը, կոռուպցիայի ընկալման համաթիվը և այլն:

2-րդ փուլի ընթացքում ծավալված քննարկումները վերաբերել են հետևյալ թեմաներին՝

- Կոռուպցիայի դեմ պայքարի ընկալում
- Կոռուպցիոն երևույթների պատժիչ գործիքներ
- Իրավիճակային դեպքերի քննարկում

Կրթական ծրագրին մասնակցել են 6 ուսումնական հաստատություններից մոտ 130 աշակերտ: Ծրագիրն իրականացվել է Հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության աշխատակիցների կողմից:

Հաջորդ թիրախային խումբը Հանձնաժողովի կողմից ընտրվել են մանկավարժները և ծնողները՝ որպես հակակոռուպցիոն կրթության իրականացման մասնակիցներ, քանի որ առանց նրանց կողմից ստեղծված կոռուպցիայի նկատմամբ «զրո» հանդուրժողականությամբ օժտված միջավայրի Հանձնաժողովի կողմից մշակվող կրթական ծրագրերը աշակերտների և ուսանողների համար կդառնան բացառապես գիտելիք՝ առանց համապատասխան միջավայրի: Այսպես՝

● «Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» իրազեկման հանդիպումներին մասնակցել են շուրջ 210 մանկավարժներ և ծնողներ՝ ք. Երևանի թվով 25 և Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի մարզերի թվով 28 ուսումնական հաստատություններից: Հանդիպումների ընթացքում կազմակերպվել է բաց քննարկումներ հետևյալ թեմաների վերաբերյալ՝ Ի՞նչ է կոռուպցիան, ինչու՞ պայքարել կոռուպցիայի դեմ, ինչպե՞ս պայքարել կոռուպցիայի դեմ:

Ծրագրի շրջանակներում մասնակիցներին ներկայացվել է «Կոռուպցիա» հասկացության, դրսևորումների, տիպաբանության, հակակոռուպցիոն բարեփոխումների, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի, ինչպես նաև Հանձնաժողովի ստորաբաժանումների գործառույթների վերաբերյալ թեմաներ, մասնավորապես.

- Հայտարարագրման համակարգը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ
- Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ
- Բարեվարքության ուսումնասիրությունը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ

• Կրթությունը և իրազեկումը՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմ

Հանդիպման ընթացքում մասնակիցները կատարել են խմբային աշխատանքներ, քննարկել իրավիճակային դեպքեր

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի աշխատակիցները կազմակերպել և իրականացրել են տարբեր հանդիպումներ նաև հակակոռուպցիոն կրթական ծրագրեր իրականացնող գործընկեր կառույցների առաջարկությամբ.

Մասնավորապես՝

- «Երեխաների իրավունքները» և «Կոռուպցիա». Ինտեգրված դաս Հրազդանի թիվ 1 ավագ դպրոցում
- Ճանաչողական այց Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կրթական ծրագրերի շրջանավարտների համար
- Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրների այցը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

8.3 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2023 թվականի ընթացքում իր գործունեությունը լուսաբանելու նպատակով Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ www.cpcarmenia.am, պարբերաբար տեղադրել է Հանձնաժողովի գործունեությանն առնչվող տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր:

Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում առկա են նաև մի շարք խնդիրներ, բացեր և՛ բովանդակային, և՛ տեխնիկական հնարավորությունների առումով: Կայքում առկա մի շարք պատուհաններ ակտիվ չեն, որի արդյունքում Հանձնաժողովի կառուցվածքի, գործառույթների և լիազորությունների շրջանակը հնարավոր չի լինում ամբողջությամբ ներկայացնել: Կայքում առկա են նաև մի շարք այլ տեխնիկական, ծրագրային բացթողումներ, որոնք խոչընդոտում են կայքի թափանցիկ, ինտերակտիվ գործունեությանը, որոնք խնդիրներ են առաջացնում հրապարակումների ժամկետների և տեսանելիության ապահովման հետ կապված:

Վերոնշյալ խնդիրները քարտեզագրված են Հանձնաժողովի կողմից, ուստի առաջիկայում նախատեսվում է վերափոխել Հանձնաժողովի պաշտոնական կայքէջը:

Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանման կողմից օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացվել է շուրջ 25 լրատվամիջոցների հրապարակումների վերաբերյալ մամուլի մշտադիտարկում, որի արդյունքում յուրաքանչյուր անգամ Հանձնաժողովի գործառույթներին և լիազորություններին վերաբերող հրապարակումների վերաբերյալ կազմվել է տեղեկանք, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատանքների վերաբերյալ շուրջ 15 ամփոփագրեր, որոնք հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Հանձնաժողովի աշխատակիցները 2023 թվականի ընթացքում իրականացրել են մի շարք միջոցառումներ, վերապատրաստումներ, իրազեկման արշավներ, մասնակցել մի շարք դասընթացների, անցկացրել կրթական հանդիպումներ՝ նախատեսված միջին և ավագ դպրոցների աշակերտների համար, ունեցել միջազգային հանդիպումներ և ուսումնական այցեր:

Նշենք, որ Հանձնաժողովը 2023թ.-ին իր գործունեության 4-ամյակն ամփոփել է բարձր մակարդակի մասնակցությամբ միջոցառմամբ:

Դեռևս ընթացքի մեջ են նաև Հանձնաժողովի իրազեկման հոլովակների պատրաստման աշխատանքները, որն իրականացվում է Փաբլիսիս ընկերության հետ համտեղ և նախատեսվում է արդյունքում ունենալ թվով 4 իրազեկման հոլովակներ՝ ուղղված Հանձնաժողովի ճանաչելիության բարձրացմանը:

Հաշվի առնելով, որ արդյունավետ հակակոռուպցիոն պայքարի գործում առանցքային նշանակություն ունի հակակոռուպցիոն կրթության և իրազեկման քաղաքականության մշակումը և իրականացումը՝ հանրության մոտ կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության մշակույթ ձևավորելու համար, Հանձնաժողովը շարունակելու է կրթական միջոցառումների և հանրային իրազեկման արշավների իրականացումը:

IX. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

2023 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակմանը և ոլորտային օրենսդրական կարգավորումների պրակտիկ կիրառման շրջանակներում հայտնաբերած բացերը վերացնելու նպատակով Արդարադատության նախարարությանն է ներկայացրել օրենսդրական նախագծերի փաթեթներ:

Հաշվետու ժամանակահատվածում *մշակվել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:* Նախագծով կարգավորման ենթակա խնդիր է, մասնավորապես, *հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգում* ընդլայնված լիազորություններով օժտված Հանձնաժողովում, որպես համակարգին բնորոշ առանձնակի ռիսկայնությամբ գործառույթներ իրականացնող մարմնի, աշխատանքերի համարժեք վարձատրության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեություն ծավալելու կայուն երաշխիքների ամրագրմամբ՝ ինչպես մասնագիտական աշխատանքների կատարման, այնպես էլ որոշումների ընդունման պատասխանատու գործընթացում:

Հաշվետու ժամանակահատվածում լրամշակվել է *«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»» «օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը*: Ուսումնասիրվել են պաշտոնապես շրջանառված փաթեթի վերաբերյալ շահագրգիռ մարմիններից ստացված

առաջարկություններն ու դիտարկումները, դրանց հիման վրա կազվել է ամփոփաթերթ և ներկայացվել է Արդարադատության նախարարություն:

Նախագծերի փաթեթով կարգավորվում են Հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնության, գործող իրավակարգավորումների իրավական որոշակիության ապահովման, Հանձնաժողովի գործունեության ընթացքում իրավակիրառ պրակտիկայում վեր հանված օրենսդրական բացերի վերացմանն ուղղված, հայտարարագրերի վերլուծության և բարեվարքության ուսումնասիրության գործընթացի իրականացման առանձին կառուցակարգերի որոշակիացման, ինչպես նաև նոր կառուցակարգերի ներդրման հետ կապված կանոնակարգումներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 29-ի *«Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման պետական պաշտոնների շրջանակը հաստատելու մասին» N 01-Լ որոշումը*[17]: Նշված որոշման մշակման համար ելակետ են ընդունվել Հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 12-ի «Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորների հայտարարագրերի վերլուծության իրականացումը Հանձնաժողովի անդամներին լիազորելու և դատավորների հայտարարագրերի վերլուծության հերթականությունը սահմանելու մասին» N 01-Լ և Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայտարարագրերի վերլուծության ռիսկային չափորոշիչ սահմանելու և դրա հիման վրա պետական պաշտոնների ցանկը հաստատելու մասին» N 02-Լ որոշումները, ինչպես նաև հիմք են ընդունվել նախորդիվ իրականացված հայտարարարագրի վերլուծության արդյունքում վեր հանված այնպիսի անհամապատասխանություններ, որոնց արժանահավատությունն ու ամբողջականությունը ստուգելու նպատակով պահանջվում են ըստ տարիների հայտարարագրված տվյալների համադրություն: Արդյունքում հաստատվել է հայտրարարգերի վերլուծության նոր ռիսկային չափորոշիչ և դրա հիման վրա սահմանվել է պետական պաշտոնների այդ թվում՝ (նրանց ընտանիքի անդամների) շրջանակը, որոնց 2022 թվականի հայտարարագրերը ենթակա են վերլուծության:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակվել և հաստատվել է նաև 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 02-Լ որոշումը[18], որով սահմանվել է *Հանձնաժողովի նիստերի, այդ թվում՝ հրապարակային կարգով իրականացվող նիստերի, անցկացման աշխատակարգը*:

[17] http://cpcarmenia.am/files/legislation/1063.pdf
[18] http://cpcarmenia.am/files/legislation/1207.pdf ,

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով՝ կարծիքի են ներկայացվել այլ պետական մարմինների կողմից շրջանառվող մի շարք օրենսդրական նախագծերի փաթեթներ, որոնք ուսումնասիրվել են Հանձնաժողովի կողմից: Այս առումով, Հանձնաժողովը գրավոր դիրքորոշումներ և առաջարկություններ է ներկայացրել մի շարք օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ, *որոնցից առավել առանցքային դիրքորոշումների բովանդակությունը ներկայացվում է ստորև*.

1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Մասնավորապես, 2023 թվականի նոյեմբերի 14-ին Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Հանձնաժողով է ներկայացվել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը: Նախագծով առաջարկվել է փոփոխություններ կատարել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում՝ վերանայելով պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝ այլ պաշտոն զբաղեցնելու օրենսդրական սահմանափակումը և թույլատրելով վերջիններիս համատեղությամբ զբաղեցնել համայնքի ավագանու անդամի պաշտոն: Սույն փոփոխության անհրաժեշտությունը հիմնավորվել էր նաև նրանով, որ ներկայումս ՀՀ համայնքների մի մասում պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններն արդեն իսկ զբաղեցնում են ավագանու անդամի պաշտոն, ինչը ոչ միանշանակ է մեկնաբանվում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների շրջանակում: Այսպես, Նախագծով առաջարկվել էր «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածների 3-րդ մասերում կատարել լրացումներ, որոնք կնախատեսեին բացառություն ՊՈԱԿ-ների տնօրենների կողմից համայնքի ավագանու անդամի պաշտոն զբաղեցնելու համար:

Վերլուծելով Նախագծով առաջակվող կարգավորումները, ավագանու՝ վերաբերելի լիազորությունները, ավագանու անդամին ներկայացվող օրենսդրական սահմանափակումները, միջազգային փաստաթղթերով ամրագրված՝ տեղական մակարդակում շահերի բախման ռիսկերին առնչվող միջազգային համապատասխան բանաձևերը՝ Հանձնաժողովը եկել էր եզրահանգման, որ իրավաչափության, իրավական որոշակիության տեսանկյունից Նախագիծը խնդրահարույց և վիճահարույց էր: Միաժամանակ, Հանձնաժողովը գտել էր, որ առաջարկվող կարգավորումները չէին լուծում

իրավական այն խնդիրները և օրենսդրական անհամապատասխանությունները, որոնք դրվել էին Նախագծի մշակման հիմքում: Ավելին՝ Նախագծով առաջարկված փոփոխությունները սպառնում էին խաթարել հանրային ծառայության անհամատեղելիության գաղափարի էությունը և կարող էին առաջացնել շահերի կառավարման զգալի ռիսկեր: Առաջարկվող կարգավորումները հակասություն էին առաջացնում նաև «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների կարգավորումների հետ:

Նշված մտահոգությունները Հանձնաժողովի կողմից բարձրացվել են նաև Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում, ինչի արդյունքում օրինագծին տրվել է բացասական դիրքորոշում՝ առաջարկելով հարցը ևս մեկ անգամ քննարկել Հանձնաժողովի հետ:

2. «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ

Նախագծով առաջարկվել էր սահմանել հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ստացված և օրենքով նախատեսված հիմքերով պետական կամ համայնքային սեփականություն դարձած գույքի տնօրինման հետ կապված կարգավորումներ՝ նախատեսելով այդ նվերները ծառայողի կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը թողնելու, առանձին դեպքերում՝ պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելու, հրապարակային սակարկություններով կամ բարեգործություն իրականացնող սուբյեկտներին նվիրաբերելու եղանակով իրացնելու, շուտ փչացող գույքի իրացման եղանակների վերաբերյալ կարգավորումներ: Քննարկվող կարգավորումների առնչությամբ Հանձնաժողովի ներկայացրած առաջարկները, ի թիվս այլնի, վերաբերել են օգտագործվող առանձին եզրույթների միատեսակության ապահովմանը և/կամ դրանց փոփոխմանը, ինչպես նաև առաջարկվել է նախագծի շրջանակում անդրադառնալ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետով նախատեսված՝ ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերին՝ բացառելով դրանք նվեր հասկացության շրջանակներից: Ներկայացված առաջարկների հիման վրա Նախագիծը լրամշակվել է:

3.«*Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ*

Նախագծի վերաբերյալ, մասնավորապես, ներկայացվել է հետևյալը.

Նախագծերի փաթեթով նախատեսված «Շահերի բախում» հասկացությունը նշանակում է ցանկացած իրավիճակ, որը կարող է կասկածի տակ դնել անձնակազմի՝ «Միության ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառելի ֆինանսական կանոնների մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 966/2012 կանոնակարգի (ԵՄ, Եվրատոմ) 57-րդ հոդվածում սահմանված պատճառներով անկողմնակալ և օբյեկտիվորեն գործելու կարողությունը և Խորհրդի ուժը կորցրած ճանաչող կանոնակարգ (ԵՄ, Եվրատոմ) թիվ 1605/2002:

Տվյալ պարագայում, կոռուպցիայի և շահերի բախման հասկացությունների վերոնշյալ սահմանումները բովանդակային առումով չեն համապատասխանում Հանձնաժողովի կանխարգելիչ գործառույթից բխող իրավասություններին, այլ հիմնականում վերաբերում են փողերի լվացմանը, ակտիվ և պասիվ կոռուպցիայի արարքներին մասնակցելը և դրանք հրահրելը արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ քրեական պատժամիջոցներով պատժելի լինելուն:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովի կարծիքով, ՀԸԳՀ թիվ XII Հավելվածի դրույթները բովանդակային առումով վերաբերելի չեն Հանձնաժողովի գործառույթներին, հետևաբար նաև՝ Նախագծով սահմանված Եվրոպական միության օրենսդրության մոտարկում ապահովելը:

4.«<u>Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.</u>

Ֆինանսների նախարարության կողմից ներկայացված նախագծի վերաբերյալ ներկայացվել է հետևյալը.

Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Հարկային օրենսգիրք) լրացնել նոր՝ 156.1-ին հոդվածով, որը վերաբերում է ֆիզիկական անձի կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկ (այստուհետ՝ հայտարարագիր) ներկայացնելուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆիզիկական անձանց շրջանակի մեջ, ըստ Նախագծի, մտնում են նաև պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները, որոնք կարող են հանդիսանալ նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք, Հանձնաժողովը մտահոգություն է հայտում, որ նշված սուբյեկտները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված հայտարարագրում շփոթմունքի արդյունքում կարող են ներկայացնել, օրինակ, եկամուտ համարվող

այնպիսի գործարքների վերաբերյալ տվյալներ (օրինակ՝ գույքի վաճառքից ստացված հասույթը, նվիրատվությունները և այլ), որոնք եկամուտ են համարվում միայն «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով, սակայն Հարկային օրենսգրքի իմաստով եկամուտներ չեն համարվում և չպետք է ներառվեն Նախագծով նախատեսվող հայտարարագրում:

Ելնելով վերոգրյալից, առաջարկվել է ֆիզիկական անձի կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկում հայտարարագրման ենթակա տվյալները սահմանելիս հաշվի առնել տվյալ հանգամանքը և համապատասխան գործիքակազմ սահմանել, որի միջոցով հնարավորինս հստակ կձևակերպվի համապատասխան տվյալի նկարագրությունը՝ Հարկային օրենսգրքի կանոնակարգումների համատեքստում եկամուտ հանդիսանալու առումով:

5. *<u>««Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծեր</u>*

Պետական վերահսկողական ծառայություն կողմից շրջանառված՝ ««Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալներկայացվել է հետևյալը.

Նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի կարգավորման առարկա է նաև Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ծառայողների վարքագծի հատուկ կանոնները, իսկ Նախագծի 11-րդ հոդվածով սահմանվում են ծառայության աշխատակիցների վարքագծի հատուկ կանոնները:

Հանձնաժողովի դիրքորոշմամբ վկայակոչվել են գործող օրենսդրությամբ հանրային ծառայողի վարքագծի կանոններին վերաբերող իրավակարգավորումները, նշելով, որ Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներում համապատասխան հաստիքներ զբաղեցնող աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, հետևաբար, վերջիններիս վարքագծի կանոնները սահմանված են *քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի* N 697-Ն որոշմամբ *սահմանված քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագրքով և* բխում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններից*:*

Նախագծով սահմանվել է, որ մշտադիտարկումը սույն օրենքով սահմանված Ծառայության լիազորությունների շրջանակներում Ծառայությունում ստացված, Ծառայության կողմից ձեռք բերված տեղեկությունների վերլուծության միջոցով

ռիսկերի բացահայտմանը և գնահատմանն ուղղված սույն օրենքով նախատեսված վերահսկողական գործառույթների ամբողջություն:

Հանձնաժողովն անհրաժշետ է գտել նշել, որ ինչպես Նախագծով, այնպես էլ որևէ այլ ակտով չի կարգավորված ռիսկերի բացահայտման և գնահատման չափորոշիչների կամ ցուցանիշների որոշման և սահմանման հարցը: Տվյալ պարագայում անորոշ է՝ ինչպիսի ռիսկերի բացահայտմանն ու գնահատմանն են ուղղված լինելու Ծառայության կողմից իրականացվող մշտադիտարկումները:

Ներկայացվել են մի շարք այլ դիտարկումներ:

6.«*Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերի փաթեթ*

Արդարադատության նախարարության կողմից շրջանառված նախագծի վերաբերյալ, մասնավորապես, ներկայացվել է հետևյալը.

Նախագծով սահմանվել է, որ պաշտոնական էլեկտրոնային փոստով պատշաճ ծանուցման փաստը հաստատվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի՝ www.notify.e.gov.am (այսուհետ՝ Կայք) կողմից այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստմամբ՝ ինքնաշխատ կերպով գեներացված կամ օպերատորի կողմից տրամադրված տեղեկանքով և կախված չէ ծանուցվող անձի կողմից ծանուցման բովանդակությանը ծանոթանալու հանգամանքից: Վերոնշյալ դրույթը, ըստ Հանձնաժողովի, կարող է խնդրահարույց լինել, եթե առկա չլինեն այնպիսի տեխնիկական հնարավորություններ, որոնցով կարող են հավաստվել անձի կողմից ուղարկված ծանուցումը բացելու գործողությունը՝ անկախ անձի կողմից ծանուցման բովանդակությանը ծանոթանալու հանգամանքից: Կարևորելով ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի պատշաճ վարչարարության իրավունքի մաս կազմող՝ վարչական մարմինների կողմից անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրացումը, Սահմանադրական դատարանն իր 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրել է, որ ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն սուբյեկտի՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է նախատեսել արդյունավետ ծանուցման *ընթացակարգ, որը գործնականում կբացառի շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները*: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է ապահովել համապատասխան ծանուցման տեխնիկական հնարավորությունը, միաժամանակ

սահմանել դրույթ Կայքի միջոցով էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցագիրը՝ հասցեատիրոջ կողմից բացված լինելու վերաբերյալ ինքնաշխատ կերպով գեներացվող հավաստման մասին:

Նախագծով սահմանվել է, որ Ֆիզիկական անձանց պաշտոնական էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելը՝ անկախ ստացողի՝ Կայքում գրանցված լինելու հանգամանքի, պարտադիր է: Նշված կարգավորումը հակասական է, քանի որ, Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ անձի պաշտոնական էլեկտրոնային փոստին էլեկտրոնային ծանուցում ուղարկելը և ստանալը հաստատվում է էլեկտրոնային հավաստմամբ, որը ստանալու համար անձը կարող է Կայքի սպասարկումն իրականացնող օպերատորի հետ կնքել պայմանագիր: Վերոնշյալից հետևում է, որ պաշտոնական էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու պարագայում հավաստման գործիքակազմը բացակայում է, եթե անձը գրանցված չէ Կայքում և համաձայնություն չի տվել՝ այսինքն պայմանագրային հիմունքներով կամարտահայտություն չի հայտնել օգտվել Կայքի մատուցած ծառայություններից: Նշենք նաև, որ Նախագծում հստակ սահմանված չի եղել, թե ինչ պայմանագրի և պայմանագրի ինչպիսի պայմանների մասին է խոսքը, արդյոք լրացուցիչ բեռ չի դրվում անձանց վրա, քանի որ նախագծով ամրագրված իրավակարգավորման համաձայն՝ նշված ծառայությունը (բացառությամբ սահմանված դեպքերի) վճարովի հիմունքներով է իրականացվում:

Հաջորդիվ, Նախագծով սահմանվել է նաև հետևյալը.«Եթե ծանուցումը պարունակում է օրենքով պահպանվող գաղտնիք, ապա Կայքում հրապարակվում է միայն ծանուցման՝ գաղտնիք չպարունակող մասը»: Տվյալ պարագայում նշվել է ծանուցում ընդհանուր եզրույթը, սակայն «հրապարակվում է» բառից ենթադրվում է, որ դրույթը վերաբերելի է հրապարակային ծանուցմանը: Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկվում է հստակ սահմանել ծանուցման տեսակը:

Այսպես, Նախագծով նախատեսվում է, որ այլ պետության տարածքում բնակվող անձին ծանուցագիրն ուղարկվում է ուղղակի ծանուցման միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նշված իրավակարգավորմամբ չի սահմանվում «ուղղակի ծանուցում» եզրույթի բովանդակությունը: Առաջարկվում է առավել հստակ կարգավորում սահմանել տարընթերցումներից խուսափելու նպատակով:

Նախատեսվող դրույթների համաձայն՝ հանրային ծառայողները ծանուցումները ուղարկում և ստանում են բացառապես պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Նշված դրույթից ենթադրվում է, որ հանրային ծառայողներին տվյալ կարգավորումը վերաբերում է ի պաշտոնե գործելիս, ելնելով վերջիններիս կարգավիճակից: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է

համապատասխան դրույթում հստակ սահմանել, որ հանրային ծառայողները ծանուցումները ուղարկում և ստանում են բացառապես պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով իրենց պաշտոնական գործառույթներն իրականացնելիս: Իսկ ֆիզիկական անձինք ծանուցումները ստանում են բացառապես պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, եթե գրանցվել են Կայքում և համաձայնել են ծանուցումները ստանալ էլեկտրոնային եղանակով: Նշված դրույթով չի սահմանվում, թե ինչ մեխանիզմով է իրականացվում համաձայնություն տալու և ստանալու գործընթացը: Առաջարկվում է անձի համաձայնության մասին պայմանը սահմանել Կայքի մատուցած ծառայություններից օգտվելու մասին պայմանագրում:

Նախագծով նախատեսվում է նաև, որ կոնկրետ դեպքերում Կայքի սպասարկումն իրականացնող օպերատորը կայքում անմիջապես ապաակտիվացնում է անձի անձնական գրասենյակը՝ համապատասխան տեղեկատվությունը տվյալ ոլորտի իրավասու մարմիններից ստանալուց հետո: Նշված իրավակարգավորումից հետևում է, որ Նախագծով նախատեսված դեպքերում ոլորտային իրավասու մարմիններն են կրում ապաակատիվացման համար հիմք հանդիսացող տեղեկատվությունը տրամադրելու պարտականությունը, այն պարագայում, երբ նույն մասի 3-րդ կետով սահմանված է ևս առանձին հիմք, որի դեպքում Կայքի սպասարկումն իրականացնող օպերատորը պարտավոր է կայքում անմիջապես ապաակտիվացնել անձի անձնական գրասենյակը: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ առաջարկվում է հստակ սահմանել անձանց պարտավորությունը՝ ապաակտիվացման հիմքերի առաջանալու դեպքում, դիմում ներկայացնել Կայքի սպասարկումն իրականացնող օպերատորին: Նշվածը հատկապես բխում է այն իրողությունից, որ անձինք Կայքի ծառություններից օգտվում են պայմանագրային հիմունքներով, հետևաբար պայմանագրի դադարեցումը ևս պետք է իրականացվի կողմերի միջոցով:

7. «*«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի ««Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի և «ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելու մասին նախագծերի փաթեթ*

Ֆինանսների նախարարություն կողմից շրջանառված նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացվել է հետևյալը.

Նախագծերի փաթեթով, որպես օրենսդրական փոփոխությամբ սահմանվող կարգավորում, նախատեսվում է քաղաքացիական ծառայության համակարգում գործող կիսամյակային պարգևատրման համակարգի վերացում: Նշվածի անհրաժեշտությունը, ըստ նախագծերի փաթեթի հիմնավորման, բխում է կիսամյակային պարգևատրման համակարգի անկատարությունից: Արդյունքում ակնկալվում է պարգևատրման համակարգի համար պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներն ուղղել պետական ծառայողների պարգևատրման այլ աղբյուրներին՝ իրականացնելով այդ ֆինանսական միջոցների արդարացի բաշխում, որակյալ և արդյունավետ աշխատանքի խթանում, այդ կերպ, որպես նպատակ ուղենշելով պետական ծառայողների վարձատրության գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Հանձնաժողովը գտել է, որ Նախագծերի փաթեթի հիմնավորմամբ ուղենշված նպատակը չի համապատասխանում առաջարկվող օրենսդրական փոփոխությունների բուն էությանը: Մասնավորապես, Նախագծերի փաթեթի հիմնավորման մեջ նշված է, որ ՀՀ պետական բյուջեով նախատեսված պարգևատրման ֆոնդից իրականացվող պարգևատրումները ծառայում են այն նույն նպատակների իրականացմանը, ինչ ՀՀ պետական բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից կամ օրենքով չարգելված այլ աղբյուրներից իրականացվող պարգևատրումները: Նման դիտարկման պարագայում, սակայն, հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ գործող օրենսդրության համաձայն՝ կիսամյակային հաշվետվությունների հիման վրա կատարվող պարգևատրումը աշխատողի անհատական, մասնագիտական գործունեության կատարման համար պարգևատրման այն միակ ընթացակարգն է, որն իրականացվում է՝ հիմք ընդունելով պետական ծառայողի անմիջական ղեկավարի տված ծառայողական գործունեության գնահատման եզրակացությունը: Այս առումով էական է այն, որ անմիջական ղեկավարի եզրակացությունը ձևավորվում է կոնկրետ աշխատողի ամենօրյա գործունեության՝ ըստ հստակ սահմանված չափանիշներին համապատասխան գնահատման արդյունքում: Ավելին, մի շարք պետական մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով այն գեներացվում է աշխատանքային ծրագրերի գնահատման արդյունքում: Իրավաչափ ենք համարում անմիջական ղեկավարի եզրակացությունը, կիսամյակային պարգևատրման համար որպես հիմք, սահմանող գործող կանոնակարգումները, ինչը որևէ կերպ չի սահմանափակում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի կողմից իր հայեցողությամբ որոշելու պարգևատրման չափը՝ հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար:

Այսպես, Նախագծերի փաթեթով նախատեսված է նոր կարգավորում, որով պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձին վերապահվում է լիազորություն, համաձայն որի՝ վերջինս ծառայողական գործունեության համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել պարգևատրման ֆոնդից, աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Մինչդեռ, նախատեսվող կարգավորմամբ սահմանված չէ որևէ լիազորող նորմ, որով կորոշակիացվերին պարգևատրման նպատակով ծառայողական գործունեության գնահատման ընթացակարգերը և չափորոշիչները, որպիսի պարագայում հնարավոր կլիներ ապահովել ծառայողական գործունեության օբյեկտիվ՝ կամայական մոտեցումներից զերծ գնահատումը: Ավելին, առկա չէ որևէ կարգավորում պարգևատրման նպատակով ծառայողական գործունեության գնահատման պարտադիր լինելու կամ կոնկրետ պարբերականությամբ իրականացվելու առումով, ինչը գործող կանոնակարգումների համեմատությամբ, ստեղծում է անբարենպաստ իրավիճակ աշխատողի համար, երբ վերջինս ունի իրավաչափ ակնկալիք կիսամյակային գնահատականի հիման վրա սահմանված պարգևատրման ստացման համար:

Նշվածի համատեքստում Հանձնաժողովը գտնել է, որ ծառայողական գործունեության՝ հստակ չափանիշներին և ընթացակարգերին համապատասխան գնահատման համակարգի բացակայության պայմաններում, պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձանց լայն հայեցողություն է վերապահվում, ինչն իր հերթին մեծացնում է պարգևատրման գործընթացում կոռուպցիոն ռիսկերը: Ավելին, ծառայողական գործունեության այս կերպ պարգևատրմամբ խաթարվում են նաև քաղաքացիական ծառայողների սոցիալական երաշխիքները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարի առնվազ երկու անգամ պարգևատրում ստանալու գործող կարգավորումները:

Նշվածով պայմանավորված՝ կիսամյակային գնահատականի հիման վրա պարգևատրման համակարգի վերացում նախատեսող կարգավորումները տվյալ պարագայում հանդես են գալիս որպես աշխատողի իրավական վիճակը վատթարացնող դրույթներ: Հետևաբար, Նախագծերի փաթեթով նախատեսված անցումային դրույթներն առ այն, որ դրանք տարածվում են *2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների նկատմամբ*, հակասում են սահմանադրաիրավական այնպիսի պահանջին, որպիսին է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և իրավական ակտերի հետադարձ ուժ ունենալու արգելքը:

8. *«Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ*

Արդարադատության նախարարության կողմից շրջանառված՝ օրենքի նախագծի վերաբերյալ մասնավորապես, ներկայացվել է հետևյալը.

Հաշվի առնելով, որ Նախագիծը մշակվել է Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (այսուհետ՝ ԳՐԵԿՈ) «Գնահատման չորրորդ փուլ. կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» Հայաստանի վերաբերյալ 2015 թվականի գնահատման զեկույցով Հայաստանին արված առաջարկների հիման վրա՝ դատավորներին էթիկայի և վարքագծի կանոնների կիրառման և պահպանման վերաբերյալ գաղտնի խորհրդատվության տրամադրման անհրաժեշտության և դատավորների շրջանում իրազեկվածության բարձրացման հիմքով շահերի բախումները և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանձնաժողովը հանդիսանում է պետական կառավարման համակարգում էթիկայի և բարեվարքության համակարգի լիարժեք ինստիտուցիոնալացման՝ բարեվարքության համակարգի և դրա բաղադրիչների ներդրումը և շարունակական զարգացումն ապահովող մասնագիտացված կենտրոնական մարմին և այն, որ Հանձնաժողովը 2020 թվականից իրականացնում է բարեվարքության ուսումնասիրություն և գնահատում է Բարձրագույն դատական խորհրդի, դատավորի, դատախազի, Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի, ինչպես նաև քննիչների, օպերատիվ ծառայողների, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների պաշտոններին նշանակվող և պաշտոնի առաջխաղացման ենթակա թեկնածուների բարեվարքությունը հարկ է նշել հետևյալը.

Բարեվարքության ուսումնասիրությունը և գնահատումը ուղղված է արդարադատության ոլորտում բարեվարքության խթանմանն և անբարեվարք անձանց մուտքը արդարադատության համակարգ կանխելուն, սակայն հարկ է նշել, որ նշված գործառույթի իրացման շրջանակում թեկնածուները շատ հաճախ կարիք են ունենում խորհրդատվություն ստանալու, սակայն խուսափում են դիմել Հանձնաժողով, այն մտայնությամբ, որ իրենց կողմից բարձրացված հարցերը որևէ կերպ կարող են ազդեցություն ունենալ հետագայում իրենց վերաբերյալ տրվող եզրակացության վրա:

Միաժամանակ, թեկնածուներին ընդհանուր կանոններով խորհրդատվություն տալը կարող է նաև պարունակել որոշակի ռիսկեր, քանի որ խորհրդատվություն տալու ընթացքում կարող են առաջանալ անհավասար պայմաններ թեկնածուների համար, ինչպես նաև կանոնակարգերի

բացակայությամբ պայմանավորված հնարավոր չէ ապահովել ապաանձնավորված խորհրդատվություն տալու սկզբունքը:

Հաշվի առնելով թվարկված հանգամանքները, Հանձնաժողովը առաջարկում է Նախագծով սահմանված Էթիկայի և վարքագծի կանոնների հարցերով խորհրդատվական հանձնաժողովի կազմում ընգրկել մեկ անդամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կազմից, այս կերպ ապահովելով դատավորների կողմից ապաանձնավորված խորհրդատվություն ստանալու իրավունքը: Միաժամանակ, արդյունքում կապահովվի նաև բարեվարքության ուսումնասիրության և գնահատման ընթացքում թեկնածուների կողմից տրամադրվող տեղեկատվության գիտակցված լինելու հանգամանքը և հնարավոր կլինի ապահովել թեկնածուների հնարավոր կաշկանդվածության թուլացումը: Մյուս կողմից՝ նպատակահարմար է աջակցել բացասական եզրակացություն ստացած անձանց՝ պահպանելով գաղտնիությունը, հետագայում իրենց վարքագիծը բարելավելու արդյունքում Հանձնաժողով կրկին դիմելու նպատակով:

Միաժամանակ հարկ է նաև անդրադարձ կատարել հանձնաժողովի կազմավորման կարգին:

9. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր

Արդարադատության նախարարության կողմից շրջանառված *օրենքների նախագծերի* վերաբերյալ ներկայացվել է հետևյալը.

Նախագծով սահմանված դրույթների բովանդակությունից հետևում է, որ նախատեսվում է ներդնել իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պարագայում բացառապես ինտերնետի միջոցով անհատական ծանուցման ինստիտուտը, որն իրականացվելու է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված էլեկտրոնային ծանուցման եղանակով: Ընդ որում, իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տրամադրման ենթակա տեղեկատվությունը *<u>տեղադրելու օրվանից, որը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից</u>:*

Հանձնաժողովի դիտարկմամբ որ Նախագծով առաջարկվող՝ հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին ծանուցման իրավակարգավորումները չեն համապատասխանում 2020 թվականի մայիսի 12-ի

թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արտահայտված պատշաճ ծանուցման ինստիտուտի էությանը՝ հետևյալ պատճառաբանությամբ. Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ առանց էլեկտրոնային ծանուցման այնպիսի կառուցակարգերի սահմանման, որոնց պայմաններում պատշաճ ծանուցում կհամարվի բացառապես ծանուցվողին ծանուցման ենթակա փաստաթուղթ ուղարկելը, չի բխում *պատշաճ վարչարարության* հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով սահմանված պահանջներից, քանի որ հարկային մարմինը մինչև հարկ վճարողի համար միջամտող ակտի ընդունումը՝ վերջինիս լսված լինելու իրավունքի ապահովման փոխարեն հիմք է ընդունելու միայն իր կողմից փաստաթղթի էլեկտրոնային ծանուցումն ուղարկելու փաստը՝ առանց հարկ վճարողի իրազեկման փաստացի հավաստման առկայության: Վկայակոչված որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պատշաճ իրազեկումը սահմանափակելը սոսկ նրա էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցման ենթակա փաստաթուղթ ուղարկելով՝ դրանով պայմանավորելով նաև հիշյալ *<u>փաստաթղթի ուժի մեջ մտնելը</u>*՝ առանց այն ստանալու մասին հավաստման, հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված անձանց պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման երաշխիքներին: Տվյալ պարագայում իրավաբանական անձանց ինտերնետով ծանուցելու վերաբերյալ առաջարկվող կարգավորումներն անմիջականորեն առնչվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեությանը: Մասնավորապես, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը, ինչպես նաև քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը: Այս լիազորություններն իրականացնելիս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որպես վարչարարություն իրականացնող մարմին, իր վարչական ակտերի (պարտադիր ծանուցան այլ փաստաթղթերի) մասին ծանուցում է իրավաբանական անձ հանդիսացող կուսակցություններին:

Հաշվի առնելով Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների համակարգային բնույթը, նպատակահարմար ենք գտնում չսահմանափակվել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցությունների նկատմամբ ինտերնետով անհատական ծանուցման ինստիտուտի կիրառման հանգամանքով, այլ ելակետ ընդունելով ընդհանուր վարչաիրավական հարաբերությունները, մասնավորապես *առաջարկվում է*.

- . «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 11-րդ հոդվածում նախատեսել արդյունավետ ծանուցման ընթացակարգ ամրագրող դրույթներ *այն հաշվառմամբ, որը թույլ կտա հաստատել վարչական ակտի (այլ պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթի) հասցեատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստը:*
- Օրենսդրորեն սահմանել որոշակի ժամկետային սահմանափակումներով *այլընտրանքային ծանուցման կառուցակարգեր*՝ (փոստային կապի միջոցով, այնուհետև հրապարակային ծանուցում) իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին էլեկտրոնային եղանակով ծանուցման միջոցով փաստաթղթի ստանալու փաստի բացակայության դեպքում: Միաժամանակ առաջարկվում է համանման կառուցակարգեր սահմանել նաև ֆիզիկական անձանց հասցեագրվող պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի պատշաճ ծանուցման վերաբերյալ:
- Ապահովել հասանելիություն հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգին վարչարարություն իրականացնող բոլոր մարմինների և դատական մարմինների համար՝ օրենսդրորեն սահմանելով այդ մարմինների կողմից համապատասխան համակարգում պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի հետ կապված անհրաժեշտ գործողություններ իրականացնելու իրավասություն:

Միաժամանակ, Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում քննվող գործերի առնչությամբ ներկայացրել է նաև բովանդակային առաջարկություններ Արդարադատության նախարարության կողմից շրջանառվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ: Ընդ որում, նշված նախագծերի առնչութամբ ներկայացված առաջարկությունները վերաբերել են այնպիսի օրենսդրական փոփոխություններ նախատեսող դրույթներին, որոնք ուղղված են Հանձնաժողովին վերապահված լիազորությունների առավել արդյունավետ իրականացմանը: Նշենք նաև, առաջարկվող կանոնակարգումները մեծամասամբ տեղ են գտել նաև պաշտոնապես շրջանառված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»» օրենքի նախագծի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթում:

X. ԱՄՓՈՓՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է իրեն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում աշխատանքների իրականացումը՝ կանխարգելման մանդատի ներքո:

Այդուհանդերձ, նշված ժամանակահատվածում ևս Հանձնաժողովն իր գործառույթների իրականացման ճանապարհին բախվել է լրջագույն խոչընդոտների՝ պայմանավորված «գործառույթների լայն շրջանակ-լիազորությունների ծավալ-բարձր պատասխանատվություն-աշխատանքների ռիսկային բնույթ» շղթայում աշխատակազմի անհամարժեք երաշխիքներով ապահովված լինելու հանգամանքով: Այս առումով Հանձնաժողովում թափուր հաստիքների խնդիրը մնում է չլուծված: Հանձնաժողովը ստիպված է եղել հայտարարել թափուր պաշտոնների լրացմանն ուղղված տասնյակ մրցույթներ, այդուհանդերձ, մի դեպքում հնարավորություն չի եղել ներգրավել համապատասխան փորձառություն ունեցող մասնագետների, մյուս դեպքում՝ որոշակի փորձառություն ունեցող մասնագետներն աշխատանքից դուրս են եկել՝ մրցակցային առավել լավ պայմանները գերադասելով: